

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՏԵՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

4 (110). 2021



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԿՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏԿԵԼՈՒ  
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ  
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



ՀՀ Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի և ՀԱՊԿ-ի  
Գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասի հանդիպումը

Երևան, 2021 թ. դեկտեմբեր



ՀՀ Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի  
և ՀՀ-ում ԱՄՆ-ի Արտակարգ և Լիազոր Դեսպան տիկին  
Լին Թրեյսիի հանդիպումը

Երևան, 2021 թ. դեկտեմբեր



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (110). 2021

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Տավարաձյան Գ. Վ.  
(նախագահ)
- Զիլինգարյան Գ. Ս.  
(գլխավոր խմբագիր)
- Ալբունյան Գ. Ռ.
- Այդինյան Ռ. Ա.
- Այվազյան Լ. Գ.
- Ասատրյան Զ. Գ.  
(գլխ. խմբագրի տեղակալ)
- Գավթյան Ա. Մ.
- Մարգարյան Ռ. Պ.
- Մարտիրոսով Լ. Ա.
- Շահնազարյան Թ. Ն.
- Սարգսյան Ա. Գ.
- Սիմոնյան Ս. Վ.
- Ստեփանյան Հ. Լ.
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
- Քոչարյան Տ. Տ.
- Քոչունց Կ. Գ.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Տ. Տ. Քոչարյան, Մ. Գ. Մելքոնյան*, Թուրքիա–Ադրբեջան ռազմական համագործակցությունը արդի փուլում. դրա նպատակային կիրառումը Հայաստանի և Արցախի դեմ ..... 9

*Դ. Մ. Մանասյան*, 2020 թ. Արցախյան պատերազմից հետո Իրան–Թուրքիա հարաբերություններում Իրանի դիրքորոշման ռազմավարական գնահատում. աշխարհաքաղաքական մրցակցություն<sup>օ</sup>ն, թե<sup>օ</sup> պրագմատիկ գործակցություն ..... 21

*Վ. Ս. Պեյրոսյան*, Հյուպատոսությունների և ներկայացուցչությունների բացման խնդիրը Քրդստանի Շրջանային Կառավարության հետ Հարավային Կովկասի պետությունների առնչությունների համատեքստում ..... 38

*Ա. Գ. Դավթյան*, Հայաստան–Զինատան առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրներ ..... 54

### ՍՊԱՈԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ

*Ա. Ա. Հախումյան, Խ. Վ. Ներկարարյան, Ա. Հ. Մակարյան, Հ. Ս. Հարոյան, Կ. Ռ. Միրզոյան*, Միկրոալիքային խոցող զենք. տեսության և կառուցվածքի որոշ հարցեր ..... 67

### ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Ա. Հ. Մելիքյան*, Ռազմական նպատակներով մանոտեխնոլոգիայի կիրառման որոշ հարցեր .. 83

### ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Ա. Հ. Հարությունյան*, Ոչ մահմեդականների զինապարտության մասին Թուրքիայում 1909 թ. ընդունված օրենքի կիրառումը Վանի նահանգի հայության օրինակով ..... 97

**ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Ա. Ա. Խաչատրյան, Դ. Ս. Չիլինգարյան*, Հայոց լեզվի ներկայիս վիճակից  
բխող որոշ հարցերի մասին . . . . . 109  
*Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ*, Համարի բառարան . . . . . 122  
Մարտավարատեխնիկական բնութագրեր . . . . . 128

**ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

- Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Լ. Ս. Արզումանյան*, բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստրյան*, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստրյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գեորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան*, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, *Բ. Ն. Հարությունյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մարկոսյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Մ. Մ. Մարգարյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Գ. Սահակյան*, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, *Հ. Յ. Սալադյան*, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Մյուննյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Ս. Միսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Յու. Մ. Սուվարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Տ. Տ. Քոչարյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

- Գ. Վ. Տավարածյան*, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ,
- Տ. Տ. Քոչարյան*, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի կրթության և գիտության գծով տեղակալ–ԱՌՀԻ-ի պետ,
- Ս. Ա. Սուջյան*, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստագործի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի պետ, *Դ. Մ. Մանասյան*, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ,
- Հ. Հ. Հովհաննիսյան*, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս



# «АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО  
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 4 (110). 2021

Издается 4 раза в год

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

*Таварацян Г. В.* (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),  
*Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Алтунян Г. Р.*, *Асапрян З. Д.* (зам. гл. редактора),  
*Давтян А. М.*, *Кочарян Т. Т.*, *Кочунц К. Г.*, *Маргарян Р. П.*, *Мартиросов Л. А.*,  
*Саргсян А. Г.*, *Симонян С. В.*, *Степанян Г. Л.*,  
*Тер-Григорьянц Н. Г.*, *Шахназарян Т. Н.*

## СОДЕРЖАНИЕ

### РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

*Т. Т. Кочарян, М. Г. Мелконян.* Военное сотрудничество между Турцией и Азербайджаном на современном этапе: его целевое применение против Армении и Арцаха ..... 9 (19)\*

*Д. М. Манасян.* Стратегическая оценка позиции Ирана в ирано-турецких отношениях после Арцахской войны 2020 года: геополитическое соперничество, или прагматичное взаимодействие? ..... 21 (35)

*В. С. Петросян.* Проблема открытия консульств и представительств в контексте отношений государств Южного Кавказа с Региональным Правительством Курдистана ..... 38 (51)

*А. Г. Давтян.* Некоторые вопросы развития торгово-экономических отношений между Арменией и Китаем ..... 54 (65)

### ВООРУЖЕНИЕ

*А. А. Ахумян, Х. В. Неркарарян, А. О. Макарян, О. С. Ароян, К. Р. Мирзоян.* Поражающее микроволновое оружие: некоторые вопросы теории и конструкции ..... 67 (80)

### ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

*А. О. Меликян.* Некоторые вопросы применения нанотехнологии в военных целях ..... 83 (93)

### ВОЕННАЯ ИСТОРИЯ

*А. А. Арутюнян.* Применение закона Турции 1909 года о воинской повинности немусульман на примере армянства Ванской провинции ..... 97 (106)

---

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

## ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

<i>А. А. Хачатрян, Д. С. Чилингарян. О некоторых вопросах, связанных с нынешним состоянием армянского языка . . . . .</i>	109 (119)
<i>Д. С. Чилингарян и др. Словарь номера . . . . .</i>	122 (124)
<i>Тактико-технические характеристики . . . . .</i>	128

### НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

*А. Г. Авагян, доктор исторических наук, профессор; Н. У. Аракелян, академик НАН РА; Л. С. Арзуманян, доктор филологических наук; Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор; В. М. Арутюнян, академик НАН РА; Г. Е. Багдасарян, академик НАН РА; С. А. Галстян, доктор филологических наук, профессор; С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор; Г. А. Геворкян, академик НАН РА; К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук; Г. С. Котанджян, доктор политических наук, профессор; Т. Т. Кочарян, доктор политических наук, профессор; М. М. Маргарян, доктор политических наук, профессор; М. В. Маркосян, доктор технических наук, профессор; Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА; Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор; М. М. Мириджаниян, доктор медицинских наук, профессор; В. Г. Саакян, кандидат физико-математических наук; Р. А. Сафрастян, академик НАН РА; О. Я. Саядян, доктор географических наук, профессор; А. Г. Симонян, член-корреспондент НАН РА; А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор; Ю. М. Суварян, академик НАН РА*

### ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:

*Г. В. Таварацян, генерал-майор, начальник НИУО МО РА; Т. Т. Кочарян, полковник, доктор политических наук, профессор, заместитель начальника НИУО МО РА по образованию и науке—начальник ИНСИ; С. А. Сугджян, кандидат географических наук, доцент, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА; Д. М. Манасян, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований НИУО МО РА; Г. О. Оганисян, полковник, кандидат военных наук, старший преподаватель Центра исследований стратегического лидерства и управления НИУО МО РА*

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**

DEFENSE-ACADEMIC JOURNAL,  
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,  
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (110). 2021

Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*Tavaratsyan G. V.* (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief),  
*Altunyan G. R.*, *Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief),  
*Ayvazyan L. G.*, *Davtyan A. M.*, *Idinyan R. A.*, *Kocharyan T. T.*, *Kochunts K. G.*,  
*Margaryan R. P.*, *Martirossov L. A.*, *Sargsyan A. G.*, *Shahnazaryan T. N.*,  
*Simonyan S. V.*, *Stepanyan H. L.*, *Ter-Grigoryants N. G.*

**CONTENTS**

**REGIONAL SECURITY**

- T. T. Kocharyan*, *M. G. Melkonyan*. Turkey and Azerbaijan's military cooperation at the present stage: its targeted use against Armenia and Artsakh ..... 9 (20)\*
- D. M. Manasyan*. Strategic assessment of Iran's attitude towards the Iran–Turkey relations after the Artsakh War in 2020: geopolitical competition or pragmatic cooperation? ..... 21 (36)
- V. S. Petrosyan*. The problem of opening consulates and representative offices in the context of relations of the Southern Caucasus states with the Kurdistan Regional Government ..... 38 (52)
- A. G. Davtyan*. Some issues of the development of the RA–China trade and economic relations ..... 54 (66)

**ARMAMENT**

- A. A. Hakhumyan*, *Kh. V. Nerkararyan*, *A. H. Makaryan*, *H. S. Haroyan*, *K. R. Mirzoyan*. Microwave weapon of destruction: some issues of the theory and design ..... 67 (81)

**MILITARY ENGINEERING**

- A. H. Melikyan*. Some issues of the military application of nanotechnology ..... 83 (95)

**MILITARY HISTORY**

- A. H. Harutyunyan*. Application of Turkey's 1909 Law on conscription of the non-Muslim population on the example of the Armenians of the Van province ..... 97 (107)

---

\* Numbers in brackets mean the page of the text in English.

## MILITARY TERMINOLOGY

<i>A. A. Khachatryan, D. S. Chilingaryan.</i> On some issues related to the present state of the Armenian language . . . . .	109 (120)
<i>D. S. Chilingaryan and others.</i> Volume Dictionary . . . . .	122 (125)
Operational characteristics . . . . .	128

## ACADEMIC-ADVISORY COUNCIL:

*A. G. Avagyan*, Doctor of History, Professor; *N. H. Arakelian*, Full Member, NAS, RA;  
*L. S. Arzumanyan*, Doctor of Philology; *G. Y. Baghdassarian*, Full Member, NAS, RA;  
*K. S. Danielyan*, PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan*, Doctor of Philology, Professor; *S. G. Galstyan*, Doctor of Medical Sciences, Professor;  
*H. A. Gevorkian*, Full Member, NAS, RA; *B. N. Harutyunyan*, Doctor of Medical Sciences, Professor; *V. M. Harutyunyan*, Full Member, NAS, RA;  
*T. T. Kocharyan*, Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian*, Doctor of Political Sciences, Professor; *M. M. Margaryan*, Doctor of Political Sciences, Professor;  
*M. V. Markosyan*, Doctor of Technical Sciences, Professor;  
*H. H. Matevosyan*, Corresponding Member, NAS, RA;  
*E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Mirijanian*, Doctor of Medical Sciences, Professor; *R. A. Safrastyan*, Full Member, NAS, RA;  
*V. G. Sahakyan*, PhD in Physical and Mathematical Sciences; *Hov. Y. Sayadyan*, Doctor in Geography, Professor; *A. H. Simonyan*, Corresponding Member, NAS, RA;  
*H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor;  
*Yu. M. Suvaryan*, Full Member, NAS, RA

## DEFENSE-ACADEMIC COUNCIL:

*G. V. Tavaratsyan*, MG, Head, NDRU, MOD, RA; *T. T. Kocharyan*, Col, Doctor of Political Sciences, Professor, Deputy Head in Education and Research–Head of INSS, NDRU, MOD, RA; *S. A. Sujyan*, PhD in Geography, Associate Professor, Col (Ret.), Head, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA;  
*D. M. Manasyan*, PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD, RA; *H. H. Hovhannisyan*, Col, PhD in Military Sciences, Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

REGIONAL SECURITY



ԹՈՒՐՔԻԱ-ԱՂԻՐԵՋԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ  
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ.  
ԴՐԱ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԵՎ ԱՐՑԱՆԻ ԴԵՄ

*Տ. Տ. ՔՈՉԱՐՅԱՆ, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի՝ կրթության և գիտության գծով  
տեղակալ – ԱՌՀԻ-ի պետ, Մ. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՀՀ ԶՈՒ-ի  
պահեստազորի գեներալ-մայոր, պատմական գիտությունների  
թեկնածու, ՀՀ ՊՆ ԳԿ ռազմավարական ծրագրերի մշտադիտարկման,  
վերլուծության և կոլեգիայի աշխատանքների կազմակերպման  
վարչության տեսուչ*



Ամեն մի պետության ռազմական անվտանգության ապահովման, ռազմական կարողությունների զարգացման առաջնային գործոններից է միջազգային ռազմական համագործակցությունը: Ընդսմին դրա ձևավորման հիմնական գործիքներն են արտաքին ռազմական քաղաքականությունն ու ռազմական դիվանագիտությունը:



Հայաստանի պաշտպանական գերատեսչությունը այս գործընթացը կազմակերպում է արտաքին գործերի նախարարության հետ համատեղ, ինչի շնորհիվ այդ կառույցները միջազգային ասպարեզում հանդես են գալիս որպես միասնական «թիմ»: Հենց քաղաքական-դիվանագիտական, ռազմական, ռազմատեխնիկական համագործակցության միջոցով են կանխվում ու հետ մղվում պետության համար ծագող սպառնալիքները, որոնց չեզոքացումը ոչ ռազմական միջոցներով ռազմական համագործակցության գլխավոր խնդիրն է:

Այս համատեքստում հարկ է փաստել, որ Հայաստանի թե՛ ռազմական քաղաքականության և ռազմական դիվանագիտության, թե՛ ընդհանրապես արտաքին (որոշակիորեն նաև ներքին) պաշտպանական-անվտանգային քաղաքականության հակազդականության գլխավոր նպատակն ու առաջնահերթությունը եղել ու շարունակում է մնալ թուրք-ադրբեջանական երկյակի հակահայկական քաղաքականության չեզոքացումը:

Հարկ է նաև նշել, որ Թուրքիայի և Ադրբեջանի ռազմական համագործակցության ուղղվածությունն ու նպատակները պարզորոշելիս կարելի է նկատել, որ այն միտված է ոչ թե այս երկու պետությունների համար ծագող ռազմական սպառնալիքների չեզոքացմանը և անգամ ոչ այնքան Ղարաբաղյան հակամարտությունում Ադրբեջանի անառարկելի գերազանցության ապահովմանը, որքան նրանց ընդհանուր ռազմավարական ծավալապաշտական

ծրագրի իրագործմանը՝ Միջին Ասիայի թյուրքախոս ժողովուրդների միավորմանը Թուրքիայի գերիշխանության ներքո, մի ծրագրի, որի իրականացման համար լուրջ խուֆ է երկու հայկական պետությունների գոյությունը: Հենց այս ծրագրի իրականացման նպատակի անփոփոխության պատճառով Թուրքիայի և Ադրբեջանի ռազմական համագործակցությունը մշտապես դրսևորվում է նորովի՝ ըստ տիրող իրավիճակի: Թուրքիայի գործուն աջակցությամբ ադրբեջանական բանակը մշտապես վերակառուցվում ու վերազինվում է, ստեղծվում են զորքերի նոր խմբավորումներ, համալրվում են զենքի, զինամթերքի ու նյութատեխնիկական միջոցների պաշարները, տնտեսության կարևոր ճյուղերը համապատասխանեցվում են պատերազմական պահանջներին, ընդլայնվում է ռազմական ենթակառուցվածքը և այլն<sup>1</sup>:

Այս ուղղությամբ Թուրքիայի և Ադրբեջանի միջև 1990-ական թվականներին մինչ օրս տարբեր աստիճանի ակտիվացումներով կայացվել են բազմաթիվ տարաբնույթ պայմանավորվածություններ ու համաձայնություններ (դրանց սկիզբը դրվել է 1992 թ. ռազմական կրթության և զինված ուժերի պատրաստման ոլորտում համագործակցության մասին պայմանագրով և շարունակվել է մինչև 2021 թ. հունիսի 15-ին Շուշիում Թուրքիայի Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի ստորագրած «Ադրբեջանի և Թուրքիայի հանրապետությունների միջև դաշնակցային հարաբերությունների մասին Շուշիի հռչակագիրը»<sup>2</sup>): Ղարաբաղյան հակամարտության ակտիվ ռազմական գործողությունների տարիներին Թուրքիան մեծապես աջակցել է Ադրբեջանին՝ մասնակցելով Հայաստանի տնտեսական շրջափակմանը: Այդ համագործակցության գաղափարական հիմքն է «մեկ ազգ՝ երկու պետություն» կարգախոսը: Թուրքիայի համար Ադրբեջանը կարևոր հենարան է Հարավային Կովկասում պանթյուրքականության, նոր օսմանականության և աշխարհում թյուրքական ազդեցության տարածման գործում: Այդ համատեքստում երկու պետությունների միջև ռազմական համագործակցությունը դառնում է թյուրք-ադրբեջանական բազմակողմանի և բազմաշերտ էթնիկական, տնտեսական ու քաղաքական կապերի շարունակությունը:

Ինչպես նշվեց, 1992–2000 թթ. Թուրքիան ակտիվորեն մասնակցում էր ադրբեջանական բանակի արդիականացման ու մատակարարման գործին: Լինելով ՆԱՏՕ-ի առաջատար անդամ և Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի կարևորագույն ռազմական գործընկեր՝ Թուրքիան էական դեր է ունեցել ՆԱՏՕ-ի ստանդարտներին համապատասխան Ադրբեջանի Ջինված ուժերի վերակառուցման ու վերազինման գործում: 1994 թ. Հյուսիսատլանտյան դաշինքի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին միանալուց հետո

<sup>1</sup> Տես *Л. Овсеян, В. Иванов*. Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии: Динамика и основные тенденции развития. Е., 2010, с. 19:

<sup>2</sup> Տես «Turkey, Azerbaijan sign 'Shusha Declaration' to boost defense cooperation». "Anadolu Agency", 15.06.2021 (<https://www.aa.com.tr/en/asia-pacific/turkey-azerbaijan-sign-shusha-declaration-to-boost-defense-cooperation/2274968>):



Աղբբեջանն այս գործակցությունը դիտում է որպես իր ռազմական շինարարության առավել կարևոր ուղղություններից մեկը:

Տարբեր աղբյուրների վկայությամբ՝ անցած տարիներին Թուրքիայի և Աղբբեջանի միջև ստորագրվել են նաև փակ (գաղտնի բնույթի) երկկողմ փաստաթղթեր: Խորացնելով Աղբբեջանի հետ իր ռազմավարական հարաբերությունները՝ Թուրքիան նպաստում է Աղբբեջան-ՆԱՏՕ երկխոսության ծավալմանը՝ այդ պետության տարածքում իր գորակայանները տեղաբաշխելու և հետագայում Հյուսիսատլանտյան դաշինքին Աղբբեջանին ինտեգրելու նպատակով: Սակայն Աղբբեջանը, պահպանելով ռազմական ուղրտում Թուրքիայի հետ համագործակցության դրական միտումներն ու դինամիկան, զերծ մնաց Թուրքիայի և ՆԱՏՕ-ի ուղղությամբ վճռորոշ քայլեր կատարելուց՝ հաշվի առնելով այդպիսի գարգացումների հետևանքով առաջին հերթին Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերություններում անխուսափելի լարվածության ստեղծումը, հատկապես՝ 1999 թվականին Հավաքական անվտանգության պայմանագրից իր դուրս գալու պարագայում: Նշենք, որ Թուրքիան նույնպես, մինչև 2000-ական թվականների սկիզբը, Հյուսիսային Կովկասի տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելիս զերծ էր մնում Աղբբեջանի հետ լայնամասշտաբ ռազմական համագործակցություն ծավալելուց:

Թուրքիայի և Աղբբեջանի միջև ռազմական համագործակցությունը որակապես նոր փուլ թևակոխեց, երբ 2010 թ. օգոստոսի 16-ին ստորագրվեց «Աղբբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ օգնության մասին պայմանագիրը»<sup>3</sup>: Տվյալ փաստաթուղթը ամրագրեց բարձր մակարդակի երկկողմ ռազմական համագործակցությունը՝ այն հասցնելով ռազմավարական գործընկերության որակի: 2010 թ. թուրք-աղբբեջանական ռազմավարական պայմանագիրը դարձավ տարբեր ուղրտներում նրանց հարաբերությունները կարգավորող նախկին փաստաթղթերի տրամաբանական շարունակությունը:

Թուրք-աղբբեջանական ռազմական համագործակցությունը ծավալային ու որակական նոր զարգացում ստացավ հատկապես Արցախյան երկրորդ պատերազմին նախորդած երեք տարիներին: Կողմերը ռազմական ուղրտի գրեթե բոլոր ուղղություններով հաստատեցին ամենասերտ կապերը: Այդ համագործակցությունը գտնվում էր երկու պետությունների նախագահների համանախագահությամբ մշտապես գործող «Աղբբեջան – Թուրքիա բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհրդի» և ռազմական գործակցությունը մշտական հիմունքներով համակարգող «Թուրքիա – Աղբբեջան բարձր մակարդակի ռազմական երկխոսություն» մարմնի ուշադրության կենտրոնում: Այդ մարմինները պարբերաբար ընդունում էին համագործակցության խորացմանը միտված որոշումներ:

2018 թ. սկզբին թուրքական հրամանատարության հորդորով և թուրք

<sup>3</sup> Stu “Turkey and Azerbaijan Achieve a Strategic Partnership”, “Stratfor”, 22 December 2010 (<https://worldview.stratfor.com/article/turkey-and-azerbaijan-achieve-strategic-partnership>):

խորհրդականների գործուն մասնակցությամբ ձեռնարկվեցին աշխատանքներ Ադրբեջանի ընդհանուր առմամբ պետական կառույցների և հատկապես Ջինված ուժերի պատերազմական վիճակի փոխադրման համակարգը, Ադրբեջանի ռազմական կազմակերպվածքը վերանայելու և կատարելագործելու ուղղությամբ:

Ուզանական ոլորտին առնչվող շատ հարցերում որպես ուղեցույց վերցվեց Թուրքիայում գործող համակարգը: Թեպետ Թուրքիան, լինելով ՆԱՏՕ-ի անդամ, ձևականորեն է առաջնորդվում Դաշինքում ընդունված համակարգերով, հայեցակարգներով ու ռազմավարությամբ, այնուամենայնիվ, հիմնվելով դրանց «օգտակար» մասի վրա, զուգահեռաբար մշակում և կիրառում է իր՝ «թուրքական փորձից բխող» համակարգերն ու հայեցակարգները:

Ադրբեջանի պաշտպանության նախարար Ջ. Հասանովն իր հարցազրույցներից մեկի ժամանակ տվել է թուրքական փորձի ընդօրինակման անհրաժեշտության մի «յուրօրինակ հիմնավորում»․ «Թուրքական բանակը ՆԱՏՕ-ի երկրորդ հզոր բանակն է՝ առաջնակարգ տեխնիկայով զինված, պատերազմում փորձարկված կատարյալ ռազմավարությամբ, արտաքին և ներքին թշնամու դեմ հաղթական մարտեր մղելու մեծ փորձով: Մենք մեկ ազգ ենք՝ երկու բանակ: Մեր խնդիրն է յուրացնել և կիրառել թուրքական բանակի առաջնակարգ փորձը, և հաղթանակը ապահովված է»<sup>4</sup>: Արդեն 2018 թ. կեսերին առաջարկությունների փաթեթն ամբողջությամբ պատրաստ էր, և ռազմավարական, օպերատիվ-ռազմավարական, զորահավաքային, ինչպես նաև համատեղ թուրք-ադրբեջանական զորավարժությունների ու ռազմավարական խաղերի ընթացքում սկսվեցին պետությունն ու նրա Ջինված ուժերը խաղաղ վիճակից պատերազմական վիճակի փոխադրելու վերանայված համակարգի գործնական փորձարկումները: Այդ նպատակով աճեց համատեղ թուրք-ադրբեջանական զորավարժությունների թիվը՝ հասնելով տարեկան տասներեքի:

Նոր՝ վերանայված համակարգը, մասնավորապես, նախատեսում էր.

- կրճատել պետությունը և Ջինված ուժերը խաղաղ վիճակից պատերազմական վիճակի փոխադրելու ժամկետները, այդ թվում նաև զորահավաքի համակարգի կատարելագործման, պետական կառավարման կենտրոնական ու տեղական մարմինների, պաշտոնատար անձանց՝ պատերազմական իրավիճակից բխող պարտականությունների հստակեցման և նրանց պատասխանատվության մակարդակի բարձրացման միջոցով,
- նվազագույնի հասցնել պետության կախվածությունը սպառազինության և ռազմական տեխնիկայի, պարենի և անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների արտաքին մատակարարումներից՝ խաղաղ ժամանակ ռազմավարական պաշարները պահանջվող ժամկետով կուտակելու, ներքին ռեսուրսները նպատակային և արդյունավետ կերպով օգտա-

<sup>4</sup> «Закир Гасанов: «В 2016 году во время Апрельских боев армяне потерпели в 10 раз больше потерь, чем мы», 22.06.2020 (<https://www.youtube.com/watch?v=nOaezaNCBog>):

գործելու, տնտեսության կարևորագույն ճյուղերը պատերազմական կարիքներին համապատասխանեցնելու միջոցով,

- կատարելագործել զորահավաքային պատրաստության համակարգը, կրճատել պահեստային զորամիավորումների համալրման ժամկետները, բարձրացնել դրանց մարտական պատրաստականությունը:

Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության հակահայկական ուղղվածությունը՝ իր ամբողջ տարատեսակ դրսևորումներով հանդերձ, արտահայտվեց Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում ու դրանից հետո:

Այդ դրսևորումներից են.

- թուրքական ՋՈՒ-ի բարձրագույն հրամանատարական կազմի ուղղակի ներգրավումը ադրբեջանական զորքերի կառավարման գործում ու ռազմական գործողություններին թուրքական ուժերի անմիջական մասնակցությունը,
- թուրքական պետական մարմինների, մասնավորապես՝ պաշտպանության նախարարության և ազգային հետախուզական ծառայության, ինչպես նաև մասնավոր ռազմական կառույցի գործունեությունը՝ նպատակաուղղված մահմեդական ահաբեկչական խմբերի ու սիրիացիների հավաքագրմանը, պատրաստմանը և ռազմական գործողությունների գոտի փոխադրմանը,
- 44-օրյա պատերազմի ընթացքում Թուրքիայից Ադրբեջանի ՋՈՒ-ին զենքի, ռազմական տեխնիկայի ու զինամթերքի անհատույց տրամադրումն ու տեղափոխումը:

Որպես 44-օրյա պատերազմի արդյունք՝ աշխարհագրական նպաստավոր դիրքեր գրաված Ադրբեջանի պաշտոնական հռետորաբանության վերլուծությամբ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1) Ադրբեջանը Արցախի կարգավիճակի ցանկացած քննարկում բացառում է, քանի որ ինքն արդեն «լուծել է» այդ հարցը,

2) Հայաստանը և Ադրբեջանը պետք է շուտափույթ սկսեն սահմանների սահմանագծման և սահմանների քարտեզագրման գործընթացները, ինչը, Ադրբեջանի կարծիքով, նշանակում է, որ Հայաստանը փաստացի կձանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, որում ներառված կլինի նաև Արցախը,

3) Հայաստանը չունի այլ տարբերակ և պետք է ընդունի Ադրբեջանի պահանջները (այդ թվում՝ Ադրբեջանին ինքնիշխան Հայաստանի տարածքով ձանապարհի տրամադրում), քանի որ հակառակ դեպքում Ադրբեջանն իր նպատակներին կհասնի ռազմական եղանակով:

Հաշվի առնենք, որ պատերազմից հետո ադրբեջանական իշխանություններն ամրապնդել են իրենց քաղաքական դիրքերը և, ըստ էության, վայելում են իրենց ժողովրդի կատարյալ վստահությունը: Ավելին. ռազմական հաջողությունը էապես բարձրացրել է ադրբեջանցիների բարոյահոգեբանական վիճակը, և մարտական ոգին նրանք անթաքույց պատրաստականու-

յուն են հայտնում Հայաստանի դեմ սկսելու նոր պատերազմ և «ազատագրելու նաև իրենց պատմական Էրիվանը և Ջանգեզուրը»<sup>4</sup>:

Տարբեր տեղեկատվական, ռազմական ու դիվանագիտական աղբյուրների տվյալներով ԼՂ-ում ռազմական գործողությունների պլանավորման և իրականացման գործում կարևոր դեր են ունեցել երեք թուրք գեներալներ՝ Երզնկայում տեղակայված թուրքական երրորդ բանակի հրամանատար, դիվիզիական գեներալ Շերեֆ Օնգայը, Թուրքիայի Ցամաքային զորքերի հրամանատարության շտաբի օպերատիվ վարչության պետ, բրիգադային գեներալ Բահթիյար Էրսայը և Թուրքիայի Ռազմաօդային ուժերի մատակարարման ու տեխնիկական սպասարկման 1-ին կենտրոնի հրամանատար, բրիգադային գեներալ Գյոքսել Քահյան<sup>5</sup>: Ինչու՞ հենց այս գեներալները: Նախ. թուրքական երրորդ բանակը, ըստ ԳՇ ռազմավարական պլանավորման փաստաթղթերի, Կովկասյան, նույնն է, թե «Հայկական», օպերացիոն ուղղության համար գլխավոր պատասխանատուն է: Ըստ այդմ՝ Հայաստանին, ինչպես նաև Արցախին վերաբերող բոլոր օպերացիաների ու հատուկ գործողությունների պլանները դեռ խաղաղ ժամանակ մշակում է երրորդ բանակի շտաբը՝ Ցամաքային զորքերի հրամանատարության շտաբի օպերատիվ վարչության հետ համատեղ, և հաստատում է Գլխավոր շտաբը: Այդ պլանները դրվում են զորքերի օպերատիվ ու մարտական պատրաստման հիմքում, փորձարկվում գորավարժությունների ժամանակ և պարբերաբար վերանայվում ըստ իրավիճակի փոփոխության:

Վերոնշյալի իսկությունը անուղղակիորեն հաստատում է հետևյալ դեպքը: 2020 թ. հունիսի կեսերին թուրքական մամուլում հայտնվեց մի գաղտնի փաստաթուղթ, համաձայն որի՝ Թուրքիան մշակել էր Հունաստանի և Հայաստանի վրա հարձակվելու պլան: Ընդ որում, Հունաստանի վրա հարձակման պլանը փաստաթղթավորված է եղել դեռ 2014 թվականին, իսկ Հայաստանի վրա՝ անգամ 2000 թվականի օգոստոսին և կոչվում է՝ «ԹՁՈՒ-ի Ալթայ գործողության պլանավորման ցուցումնագիր» (*“TSK Altay Harekât Planlama Direktifi”*): Թուրք զինվորականների շրջանում այս պլանը համառոտակի կոչվում է «Ալթայ»<sup>6</sup>:

<sup>4</sup> Փաստացի «Էրիվանի և Ջանգեզուրի ազատագրման» մասին Ադրբեջանի ղեկավարությունը բազմաթիվ անգամ հնչեցրել էր նաև 44-օրյա պատերազմից առաջ՝ այդ նպատակները դնելով իշխող քաղաքականության հիմքում, օրինակ՝ նախընտրական և քաղաքական-կուսակցական ծրագրերում (տես, օրինակ, «Ильхам Алиев: Мы вернемся в Ереван мирным путем». «Haqqin.az», 04.12.2016 ([https://haqqin.az/news/86494?\\_\\_cf\\_chl\\_captcha\\_tk\\_\\_=pmd\\_HAQ0O9SrASQuj.g68z9Q3mZ9hI0zRamxb4tVp.Aq9bk-1630232154-0-gqNtZGzNArucjcnBsZQjl](https://haqqin.az/news/86494?__cf_chl_captcha_tk__=pmd_HAQ0O9SrASQuj.g68z9Q3mZ9hI0zRamxb4tVp.Aq9bk-1630232154-0-gqNtZGzNArucjcnBsZQjl))):

<sup>5</sup> Տես «Кто из турецких генералов руководил атакой на Карабах». «Взгляд» деловая газета, 12 ноября 2020 (<https://vz.ru/world/2020/11/12/1069822.html>):

<sup>6</sup> Տես «Թուրքիայի հարձակման գաղտնի ծրագիրը Հայաստանի վրա կոչվում է «Ալթայ», նպատակը՝ մինչև 2021 թվականի մարտ «լուծել» Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցը», 3 հուլիսի 2020 (<http://politeconomy.org/2020/07/03/թուրքիայի-հարձակման-գաղտնի-ծրագիրը-ի/>):



Ի դեպ, այս սենսացիոն նյութերը պատահականորեն են հայտնվել մանուլում: Թուրք-չվեդական «Նորդիկ Մոնիտոր» (*“Nordic Monitor”*) թերթի տեղեկությունների համաձայն, երբ քննվում էր 2016 թվականի զինվորական հեղաշրջման փորձը, Անկարայի դատախազ Սերդար Կոչքունը, ուսումնասիրելով թուրքական բանակի Գլխավոր շտաբի փաստաթղթերը, հայտնաբերել է այն և անփութության պատճառով մոռացել հանել մեղադրական փաթեթից: Այն հրապարակվելուց հետո Թուրքիայի իշխանությունները փորձեցին կոծկել այս սկանդալը, որպեսզի կանխեն ավելի լուրջ գաղտնի տեղեկույթի ստրակորուստը:

Հայաստանին վերաբերող «Ալթայ» պլանով, մասնավորապես, նախատեսվում էր հիբրիդային պատերազմի գործիքների կիրառմամբ ամբողջությամբ ապակայունացնել Հայաստանի ներքաղաքական կյանքը և թուլացնել հայ-ռուսական ռազմական դաշինքը: Միևնույն ժամանակ, նախատեսվում էր ուժեղացնել ադրբեջանական Ձինված ուժերը, որպեսզի նրանք կարողանան ադրբեջանա-ղարաբալյան ճակատում ինքնուրույնաբար վարել ռազմական գործողություններ: Նախատեսվում էր նաև «x» պահին Ջանգեզուրի ուղղությամբ Հայաստանին հարվածներ հասցնել Նախիջևանից, այդ թվում նաև թուրքական ռազմաօդային ուժերի կիրառմամբ՝ քրդական ահաբեկիչներին հետապնդելու պատրվակով:

Արցախում պատերազմական գործողություններին թուրքական ՋՈՒ-ի անմիջական մասնակցության վերաբերյալ բազմաթիվ տեղեկատվական աղբյուրներ ներկայացնում են հստակ տվյալներ: Ռուսաստանյան «Կոմերսանտը», վկայակոչելով իր ռազմական ու դիվանագիտական աղբյուրները, նշում է, որ 2020 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ադրբեջանում անցկացված համատեղ զորավարություններից հետո թուրքական թվակազմի մի մասը մնացել է Ադրբեջանի տարածքում, որպեսզի համակարգի Լեռնային Ղարաբաղի դեմ հարձակողական գործողությունների պլանավորումն ու իրականացումը: «Կոմերսանտը» մանրամասնորեն՝ ամսաթվերով, ներկայացրել է նաև հարձակման նախապատրաստման ընթացքը, Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմական ու տրանսպորտային թռիչքները: Ռեզազրավն այն է, որ ռազմական գործողությունների մեկնարկին (սեպտեմբերի 28–30-ը) Ադրբեջան են ժամանել Թուրքիայի Ցամաքային զորքերի հրամանատար Ռեմիթ Դյունդարն ու պաշտպանության նախարար Հուլուսի Աքարը<sup>7</sup>:

Հիշեցնենք, որ դեռ 2020 թ. օգոստոսի 13-ին Ադրբեջանում թուրքադրբեջանական համատեղ զորավարությունների մասնակիցների հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի պաշտպանության նախարար Հուլուսի Աքարն սպառնացել էր Հայաստանին՝ հայտարարելով, թե Թուրքիան մինչև վերջ լինելու է Ադրբեջանի հետ. «Մեր բոլոր միջոցներով մենք մինչև վերջ Ադրբեջանի, ադրբեջանցի զինծառայողների կողքին ենք՝ ընդդեմ Հայաստանի: Մենք կշարունակենք աջակցել Ադրբեջանին նրա արդար պայքարում:

<sup>7</sup> Տես «Принуждение к конфликту. Источники “Ъ” рассказали, как Турция готовила почву для обострения в Нагорном Карабахе». «Коммерсантъ», 16.10.2020 (<https://www.kommersant.ru/doc/4537733>):

«Բռնագավթված» տարածքների «ազատագրման» պայքարում մենք՝ 83 միլիոնանոց թուրքիան, մեր եղբայրների կողքին ենք»<sup>8</sup>:

44-օրյա պատերազմում ամբողջապես ներգրավված են եղել թուրքիայի ՋՈՒ-ի ԳՇ Գլխավոր հետախուզական վարչությունն ու Ազգային հետախուզական ծառայությունը՝ համատեղ հրամանատարությանը տրամադրելով պատերազմի թատերաբեմին առնչվող գործակալական, ռադիոտեխնիկական, ռադիոէլեկտրոնային և տիեզերական (թուրքիան ունի հինգ արբանյակից բաղկացած տիեզերական խմբավորում) հետախուզության լիարժեք տվյալները: Այդ ծառայությունները նաև զբաղվել են ահաբեկիչների ու սիրիացի վարձկանների հավաքագրմամբ և Ադրբեջան տեղափոխմամբ:

Այսպիսով՝ Ադրբեջանը, օգտագործելով իր ամբողջ ռազմական կարողությունը ու թուրքիայի Ջինված ուժերի վճռորոշ աջակցությունը և ներգրավելով հազարավոր վարձկան ահաբեկիչների՝, կարողացավ որպես 44-օրյա պատերազմի արդյունք գավթել Արցախի տարածքի մի զգալի մասը, ինչը, սակայն, անհնար կլիներ առանց թուրքիայի անմիջական մասնակցության:

Ինչպես արդարացիորեն նշում է ռուսական «Վզզյադ» առցանց թերթը. «Արցախյան պատերազմի ծրագիրը թուրքական էր, գեներալները թուրք էին, անօդաչու թռչող ապարատներն արտադրված էին թուրքիայում... Բաքուն կարող է հաղթանակ տոնել, բայց հրամանատարության ու վերահսկողության առումով հաղթանակ կարող են տոնել թուրք գեներալները»<sup>9</sup>:

44-օրյա պատերազմի փորձի և «ադրբեջանական ճակատում ունեցած ներդրումների» հաշվառմամբ փոփոխություններ են տեղի ունեցել նաև թուրքիայի ՋՈՒ-ի հրամանատարական շղթայում: Նախագահ Էրդողանի 2021 թ. օգոստոսի 24-ի հրամանագրով «Թուրքիա–Ադրբեջան բարձր մակարդակի ռազմական երկխոսության» հարթակի թուրքական կողմի համանախագահ, Գլխավոր շտաբի Ռազմավարական պլանավորման գլխավոր վարչության պետ, կորպուսային գեներալ Յավուզ Թյուգենջին նշանակվել է Կովկասյան (Հայկական) ուղղության և Ադրբեջանի ՋՈՒ-ի հետ համագործակցության պատասխանատու (որպես 3-րդ բանակի հրամանատար), իսկ Ադրբեջանում

<sup>8</sup> Տես «Ո՞ր թուրք գեներալներն են պլանավորել և իրականացրել ԼՂ-ի դեմ հարձակումը» միջազգային մամուլի անդրադարձը: «Factor», 17.11.2020 (<https://factor.am/311111.html>):

<sup>9</sup> Արցախյան 44-օրյա պատերազմում թուրքիայի կողմից վարձկանների ներգրավման մասին բարձրաձայնում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային տարբեր մակարդակներում: Մասնավորապես, օրինակ, պաշտոնական թեհրանը 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ մի քանի անգամ բարձրաձայնել էր, որ թուրքիան Ադրբեջանին տրամադրում էր վարձկաններ՝ հայերի դեմ պատերազմելու համար (տես *M. Sinaee*. Iran Warns Again Over Sunni Militants in Nagorno-Karabakh War. “Iran International”, 07.11.2020 (<https://iranintl.com/en/world/iran-warns-again-over-sunni-militants-nagorno-karabakh-war>); նաև՝ «Принуждение к конфликту. Источники “Ъ” рассказали, как Турция готовила почву для обострения в Нагорном Карабахе» (<https://www.kommersant.ru/doc/4537733>):

<sup>9</sup> Տես «Кто из турецких генералов руководил атакой на Карабах» (<https://vz.ru/world/2020/11/12/1069822.html>):

Թուրքիայի ռազմական կցորդ, բրիգադային գեներալ Իսմայիլ Հաքքի Քոսեային՝ 3-րդ բանակի շտաբի օպերատիվ վարչության պետ: ՑՁ հրամանատարության շտաբի օպերատիվ վարչության պետ, հանրահայտ բրիգադային գեներալ Բահթիյար Էրսայը, ստանալով դիվիզիական գեներալի կոչում, նշանակվել է Ադրբեջանի ՋՈՒ-ի հետ անմիջական համագործակցությունը ապահովող ու դրա վերափոխումների համար պատասխանատու և ՊՇ պետի ուղիղ ենթակայության տակ գտնվող օպերատիվ խմբի ղեկավար, իսկ ՑՁ հրամանատարության շտաբի օպերատիվ վարչության պլանավորման բաժնի պետ, բրիգադային գեներալ Էնդեր Գուները՝ այդ խմբի շտաբի պետ: ՊՇ գլխավոր հետախուզության վարչության պետի տեղակալ, բրիգադային գեներալ Ջեքերյա Յալչնին էլ նշանակվել է Ադրբեջանում Թուրքիայի ՋՈՒ-ի ռազմական կցորդ և հիշատակված խմբի անդամ<sup>10</sup>:

Լրջորեն համալրվեց երկու պետությունների միջև եղած պայմանագրաիրավական բազան: Այս ուղղությամբ աննախադեպ էր 2021 թ. հունիսի 15-ին Շուշիում Թուրքիայի Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի ստորագրած «Շուշիի հռչակագիրը», որի մասին մենք վերը խոսեցինք<sup>11</sup>:

Հռչակագրի այն մասը, որում խոսվում է ռազմական օգնություն տրամադրելու մասին, ենթադրում է, որ «կողմերից որևէ մեկի անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, անձեռնմխելիության կամ անվտանգության դեմ երրորդ պետության կամ պետությունների հարուցած սպառնալիքի կամ ձեռնարկած ագրեսիայի դեպքում այդ սպառնալիքի վերացման համար պետք է կազմակերպվեն խորհրդակցություններ, միմյանց օգնություն ցուցաբերվի ՄԱԿ-ի Կանոնադրությանը և նրա սկզբունքներին համապատասխան, կազմակերպվի Ձինված ուժերի զորային ու հրամանատարական ենթակառուցվածքների համակարգված գործունեություն»:

Այդ հռչակագրի հակահայկական էությունը բացահայտված է ՀՀ ԱԳՆ 2021 թվականի հունիսի 17-ի մեկնաբանության մեջ, որտեղ, մասնավորապես, ասվում է. «Թեև թուրք-ադրբեջանական հռչակագիրն առանձին կետով նշում է, որ այդ փաստաթուղթն ուղղված չէ երրորդ կողմի դեմ, այնուհանդերձ, դրա ամբողջ բովանդակությունը թիրախավորում է հայ ժողովրդին: Այն հստակորեն մատնանշում է Արցախի Հանրապետության դեմ 44-օրյա ագրեսիա իրականացրած երկու պետությունների դաշինքն ընդդեմ Արցախի ժողովրդի ինքնորոշման, Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և ցեղասպանություն վերապրած աշխարհասփյուռ հայ ժողովրդի իրավունքների: Հռչակագրում տեղ գտած «Ձանգեզուրի միջանցք»

<sup>10</sup> Stu "Atama kararlari, Cumhurbaşkanlığından: Karar: 2021/425", 25 Ağustos 2021 («Նշանակման որոշումներ, Նախագահությունից՝ որոշում 2021/425», 25 օգոստոսի 2021 թ.) (<https://www.resmigazete.gov.tr/eskiler/2021/08/20210825-7.pdf>):

<sup>11</sup> Stu "Turkey, Azerbaijan sign 'Shusha Declaration' to boost defense cooperation" (<https://www.aa.com.tr/en/asia-pacific/turkey-azerbaijan-sign-shusha-declaration-to-boost-defense-cooperation/2274968>):

արտահայտությունը վկայում է, որ գոտեանդվելով Արցախի ժողովրդի դեմ իրականացած համատեղ ագրեսիայի և զանգվածային ոճրագործությունների անպատժելիությունից՝ Թուրքիան և Ադրբեջանը ձեռք են բերում հրապարակային պայմանավորվածություններ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության դեմ»<sup>12</sup>:

Որպես ամփոփում՝ կարող ենք շեշտել, որ իսկապես ռազմական ոլորտում Ադրբեջան–Թուրքիա համագործակցությունը, նախապես հիմնված լինելով «Մեկ ազգ՝ երկու պետություն» բանաձևի վրա, ներկայումս ձեռք է բերում նոր որակ ու նոր կարգախոս՝ «Մեկ ազգ՝ երկու պետություն՝ մեկ բանակ»: Այն լիարժեք կերպով ուղղված է Հայաստանի Հանրապետության դեմ և մեծ սպառնալիք է մեր ազգային անվտանգության համար: Ավելին. 2020 թ. 44-օրյա պատերազմի ամբողջ ընթացքում Թուրքիան ակտիվորեն ներգրավվել էր մարտական գործողություններում և ռազմական ու քաղաքական առումով լայնամասշտաբ կերպով աջակցում էր Ադրբեջանին: Ռազմական գործողությունները ռազմավարական և օպերատիվ մակարդակներում համակարգում էր Թուրքիայի ՋՌԻ-ի հրամանատարական կազմը, իսկ պատերազմի ընթացքի վրա բեկունձային ազդեցություն գործած «Բայրաքթար» ԱԹԱ-ները կիրառվում էին թուրքական հաշվարկների միջոցով, որոնց շնորհիվ որոշվեց պատերազմի ելքը:

Միևնույն ժամանակ, թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը չի կարելի դիտել որպես հակակշիռ հայ-ռուսական ռազմական համագործակցությանը: Թեև վերջինս դրված է ավելի բարձր պայմանագրային և հաստատութենական հիմքերի վրա, Թուրքիան Ղարաբաղյան հակամարտությունում միանշանակ և անթաքույց կերպով հանդես է գալիս Ադրբեջանի կողմում և թշնամաբար է տրամադրված Հայաստանի նկատմամբ, իսկ Ռուսաստանը Հայաստանի հետ ռազմավարական դաշնակցային հարաբերություններից բացի, ունի բազմապիսի, սերտ և ռազմավարական գործընկերության բնույթի հարաբերություններ Ադրբեջանի և Թուրքիայի հետ, ընդ որում, նրանց հետ քաղաքական, ռազմական, տնտեսական հարաբերություններն անընդհատ զարգանում են և ունեն խորացման միտում:

<sup>12</sup> Տես «ՀՀ ԱԳՆ մեկնաբանությունը Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների կողմից ստորագրված հռչակագրի առնչությամբ», 17.06.2021 ([https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/06/17/mfa\\_statement\\_on\\_the\\_decl/10995](https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/06/17/mfa_statement_on_the_decl/10995)):

## ВОЕННОЕ СОТРУДНИЧЕСТВО МЕЖДУ ТУРЦИЕЙ И АЗЕРБАЙДЖАНОМ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ: ЕГО ЦЕЛЕВОЕ ПРИМЕНЕНИЕ ПРОТИВ АРМЕНИИ И АРЦАХА

*Т. Т. КОЧАРЯН, полковник, доктор политических наук, профессор,  
заместитель начальника НИУО МО РА по образованию  
и науке – начальник ИНСИ,*

*М. Г. МЕЛКОНЯН, генерал-майор запаса ВС РА,  
кандидат исторических наук, Инспектор Управления мониторинга, анализа  
стратегических программ и организации работ Коллегии УД МО РА*

### РЕЗЮМЕ

Главной целью и приоритетом как военной политики и военной дипломатии Армении, так и ее внешней (в некоторой степени и внутренней) оборонно-безопасностной политики противодействия была и остается нейтрализация антиармянской направленности деятельности турецко-азербайджанского тандема. Целью постоянно обновляемого в своих проявлениях военного сотрудничества Турции и Азербайджана являются, по сути, объединение под эгидой Турции тюркоязычного мира и нейтрализация двух армянских государств, являющихся главным препятствием на этом пути. Результаты осуществляемых в конце 20-го и начале 21-го веков Турцией и Азербайджаном совместных целевых программных мероприятий были на практике продемонстрированы ими в 44-дневной войне 2020 года с привлечением террористических группировок и отдельных боевиков.

Ситуация становится еще более сложной и трудно предсказуемой вследствие активного участия в региональных процессах на Южном Кавказе как акторов, имеющих весомое международное влияние (Российская Федерация, США, Франция, Великобритания), так и заинтересованных региональных сил, решающих свои конкретные задачи (Иран, Грузия).

Азербайджано-турецкое сотрудничество в военной сфере, которое изначально основывалось на девизе «Один народ – два государства», в настоящее время приобретает новое качество и новую формулу: «Один народ – два государства – одна армия». Данный процесс, в сущности, направлен против армянской государственности и является наибольшей угрозой для национальной безопасности двух армянских государств.

## TURKEY AND AZERBAIJAN'S MILITARY COOPERATION AT THE PRESENT STAGE: ITS TARGETED USE AGAINST ARMENIA AND ARTSAKH

*T. T. KOCHARYAN, Colonel, Doctor of Political Sciences, Professor,  
Deputy Head in Education and Research – Head of INSS, NDRU, MOD, RA,  
M. G. MELKONYAN, Major General (Ret.), RA Armed Forces,  
PhD in History, Inspector, Strategic Programs Monitoring, Analysis, and Collegium's  
Work Organization of Case Management, MOD, RA*

### SUMMARY

The neutralization of anti-Armenian activity of the Turkish-Azerbaijani tandem has been and remains the main goal and priority of both Armenia's military policy and military diplomacy, as well as its foreign (to some extent also domestic) defense-security reactive policy. The aim of Turkey and Azerbaijan's military cooperation, its manifestations being continuously updated, is the consolidation of the Turkic-speaking world under Turkey's auspices, and the neutralization of the two Armenian states as the main impediment to this. The results of the joint targeted program activities, implemented by Turkey and Azerbaijan at the end of the 20<sup>th</sup> – beginning of the 21<sup>st</sup> centuries, were demonstrated by them in practice during the 44-day war in 2020 with the involvement of terroristic groupings and lone gunmen.

The situation becomes even more complicated and hard-to-predict in view of participation in the South Caucasian regional processes of both actors of international clout (The Russian Federation, USA, France, Great Britain), and the regional stakeholders, pursuing their certain goals (Iran, Georgia).

The Azerbaijani-Turkish cooperation in the military sphere, primeordarily based on the slogan of "One nation, two states", at present does obtain a new quality and a new claim – "One nation, two states, one army". This process, in essence, is aimed against the Armenian statehood, and is the greatest threat to the national security of the two Armenian states.

2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԻՐԱՆ–ԹՈՒՐՔԻԱ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ  
ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ,  
ԹԵ՞ ՊՐԱԳՄԱՏԻԿ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Դ. Մ. ՄԱՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Տարածաշրջանային ռազմավարական  
վերլուծությունների կենտրոնի պետ*



Արցախյան 44-օրյա պատերազմի արդյունքներն արձատապես փոխել են տարածաշրջանում ուժերի դասավորությունը՝ ազդելով նաև այստեղ գործող հիմնական ուժային կենտրոնների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի դերի վրա: Մեծ անորոշությունների պայմաններում ՀՀ կենսական շահերին ուղղված համաչափ և անհամաչափ արտաքին սպառնալիքների հաշվառմամբ ՀՀ նոր անվտանգային քաղաքականության մշակման և տարածաշրջանային դերակատարների հետ հարաբերություններում ճիշտ դիրքորոշման տեսանկյունից հույժ

կարևոր է դառնում տարածաշրջանում ձևավորված նոր անվտանգային միջավայրում Իրան–Թուրքիա հարաբերությունների, դրա հակամարտային և համագործակցային հնարավորությունների ռազմավարական վերլուծությունը: Դրա շրջանակներում կփորձենք պատասխանել հետևյալ հետազոտական հարցերին. ինչ կերպափոխումների կենթարկվեն Իրան–Թուրքիա հարաբերությունները 2020 թ. Արցախյան պատերազմից հետո, որքան են Իրանի և Թուրքիայի շահերը համընկնում ու որքան հակադրվում, որքան է հավանական, որ հեռանկարում դրսևորվի երկկողմ մրցակցությունը:

ԻՐԱՆ–ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՅՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Պատմագիտական տեսանկյունից Իրան–Թուրքիա բավական բարդ և բազմաշերտ հարաբերությունները խորությամբ վերլուծել են տարբեր մասնագետներ: Հատկապես արժեքավոր են Ն. Հովհաննիսյանի և Ա. Ավագյանի աշխատությունները, որոնցում հանգամանորեն ուսումնասիրված են ԽՍՀՄ փլուզումից հետո Կովկասի և Միջին Ասիայի մահմեդական հանրապետություններում իրենց ազդեցության տարածման համար Թուրքիայի և Իրանի միջև ծավալված պայքարին, Մերձավոր Արևելքում նրանց ռազմավարական մրցակցության առանձնահատկություններին և այլ իրադարձություններին առնչվող պրոբլեմները<sup>1</sup>:

<sup>1</sup> Տես Ն. Հովհաննիսյան, Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը: Ե., 2004, 112 էջ.

Վերջին երկու տասնամյակներում Մերձավոր Արևելքում տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունները (2003 թ. Իրաքում Ս. Հուսեյնի վարչակարգի տապալումը և 2011 թ. ծնունդ առած «արաբական գարունը»), արմատապես փոխելով Մերձավոր Արևելքում ուժերի ձևավորված հաշվեկշիռը, նոր լիցք հաղորդեցին տարածաշրջանում իրենց գերակայությունը հաստատելու համար մղված արյունալի պատերազմների հարուստ պատմություն ունեցող դարավոր պետությունների՝ Իրանի և Թուրքիայի մրցակցությանը<sup>2</sup>: Ռժժեղ կենտրոնական իշխանություն և անվտանգության կառույցներ ունեցող Իրաքի ու Սիրիայի թուլացումն ու պետական համակարգերի աստիճանական քայքայումը, այդ պետություններում էթնիկական ու կրոնական (արաբ-քուրդ, շիա-սուննի) հակասությունների խորացումը Թուրքիային և Իրանին ընձեռեցին Մերձավոր Արևելքում իրենց աշխարհաքաղաքական ու կրոնագաղափարական ազդեցությունը մեծացնելու և արաբական տիրույթներում իրենց ներկայությունն ապահովելու պատմական հնարավորություն: Վերջին տարիներին նրանց միջև հակամարտությունը հիմնականում դրսևորվում է Սիրիայում և Իրաքում մղվող միջնորդավորված պատերազմի ձևով: Այստեղ այդ երկու պետությունները մրցակցում են հիմնականում իրենց վերահսկողության ներքո գտնվող շիա և սուննի ոչ պետական դերակատարների միջոցով<sup>3</sup>:

*նույնի*՝ Թուրքիան և Մերձավոր Արևելքը. տարածաշրջանային շահեր ու Հայաստանի արտաքին քաղաքականության ռազմավարական խնդիրներ: «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)», հ. 1: Ե., 2014, էջ 642–655, *նույնի*՝ Իրանի դերը իսլամական աշխարհում և Հայաստանի ազգային անվտանգային խնդիրները: «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)», հ. 2: Ե., 2014, էջ 111–118, *Ա. Ավագյան*, Թուրքիա–Իրան հարաբերությունները ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության համատեքստում: «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)», հ. 1, էջ 635–647, *նույնի*՝ ՀՀ անվտանգության համակարգում Իրանի տեղը և դերակատարությունը. տարածաշրջանային նոր զարգացումներ և հայ-իրանական հարաբերությունների բնույթի հավանական փոփոխություններ, հ. 2, էջ 89–111:

<sup>2</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես *F. Stephen Larrabee, Alireza Nader*. Turkish-Iranian Relations in a Changing Middle East. RAND Corporation, 2013 ([https://www.rand.org/content/dam/rand/pubs/research\\_reports/RR200/RR258/RAND\\_RR258.pdf](https://www.rand.org/content/dam/rand/pubs/research_reports/RR200/RR258/RAND_RR258.pdf)); “Turkey and Iran: Bitter Friends, Bosom Rivals”. “International Crisis Group”, 13 December 2016 (<https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/iran/b051-turkey-and-iran-bitter-friends-bosom-rivals>):

<sup>3</sup> «Արաբական գարուն» զարգացումների համատեքստում արաբական աշխարհում Իրան–Թուրքիա մրցակցության վերաբերյալ ավելի հանգամանորեն տես *S. Cagaptay*. Turkey’s Future Role in the “Arab Spring”, Winter 2011 (<https://www.washingtoninstitute.org/media/3325>); *Henri J. Barkey*. Turkish-Iranian Competition after the Arab Spring. “Survival”, 2012, Vol. 54, Issue 6; *F. Gregory Gause III*, Beyond Sectarianism: The New Middle East Cold War. Brookings Doha Center, N 11, July 2014 (<http://www.brookings.edu/~media/research/files/papers/2014/07/22-beyond-sectarianism-cold-war-gause/english-pdf.pdf>); *S. Larrabee*. The Turkish-Iranian Alliance That Wasn’t: How the Two Countries Are Competing After the Arab Spring, 11 July 2012



Պետք է նշել նաև, որ վերջին տասնամյակում Մերձավոր Արևելքում Իրանի և Թուրքիայի դերերի փոփոխությունները մեծապես պայմանավորված են 2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո հստակ կերպով ուրվագծվող համընդհանուր անվտանգային ճարտարապետության կերպափոխումներով, մասնավորապես՝ ԱՄՆ-ի համաշխարհային դերի հարաբերական նվազմամբ և բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորմամբ<sup>4</sup>, ինչպես նաև համաշխարհային քաղաքականության «ծանրության կենտրոնի» տեղաշարժով Արևմուտքից դեպի Արևելք<sup>5</sup>: Որպես արդյունք՝ Մերձավոր Արևելքում էապես մեծացավ հիմնական դերակատարների՝ Իրանի և Թուրքիայի ազդեցությունը, ինքնուրույնությունն ու հավակնությունները՝ նրանց համար տարածաշրջանում ստեղծելով տարաշարժի լայն դաշտ և առաջացած աշխարհաքաղաքական վակուումը լրացնելու մեծ հնարավորություններ:

Դա, մի կողմից, ավելի բորբոքեց տարածաշրջանում գերիշխանության համար նրանց միջև ընթացող պայքարը, մյուս կողմից՝ մեծացրեց տարբեր հարցերում համաձայնության գալու և իրենց շահերը հաշվեկշռելու հնարավորությունները: Այս համատեքստում Երդողանը նաև սկսեց քայլեր կատարել ԱՄՆ-ի կրտսեր գործընկերոջից ավելի ինքնուրույն և անկախ ուժային կենտրոնի վերածվելու ուղղությամբ՝ տարածաշրջանային հեգեմոն դառնալու հստակորեն արտահայտված հավակնություններով:

Օրինակ՝ կարող ենք նշել նրանց համագործակցությունը Քրդական հարցում, մասնավորապես՝ Քրդական բանվորական կուսակցության և դրա իրանական թևի՝ Քրդստանում ազատ ապրելու համար պայքարող կուսակցության դեմ համակարգված գործողությունների ձեռնարկումը, Սիրիայում և Իրաքում քրդական գործոնի դերի աճման պայմաններում անկախ քրդական պետության ձևավորումը կանխելու ձգտումը և այլն<sup>6</sup>:

(<http://www.foreignaffairs.com/articles/137773/f-stephen-larrabee/the-turkish-iranian-alliance-that-wasnt>):

<sup>4</sup> Տես *F. Zakaria*. The Post-American World, 2008; *Z. Brzezinski*. Strategic Vision: America and the Crisis of Global Power. New York, 2012; *J. Nye*. Is the American Century Over?, 10 December 2014 ([https://www.files.ethz.ch/isn/187176/Lecture%20Transcript\\_December\\_2014.pdf](https://www.files.ethz.ch/isn/187176/Lecture%20Transcript_December_2014.pdf)), *G. Allison*. The New Sphere of Influence: Sharing the Globe with other Great Powers. "Foreign Affairs", March-April 2020 (<https://www.foreignaffairs.com/articles/united-states/2020-02-10/new-spheres-influence>):

<sup>5</sup> Տես *Ն. Հովհաննիսյան*, Միջազգային կենտրոնի տեղաշարժը արևմուտքից արևելք. նոր իրողություններ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից: «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)» հ. 3: Ե., 2014, էջ 313–323, *Դ. Մանասյան*, Համաշխարհային քաղաքականության «ծանրության կենտրոնի» տեղաշարժը արևմուտքից դեպի արևելք. աշխարհաքաղաքական գնահատումներ ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից: «ՀԲ», 2020, հմ. 3:

<sup>6</sup> Տես *Gönül Tol*. From regime change to rapprochement? Turkey's shifting Syria policy. "Middle East Institute", 20 September 2019 (<https://www.mei.edu/publications/regime-change-rapprochement-turkeys-shifting-syria-policy>); *Ahmad Majidyar*. Kurdish Vote Brings Iran, Turkey Closer as Erdogan Visits Tehran. "Middle East Institute", 4

Վերջին տարիներին էապես խորացել են նաև երկու պետությունների տնտեսական հարաբերությունները: Այսպես, Իրանը մի շրջան եղել է Ռուսաստանից հետո Թուրքիային բնական գազ մատակարարող երկրորդ պետությունը: Տարբեր մասնագետների գնահատմամբ, երկկողմ առևտրատնտեսական համագործակցության ծավալումը և տնտեսական փոխկապվածության խորացումը կարևոր գործոն էր, որը կանխում էր տարածաշրջանում Իրանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական պայքարի վերածումը առձակատման<sup>7</sup>:

Ընհանրապես Իրան–Թուրքիա հարաբերությունների վերլուծությունը վկայում է, որ վերջին տասնամյակում երկու պետությունների շահերի բախման, նրանց աշխարհաքաղաքական մրցակցության և, միևնույն ժամանակ, համագործակցության գլխավոր տիրույթը Մերձավոր Արևելքն է: Թուրքիան և Իրանը Հարավային Կովկասը հիմնականում ընկալել են որպես Ռուսաստանի բնական ազդեցության գոտի, իսկ այնտեղ հաստատված ստատուս-քվոն իրենց ազդեցության էական աճումը զսպող հանգամանք, ինչը կանխել է Հարավային Կովկասում Թուրքիա–Իրան պայքարի ծավալումը:

ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՆ–ԹՈՒՐԻԱ  
 ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ  
 ԵՎ ԹՈՒՐԻԱՅԻ ԴԵՐԻ ԱՃՈՒՄԸ

2020 թ. 44-օրյա պատերազմը և Թուրքիայի անմիջական ռազմական մասնակցությամբ<sup>8</sup> Ադրբեջանի ձեռք բերած հաջողությունը տարածաշրջանում արմատապես փոխեցին ուժերի հաշվեկշիռը՝ հանգեցնելով Թուրքիայի ազդեցության էական աճմանը, ինչը տարածաշրջանային գերտերության նրա վերածման «մեծ ռազմավարության» իրագործման ուղղությամբ կատարված կարևոր քայլ էր<sup>9</sup>:

Թուրքիան փաստորեն ապահովեց իր ռազմական ներկայությունը Ադրբեջանում, ուստի և Հարավային Կովկասում: Իհարկե, Անկարան չկարողացավ հասնել իր ռազմավարական նպատակներից մեկին՝ ռուսների հետ խաղաղապահական առաքելությանն իր ստորաբաժանումների մասնակցությամբ, այդուհանդերձ, թուրք և ռուս զինվորները համատեղ վերահսկելու են հրադադարի ռեժիմի խախտումները, և Թուրքիան ջանքեր չի խնայի այս-

October 2017 (<https://www.mei.edu/publications/kurdish-vote-brings-iran-turkey-closer-erdogan-visits-tehran>):

<sup>7</sup> Տես *Farhad Rezaei*. Iran-Turkey: From Economic Partnership to Regional Rivalry. “The Journal for Interdisciplinary Middle Eastern Studies”, Fall 2017, Vol. 1 ([https://www.ariel.ac.il/wp/jimes/wp-content/uploads/sites/147/2019/01/Jimes-Vol1\\_Rezaei\\_2017-11-16.pdf](https://www.ariel.ac.il/wp/jimes/wp-content/uploads/sites/147/2019/01/Jimes-Vol1_Rezaei_2017-11-16.pdf)), *Ֆ. Ստեֆեն Լարաբի, Ալիրեզա Նադեր*, Նշ. աշխ.:

<sup>8</sup> Տես *C. Kasapoglu*. Turkey Transfers Drone Warfare Capacity to Its Ally Azerbaijan. “The Jamestown Foundation”, 15 October 2020 (<https://jamestown.org/program/turkey-transfers-drone-warfare-capacity-to-its-ally-azerbaijan/>):

<sup>9</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես *И. И. Стародубцев*. Большая стратегия Турции, ч. 1. «Институт Ближнего Востока», 7 ноября 2020 (<http://www.iimes.ru/?p=74106>):

տեղ իր գտնվելու ժամկետը հնարավորինս երկարաձգելու համար: Անկախ Ադրբեջանում թուրքական ստորաբաժանումների կարգավիճակից՝ դրանց տեղակայումը նշանակալի և պատմական ձեռքբերում է, քանի որ դա առաջին անգամն է, երբ Թուրքիային հաջողվում է ռազմական ներկայություն ապահովել նախկին խորհրդային տարածքում<sup>10</sup>: Թեև թուրքական բանակն ունի բազմաթիվ ռազմական հենակետեր և վերսահմանային գործողություններ է ձեռնարկում հյուսիսային Իրաքում, հյուսիսային Սիրիայում, Լիբիայում, մինչև 2020 թ. սեպտեմբերին սկսված պատերազմը ռուսական գործոնի ուժով բացառվում էր Հարավային Կովկասում ցանկացած ռազմական գործողություններում նրա ներգրավվածությունը: Կարմիր գծերը հատելով՝ Թուրքիան հաղթահարեց նաև զսպող ռուսական գործոնի հոգեբանական արգելքը<sup>11</sup>:

Հարկ է նշել Թուրքիայի ջանքերը՝ ուղղված Ղարաբաղյան հակամարտության «սիրիականացմանը», այսինքն՝ Աստանայի գործընթացի՝ տարածման Հարավային Կովկասի վրա, ինչը ենթադրում է այդ տարածաշրջանի բաժանում Թուրքիայի, Ռուսաստանի և Իրանի միջև ազդեցության ոլորտների: Այդպիսով՝ Թուրքիան ձգտում է հանդես գալ որպես ազդեցիկ դերակատար, ինչը նրան հնարավորություն կտա ընդլայնելու այդ պետությունների հետ ռազմավարական առևտրի դաշտը<sup>12</sup>:

Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ Ռուսաստան–ԱՄՆ/ՆԱՏՕ ռազմավարական առձևատման խորացման պայմաններում Ռուսաստանը հարկադրված հաշվի է առնում տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության մեծացման միտումները, նրա դերը Դրիմի հարցում<sup>13</sup>, սիրիական ճգնաժամում, ինչպես նաև ազդեցության աճումը ՌԴ թուրքալեզու հանրապետություններում: Ըստ այդմ նա հակված է Անկարայի հետ հարաբերությունների բարելավման միջոցով ազդել Թուրքիա–ՆԱՏՕ ու Թուրքիա–ԱՄՆ գործընկերային հարաբերությունների վրա և այդպիսով մեղմացնել

<sup>10</sup> Steu A. *Gabuev*. Viewpoint: Russia and Turkey – unlikely victors of Karabakh conflict. “BBC news”, 12 November 2020 (<https://www.bbc.com/news/world-europe-54903869>):

<sup>11</sup> Տես Վ. Պետրոսյան, Դ. Մանասյան. Թուրքական գամբիտ. պատերազմի սիրիականացումը: «Արմենպրես», 03.10.2020 ([https://armenpress.am/arm/news/1030161.html?fbclid=IwAR2mV7Z\\_EZ4hGpMwuVWUIB414ghB9geryl-PqMJ4tQOWSPFoXPEzkEZ01i0](https://armenpress.am/arm/news/1030161.html?fbclid=IwAR2mV7Z_EZ4hGpMwuVWUIB414ghB9geryl-PqMJ4tQOWSPFoXPEzkEZ01i0)):

<sup>12</sup> 2016 թ. դեկտեմբերից Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում Թուրքիայի, Ռուսաստանի և Իրանի՝ Սիրիայում ազդեցություն ունեցող հիմնական դերակատարների նախաձեռնությամբ ստեղծված բանակցային ֆորմատ է, որի նպատակը սիրիական հակամարտության կարգավորման ուղղությամբ քայլերի մշակումն ու համակարգումն է, ինչպես նաև բանակցային գործընթացի առաջնորդումը:

<sup>13</sup> Տես նույն տեղում:

<sup>14</sup> Ռուսաստանի հետ «ռազմավարական առևտրի» դաշտն ընդլայնելու Անկարայի ռազմավարության մասին տես H. *Kotanjian*. Turkey Takes Advantage from Crimean Platform to Enhance Its Leverage against Russia. “The European Geopolitical Forum”, 13 October 2021 ([http://gpf-europe.com/forum/?blog=external\\_relations&id=431](http://gpf-europe.com/forum/?blog=external_relations&id=431)):

նաև Արևմուտքի ճնշումները՝ փոխարենը Թուրքիային անելով որոշակի գիշումներ իր ազդեցության «ավանդական» գոտիներում<sup>14</sup>:

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎՎԱՍՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՆՈՐ ԱՆՎՏԱՆՁԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԻՐԱՆԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կան Իրանին մտահոգող մի շարք աշխարհաքաղաքական գործոններ, որոնք 2020 թվականի Արցախյան պատերազմից հետո կարող են ազդել Իրան–Թուրքիա հարաբերությունների վրա:

*Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքի ամրապնդումը:* Տարածաշրջանում ստատուս-քվոն, որը ձևավորվել էր 1994 թվականին հաստատված հրադադարով, հաջողությամբ կանխում էր Թուրքիայի աշխարհաքաղաքական ազդեցության աճումը:

Հետպատերազմյան շրջանում Իրանի հիմնական մտահոգություններից է ուժային հարաբերակցության փոփոխությունը հոգուտ թուրք-ադրբեջանական դաշինքի: Թուրքիա–Ադրբեջան համագործակցությունը, որը քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային ոլորտներում դառնում է ավելի հաստատու թե՛նացված, զգալիորեն խորացել է 2020 թ. հուլիսից հետո: «Մեկ ազգ՝ երկու պետություն» կարգախոսը, որն ավելի շատ արտահայտում է էթնիկական և լեզվական ընդհանրությունները, ներկայումս ռազմական ոլորտում վերածվել է «մեկ ազգ՝ մեկ բանակ» կարգախոսի<sup>15</sup>: Հաշվի առնելով Թուրքիայի հաջող ռազմական ներգրավվումը 44-օրյա պատերազմում՝ Ադրբեջանն այժմ խիստ կերպով շահագրգռված է Թուրքիայից ռազմական տեխնիկայի գնման և այդ ոլորտում նրա հետ համագործակցության ընդլայնման մեջ: Ադրբեջանի հետ խոր ինտեգրման և աշխարհաքաղաքական իմաստով վերջինիս «կլանման» Թուրքիայի ռազմավարական տեսլականի համապարփակ դրսևորումը կարելի է համարել 2021 թ. հունիսին ստորագրված Ադրբեջանի և Թուրքիայի միջև դաշնակցային հարաբերությունների մասին «Շուշիի հռչակագիրը»<sup>16</sup>:

Իրանը, անշուշտ, հաշվի է առնում, որ Թուրքիա–Ադրբեջան դաշինքի սերտացումը նպատակաուղղված է նաև Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետություններում Թուրքիայի ազդեցության ուժեղացմանը<sup>17</sup>: Թյուրքալեզու պետությունների հետ իր կապերը մեծապես հաստատու թե՛նացված հենքի վրա դնելու և 2009 թ. ստեղծված Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի թուրքակենտրոն ինտեգրումը զարգացնելու

<sup>14</sup> Stu «Буря на Кавказе». Центр анализа стратегий и технологий. М. 2021, сс. 95–105:

<sup>15</sup> Stu “Army of Great Turan: Erdogan’s Neo-Ottoman Ambitions Move Forward”, 16 September 2020 (<https://izwest.livejournal.com/7146201.html>):

<sup>16</sup> Stu “Turkey, Azerbaijan sign “Shusha Declaration” to boost defense cooperation”. “Anadolu Agency”, 15.06.2021 (<https://www.aa.com.tr/en/asia-pacific/turkey-azerbaijan-sign-shusha-declaration-to-boost-defense-cooperation/2274968>)

<sup>17</sup> Stu *E. Mamedov*. How Iran views the Nagorno-Karabakh truce, 13 November 2020 (<https://eurasianet.org/perspectives-how-iran-views-the-nagorno-karabakh-truce>):

(համատեղ զինված ուժերի ստեղծման հեռանկարով) Անկարայի հեռամետ ռազմավարության<sup>18</sup> կարևոր քայլ կարելի է համարել 2021 թ. նոյեմբերին Ստամբուլում կայացած Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի 8-րդ գագաթնաժողովը, որտեղ որոշում է ընդունվել խորհուրդը վերանվանել Թյուրքական պետությունների կազմակերպության և հաստատվել է «Թյուրքական աշխարհի՝ մինչև 2040 թվականի տեսլականը»<sup>19</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ Թուրքիա–Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքի ամրապնդումն ուղեկցվում է Ադրբեջանում իրանական գործոնի և ընդհանրապես Իրանի դիրքերի թուլացմամբ, ինչի վառ ապացույցն է ոչ միայն Ադրբեջանի իշխանությունների քայլերը՝ ուղղված երկրում տարաբնույթ իրանամետ շիա ուժերի ազդեցության սահմանափակմանն, այլև Ադրբեջանի սուննիադավան բնակչության շրջանում Թուրքիայի ակտիվացումը և նրա ձեռնարկած Ադրբեջանի սուննիացումը: Հավանական է, որ դա նոր թափ ստանա Թուրքիայի, Պակիստանի և Միջին Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների հետ Ադրբեջանի հարաբերությունների խորացմանը զուգընթաց:

Իրանին խիստ մտահոգում են նաև Թուրքիա–Ադրբեջան–Պակիստան ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման ուղղությամբ նախաձեռնվող քայլերը (մասնավորապես՝ 2021 թ. սեպտեմբերին Ադրբեջանում կայացած համատեղ զորավարությունները): Արցախյան պատերազմից և Աֆղանստանում իշխանության գլուխ «Թալիբանի» գալուց հետո դա ձեռք է բերում նոր աշխարհաքաղաքական նշանակություն, հատկապես, եթե հաշվի առնվեն Չինաստանի հետ Պակիստանի հարաբերությունների զարգացումը, Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակում իրագործվող ռազմավարական տրանսպորտային նախագծերը, որոնք շրջանցում են ՌԴ-ն՝ իրար կապելով ասիական պետությունները և այլ իրողություններ:

Տվյալ համատեքստում Ադրբեջանը Սյունիքով, Նախիջևանի հետ կապող ուղին, որը թուրք-ադրբեջանական ծրագրերում մեկնաբանվում է որպես «միջանցք», թեև միջնորդ ՌԴ-ն և ՀՀ-ն բազմիցս հայտարարել են, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջ նման ձևակերպում չկա, ստանում է ոչ միայն տարածաշրջանային, այլև ավելի ընդհանրական՝ աշխարհաքաղաքական, նշանակություն:

*Իրանի հյուսիսային սահմանների մոտ «պանթուրքական միջանցքի» ստեղծման վտանգը:* 2020 թ. նոյեմբերի 10-ին Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի առաջնորդների ընդունած եռակողմ հայտարարությունում Նախիջևանը Ադրբեջանին կապող ցամաքային ուղիներ ստեղծելու դրույթի առկայությունը թեհրանը համարում է Թուրքիայի մեծ հաղթանակ<sup>20</sup>: Ռուսաս-

<sup>18</sup> Stü M. *Aydogan*. Turkic Council eyes forming “united states of Turkic world”. “Anadolu Agency”, 30.03.2021 (<https://www.aa.com.tr/en/world/turkic-council-eyes-forming-united-states-of-turkic-world/2192579>):

<sup>19</sup> Stü «Эрдоган создал Организацию тюркских государств». «Взгляд», 12 ноября 2021 (<https://vz.ru/news/2021/11/12/1128827.html>):

<sup>20</sup> Stü «Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-мини-

տանի միջնորդությամբ կնքված զինադադարի համաձայնագրով նախատեսվում է տարածաշրջանային հաղորդակցության բոլոր ուղիների ապաշրջափակում, և այդ համատեքստում նախատեսվում է նաև, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է տրամադրի Նախիջևանը Ադրբեջանին կապող ճանապարհի (ավտոմոբիլային և երկաթուղային), որը փաստորեն Թուրքիան Ադրբեջանին կկապի շատ ավելի կարճ ճանապարհով, քան եղածը, որն անցնում է Իրանի տարածքով:

Այստեղ հարկ է նշել հետևյալ հանգամանքը: Թեև ընդունված է, որ ճանապարհների նկատմամբ ինքնիշխանությունը պահպանում են այն պետությունները, որոնց տարածքով դրանք անցնում են<sup>21</sup>, Թուրքիան չի թաքցնում, որ իր ռազմավարական նպատակն է Սյունիքում ստանալ մի ճանապարհ, որը կունենա հատուկ կարգավիճակ և կլինի ՀՀ վերահսկողությունից դուրս<sup>22</sup>:

Իրանի գնահատմամբ՝ այդ միջանցքը կենսունակություն կհաղորդի Թուրքիայի «Մեծ Թուրանի» ծրագրին, կմեծացնի տարածաշրջանային գերտերություն դառնալու նրա ներուժը՝ նկատի ունենալով նաև նրա համար Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում գործող միջանցքներից օգտվելու ռազմավարական կարևորությունը:

Ուստի Իրանի համար խիստ անցանկալի է Սյունիքով Ադրբեջանը Նախիջևանին կապող բազմատեսակ միջանցքի բացման թուրք-ադրբեջանական ծրագիրը<sup>23</sup>:

*Իրանում թյուրքական անջատողականության վտանգը:* Մի կողմից՝ փաստացի գոյություն ունեցող Արցախի Հանրապետություն–Իրան սահմանի փոփոխությունը հօգուտ Ադրբեջանի, մյուս կողմից՝ տարածաշրջանում Թուրքիա–Ադրբեջան երկակի աճող ազդեցությունը Իրանին դարձնում են շատ խոցելի, քանի որ Ղարաբաղյան հակամարտության օջախին հարակից նրա հյուսիս-արևմտյան նահանգներում կա մեծաթիվ թուրքախոս բնակչություն: Դա Իրանի ամենամեծ թյուրքական էթնիկական խումբն է, որը, ըստ տարբեր աղբյուրների, պարսիկներից հետո երկրորդն է (17-25 միլիոն մարդ)<sup>24</sup>: Դրանք, ինչպես և պարսիկները, լինելով հիմնականում շիա մահմե-

стра Республики Армения и Президента Российской Федерации», 10 ноября 2020 (<http://kremlin.ru/events/president/news/64384>):

<sup>21</sup> Տե՛ս «Декларация о недопущении интервенции и вмешательства во внутренние дела государств». Принята резолюцией 36/103 Генеральной Ассамблеи от 9 декабря 1981 г. ([https://www.un.org/ru/documents/decl\\_conv/declarations/internal\\_affairs\\_decl.shtml](https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/internal_affairs_decl.shtml)):

<sup>22</sup> Տե՛ս “Turkey ready to reciprocate Armenia’s steps for regional peace”. “Daily Sabah”, 27 October 2021 (<https://www.dailysabah.com/politics/diplomacy/turkey-ready-to-reciprocate-armenias-steps-for-regional-peace>):

<sup>23</sup> Տե՛ս *B. Daragahi*. Nagorno-Karabakh: An unexpected conflict that tests and perplexes Iran. “Atlantic Council”, 9 November 2020 (<https://www.atlanticcouncil.org/blogs/iransource/nagorno-karabakh-an-unexpected-conflict-that-tests-and-perplexes-iran/>):

<sup>24</sup> Տե՛ս *Т. Ганиев, С. Задонский, В. Карякин*. Военная мощь Исламской Республики Иран. В 2-х томах, т. 1. Институт Ближнего Востока. М., 2019, сс. 127–149:

դականներ և «իրանական մշակութային կոդի» ու պարսկական քաղաքակրթական ժառանգության կրողներ, լայնորեն ներկայացված են Իրանի կրոնապետական համակարգի գրեթե բոլոր մակարդակներում: Այնուամենայնիվ, Թեհրանը ադրբեջանական ազգայնամոլության նկատմամբ եղել է շատ զգայուն դեռ 1990-ական թվականներից, երբ քաղաքական քարտեզի վրա հայտնվեց անկախ Ադրբեջանի Հանրապետությունը՝ «ձգողության կենտրոն» դառնալով «Մեծ Ադրբեջան» ստեղծելու մոլուցքով տառապող տարբեր պանթյուրքական անջատողական ուժերի համար, որոնք գոյություն ունեին Իրանում<sup>25</sup>: Այժմ Հարավային Կովկասում ձևավորված ուժային հաշվեկշիռն էապես փոխվել է հոգուտ Թուրքիայի և Ադրբեջանի, ուստի Իրանը մտավախություն ունի, որ նրանց հետ, էթնիկական ու լեզվական և մասամբ կրոնական ընդհանրություններ ունեցող թյուրքական բնակչությունն իր հովանու ներքո միավորելու Թուրքիայի պանթյուրքական ծրագրերը, Թուրքիա-Ադրբեջան խորացող համագործակցությունը, Ադրբեջան-Իսրայել սերտ ռազմաքաղաքական հարաբերությունները կարող են Իրանում թյուրքական անջատողականության ակտիվացման պատճառով հանգեցնել ներքաղաքական անկայունության առաջացման:

Այս համատեքստում խորհրդանշական է, որ 2020 թվականի դեկտեմբերին Բաքվում կայացած զորահանդեսի ժամանակ Թուրքիայի Նախագահ Էրդողանը ասմունքեց մի ազգայնամոլական ադրբեջանական բանաստեղծություն, որն իր բնորոշմամբ վերաբերում էր «Արաքս գետի երկու կողմերի բռնի և արհեստական տարանջատմանը, ինչի հետևանքով, փաստորեն, Ադրբեջանը զատվեց Իրանի էթնիկապես ադրբեջանական նահանգից»: Իրանի արտգործնախարար Զ. Զարիֆը «Թվիտեր»-ում պատասխանեց, որ բանաստեղծությունը «վերաբերում է Արաքսից դեպի հյուսիս գտնվող տարածքների բռնի անջատմանն իրանական հայրենիքից»<sup>26</sup>:

Ադրբեջան-Իսրայել ռազմաքաղաքական համագործակցության խորացումը: Նկատի ունենալով Իսրայելի հետ խորացող հակամարտությունը՝ Իրանը մտահոգված է պաշտպանական-անվտանգային ոլորտում Ադրբեջան-Իսրայել համագործակցության զարգացմամբ, ինչը Իրան-Ադրբեջան սահմանագծի երկարացման պայմաններում մեծացնում է Ադրբեջանի տարածքն ու ապահովումային կարողությունները իր դեմ օգտագործելու Իսրայելի հնարավորությունները<sup>27</sup>: Ի դեպ, Իրանը վերջին տարիներին բազմիցս արտահայտել է իր դժգոհությունը՝ Իսրայելին մեղադրելով իր դեմ հետախու-

<sup>25</sup> Stü Nasib L. Nassibli. Azerbaijan-Iran Relations: Challenges and Prospects. “Harvard Kennedy School”, 30 November 1999 (<https://www.belfercenter.org/publication/azerbaijan-iran-relations-challenges-and-prospects>):

<sup>26</sup> Stü “Iran protests to Turkey over “meddling” poem recited by Erdogan”. “Al Jazeera”, 11 December 2020 (<https://www.aljazeera.com/news/2020/12/11/iran-protests-to-turkey-over-meddling-poem-recited-by-erdogan>):

<sup>27</sup> Stü D. Edelstein. Potential Gains for Israel after Azerbaijan’s Victory in Nagorno-Karabakh, 10 March 2021 (<https://www.justsecurity.org/75135/potential-gains-for-israel-after-azerbajians-victory-in-nagorno-karabakh/>):

զական գործունեություն վարելու մեջ<sup>28</sup>: Ավելին. Թեհրանը հաշվի է առնում, որ Թուրքիա–Իսրայել հարաբերությունների կարգավորման և տասնամյակներ շարունակ գոյություն ունեցած սերտ ռազմական, առաջին հերթին՝ հետախուզական, կապերի վերականգման դեպքում<sup>29</sup> Թուրքիա–Ադրբեջան–Իսրայել եռամիասնությունը կարող է ԱՄՆ-ի աջակցությամբ շատ լուրջ սպառնալիքներ ստեղծել Իրանի կենսական-անվտանգային շահերի համար:

*Սուննի ջիհադականների ներթափանցումը Հարավային Կովկաս:* Ըստ հեղինակավոր միջազգային աղբյուրների և ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի հատուկ ծառայությունների գնահատումների՝ 2020 թ. Արցախյան պատերազմի ընթացքում Թուրքիան Սիրիայից և Լիբիայից հավաքագրել և Արցախյան ռազմաձևակատ է տեղափոխել հազարավոր սուննիական ջիհադական զինյալների<sup>30</sup>: Գաղտնիք չէ, որ դրանք ունեն շեշտված հակաշիական և հակաիրանական կողմնորոշում, և դրանց կարող են Իրանի դեմ հեշտությամբ օգտագործել ոչ միայն Թուրքիան, այլև ուրիշ «պատվիրատուներ»: Իրանը մշտապես իր համար լուրջ վտանգ է համարել Մերձավոր Արևելքում գործող սուննիական սալաֆի-ջիհադական ուժերի ծավալումը դեպի իր սահմաններ՝ նկատի ունենալով նաև վերջին տարիներին իր տարածքում ձեռնարկված տարբեր ահաբեկչական գործողությունները, որոնց համար պատասխանատվությունը վերցրել է «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպությունը և պաշտոնապես արտահայտել է իր անհանգստությունը 2020 թ. իր սահմանների մոտ տարաբնույթ սուննի արմատական ուժերի ներկայության առնչությամբ<sup>31</sup>: Դրա վկայություններն են

<sup>28</sup> Stu T. Grove. Azerbaijan eyes aiding Israel against Iran. "Reuters", 30 September 2012 (<https://www.reuters.com/article/us-iran-israel-azerbaijan-idUSBRE88T05L20120930>); J. Kucera. Iran Warns Azerbaijan over Israeli Missile Purchase. "Eurasianet", 2 September 2013 (<https://eurasianet.org/iran-warns-azerbaijan-over-israeli-missile-purchase>):

<sup>29</sup> Stu K. Valansi. Turkey is seeking a fresh start with Israel. "Atlantic Council", 10 March 2021 (<https://www.atlanticcouncil.org/blogs/turkeysource/turkey-is-seeking-a-fresh-start-with-israel/>):

<sup>30</sup> Stu J. Irish, M. Rose. France accuses Turkey of sending Syrian jihadists to Nagorno-Karabakh. "Reuters", 1 October 2020 (<https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-putin-macron/france-accuses-turkey-of-sending-syrian-mercenaries-to-nagorno-karabakh-idUSKBN26L3SB>); "“We don’t even know where Azerbaijan is”: The Syrian mercenaries driven by poverty to die in a distant war". "Independent", 9 October 2020 (<https://www.independent.co.uk/news/world/middle-east/armenia-azerbaijan-syria-war-fighting-mercenary-russia-b912446.html>); "Syrian recruit describes role of foreign fighters in Nagorno-Karabakh". "The Guardian", 2 October 2020 (<https://www.theguardian.com/world/2020/oct/02/syrian-recruit-describes-role-of-foreign-fighters-in-nagorno-karabakh>):

<sup>31</sup> Stu Maryam Sinaee. Iran Warns again over Sunni Militants in Nagorno-Karabakh War. "Iran International", 7 November 2020 ([https://old.iranintl.com/en/world/iran-warns-again-over-sunni-militants-nagorno-karabakh-war?\\_\\_cf\\_chl Captcha\\_tk\\_\\_=fCj oP7rvfzj17005uyRS\\_zAM1DememHS8I6ApyqW\\_8-1 636636064-0-gaNycGzNCFE](https://old.iranintl.com/en/world/iran-warns-again-over-sunni-militants-nagorno-karabakh-war?__cf_chl Captcha_tk__=fCj oP7rvfzj17005uyRS_zAM1DememHS8I6ApyqW_8-1 636636064-0-gaNycGzNCFE)):



2021 թ. հոկտեմբերին Ադրբեջանին սահմանամերձ շրջաններում Իրանի անցկացրած լայնամասշտաբ զորավարությունները, ինչպես նաև Ադրբեջանի հասցեին իրանցի բարձրաստիճան զինվորականների արած «նախագուշացումները»: Տարբեր հեղինակավոր հետազոտողներ նույնիսկ չեն բացառում, որ նշված իրողությունները կարող են ստեղծել Իրան-Թուրքիա հակասությունների նոր ճակատ՝ շիա-սուննի միջնորդավորված հակամարտությունը տարածելով նաև Հարավային Կովկասի վրա<sup>32</sup>:

ԻՐԱՆ-ԹՈՒՐԹԻԱ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԴԱՇՏԻ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻՑ ԴԵՊԻ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

2020 թ. Արցախյան պատերազմը հստակ կերպով ցույց տվեց, որ Հարավային Կովկասը աշխարհաքաղաքական իմաստով աստիճանաբար դառնում է Մերձավորարևելյան աշխարհառազմավարական տարածաշրջանի մաս՝ ենթարկվելով այդ տարածաշրջանի ազդեցությանը և ըստ այդմ ձեռք բերելով զարգացումների մեծ անորոշություն ու անկանխատեսելիություն: Նման եզրահանգման են գալիս նաև մի շարք առաջատար ռուսաստանցի հետազոտողներ, այդ թվում՝ Մոսկվայի Կառնեգի կենտրոնի տնօրեն Դմիտրի Տրենինը, որը համարում է, թե Ռուսաստանն ընդունում է այն իրողությունը, որ Հարավային Կովկասը դառնում է Մերձավոր Արևելքում ու Կենտրոնական Ասիայում ձևավորվող միջազգային հարաբերությունների համակարգի մաս, ուստի ստիպված է իր հարավկովկասյան քաղաքականության մեջ ավելի մեծ չափով հաշվի առնել Թուրքիայի և Իրանի գործոնները<sup>33</sup>:

Ըստ այդմ 44-օրյա պատերազմից հետո Հարավային Կովկասում Իրանի և Թուրքիայի միջև ձևավորվող առնչությունները հետզհետե դառնում են Մերձավոր Արևելքում նրանց բազմաձևակատ հարաբերությունների մաս՝ դրանց հետ կազմելով կուռ միասնական համակարգ: Դրա հետևանքով երկու պետությունների միջև ռազմավարական «առևտրի» դաշտն ավելի է ընդլայնվում՝ նրանց հնարավորություն տալով մի ձակատում իրադրության փոփոխությամբ ներգործելու այլ ձակատներում տեղի ունեցող զարգացումների վրա:

Նկատի ունենալով Հարավկովկասյան տարածաշրջանը ներառող Մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը՝ այս երեք պետություններն իրենց հարավկովկասյան քաղաքականությունն սկսում են մշակել ոչ թե հետխորհրդային, այլ ավելի լայն՝ մերձավորարևելյան, հա-

<sup>32</sup> Stu *Vali Nasr*. The Middle East's Next Conflicts Won't Be Between Arab States and Iran. "Foreign Policy", 2 March 2021 (<https://foreignpolicy.com/2021/03/02/the-middle-east-s-next-conflicts-wont-be-between-arab-states-and-iran/>); *Galip Dalay*. Turkish-Iranian Relations Are Set to Become More Turbulent. "The German Marshall Fund of the United States", 9 February 2021 (<https://www.gmfus.org/publications/turkish-iranian-relations-are-set-become-more-turbulent>):

<sup>33</sup> Stu «Буря на Кавказе», сс. 114–119; *Д. Тренин*. Россия и Закавказье через год после войны в Карабахе. «Московский Центр Карнеги», 09.11.2021 (<https://carnegie.ru/commentary/85683>):

մատեքստում: Դրա վկայությունն են Նախագահ Էրդողանի փորձերը «Աստանայի գործընթացը» հարմարեցնելու Հարավային Կովկասին (օրինակ՝ Թուրքիայի առաջ քաշած 3+3 ձևաչափը):

Ներկայումս Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի միջև ընթանում է Հարավային Կովկասում նոր ստատուս-քվոյի ձևավորման համար պայքար, ընդամին նրանք ձգտում են հաշվեկշռելու իրենց շահերը, փոխհամաձայնեցնելու իրենց կարմիր գծերը և սթափ կերպով գնահատելու տարածաշրջանային համագործակցության հնարավորությունները: 2020 թ. Արցախյան պատերազմից հետո Հարավային Կովկասում ձևավորվող անվտանգային միջավայրը և ուժերի հարաբերակցությունը վկայում են տարածաշրջանում Թուրքիայի դերի աճումը: Այս համատեքստում Իրանին, անշուշտ, անհանգստացնում են Թուրքիայի պանթյուրքական նկրտումների շրջանակում տարածաշրջանի գերիշխան դառնալու նպատակները, ինչը հնարավոր է առաջին հերթին Իրանի հաշվին՝ նրան ռազմաքաղաքական առումով հետին պլան մղելու միջոցով: Այս ամենն ավելի հավանական է դարձնում երկկողմ տարածայնությունների ու հակասությունների աճումը<sup>34</sup>:

Այնուամենայնիվ քիչ հավանական է, որ երկկողմ հակասությունները վերածվեն խոր և լայնամասշտաբ տարածաշրջանային հակամարտության: Իրան–Թուրքիա բավական բարդ և բազմաշերտ հարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ կողմերը միմյանց չեն ընկալում որպես սպառնալիք գոյությանը, և նրանց տարածաշրջանային մրցակցությունը գրոյական գումարով դասական խաղ չէ, ինչպիսին է, օրինակ, Իրանի հակամարտությունը Սաուդյան Արաբիայի հետ: Իրանը և Թուրքիան պատմության ընթացքում երկկողմ մրցակցությանը զուգահեռաբար ձևավորել են տարբեր հարցերում արդյունավետորեն համագործակցելու գործունե մեխանիզմներ և կարողություններ: Ըստ այդմ՝ Իրանի նկատմամբ կիրառվող միջազգային պատժամիջոցների հետևանքով Թուրքիայից նրա որոշակի կախվածությունը ապրանքներ ներմուծելու, ֆինանսական և այլ ոլորտներում այդ պատժամիջոցները շրջանցելու առումով, ինչպես նաև մի շարք մերձավորարևելյան հարցերում Իրանի և Թուրքիայի միջև ներկայումս ծավալված փոխշահավետ համագործակցությունը Իրանին կդրդեն Թուրքիայի հետ պահպանելու պրագմատիկ գործընկերային հարաբերություններ՝ կանխելով մրցակցության վերաճումը առձակատման: Թվում է, թե Իրանը, հաշվի առնելով իր հյուսիսային շրջաններում ակտիվացող թյուրքական գործոնը և արտաքին ուժերի ազդեցությամբ հակաիրանական քաղաքականության ոլորտում Ադրբեջանի ներգրավվման վտանգը, կշարունակի քայլեր ձեռնարկել Թուրքիայի հետ տնտեսական ու քաղաքական համագործակցության ակտիվացման միջոցով այդ գործոնները հնարավորինս մեղմացնելու ուղղությամբ: Մեր կարծիքով՝ սույն իրողությունները նաև պայմանավորեցին 2020 թ. 44-օրյա պատերազմի ժամանակ Իրանի հայտարարած հաշվեկշռված չեզոք դիրքավորումը:

Հարկ է նկատի ունենալ, որ ԱՄՆ-ի, Իսրայելի և Սաուդյան Արաբիայի

<sup>34</sup> Տես *Գալիսյա Ղալայ*, Նշ. աշխ.:

հետ ռազմավարական հակամարտության խորացման պայմաններում Հարավային Կովկասում Իրանի գլխավոր ռազմավարական նպատակներից է տարածաշրջանը գերծ պահել ԱՄՆ-ի և Իսրայելի հակաիրանական գործողությունների համար ռազմահենադաշտի վերածունից: Այս տեսանկյունից Թուրքիա–ԱՄՆ հարաբերությունների որոշ վատթարացումը և ԱՄՆ-ի կրտսեր գործընկերոջ կարգավիճակից դուրս գալու և ավելի ինքնուրույն տարածաշրջանային խաղացողի վերածվելու Երդոհանի քաղաքականությունը Իրանի գնահատմամբ կարող է ԱՄՆ–Իրան ռազմավարական հակադրման պայմաններում նվազեցնել հակաիրանական գործողություններում Թուրքիայի ներգրավման հավանականությունը: Թուրքիան, որը մարտահրավեր է նետում ԱՄՆ-ի առաջնորդությամբ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված աշխարհակարգին՝ հանդես գալով «աշխարհը 5-ից մեծ» տեսլականով<sup>35</sup>, կարող է Թեհրանում համարել նաև տարածաշրջանում Արևմուտքի դեմ Իրան–Թուրքիա–Ռուսաստան ձևաչափի զարգացման և տարածաշրջանային ուժերով տարածաշրջանային խնդիրների լուծման հնարավորություն, հատկապես, որ կա Սիրիայում այդ պետությունների արդյունավետ համագործակցության նախադեպ: ՌԻՍՏԻ պատահական չէ, որ Իրանը ողջունեց տարածաշրջանային համագործակցության 3+3 (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Իրան, Թուրքիա, Ռուսաստան) ձևաչափ ստեղծելու վերաբերյալ Թուրքիայի առաջարկությունը, այն դիտելով նաև որպես տարածաշրջանային գործընթացներում եվրաստլանտյան ուժային կենտրոնների ազդեցությունը սահմանափակելու միջոցի<sup>36</sup>:

Կարծում ենք, որ Իրանը շահագրգռված է Հարավային Կովկասում կայունության հաստատման մեջ և հակված է «հարմարվելու» նոր իրավիճակին, որպեսզի դուրս չմնա տարբեր ձևաչափերով տարածաշրջանային ապաշրջափակման և համագործակցության ծավալումից: Այստեղ պետք է նկատի ունենալ տնտեսական ու հաղորդակցային ուղիների ապաշրջափակման հարցում Ռուսաստանի շահագրգռվածությունը, քանի որ դա նրան հնարավորություն կտա Վրաստանի շրջանցմամբ ցամաքային կապ հաստատելու Իրանի և Թուրքիայի հետ՝ սահմանափակելով տարածաշրջանում ԱՄՆ-ի ու ԵՄ-ի ներկայությունը:

Այս համատեքստում հարկ է նշել, որ հետպատերազմյան շրջանում ՀՀ-ին ուղղված նոր անվտանգային սպառնալիքներին և, մասնավորապես, Սյունիքի նկատմամբ Թուրքիայի ու Ադրբեջանի աճող հավակնություններին դիմակայումը, անշուշտ, նրան դրդում են ռազմավարական տեսանկյունից լրջորեն վերաիմաստավորելու Իրանի հետ իր հարաբերությունները և մշակելու

<sup>35</sup> Stu “Erdoğan reiterates call for UN reform for fairer world”. “Daily Sabah”, 19 October 2021 (<https://www.dailysabah.com/politics/diplomacy/erdogan-reiterates-call-for-un-reform-for-fairer-world>):

<sup>36</sup> Stu *Vali Kaleji*. Iran and the 3+3 Regional Cooperation Format in the South Caucasus: Strengths and Weaknesses. “Eurasia Daily Monitor”, 16 June 2021, Vol. 18, Issue 96 (<https://jamestown.org/program/iran-and-the-33-regional-cooperation-format-in-the-south-caucasus-strengths-and-weaknesses/>):

վերջինիս հետ քաղաքական ու տնտեսական համագործակցության խորացման իրատեսական ռազմավարություն: Չինաստանի և Իրանի միջև կնքված երկարաժամկետ ներդրումային գործարքը<sup>37</sup> և ԵԱՏՄ–Իրան ազատ առևտրի գոտու ստեղծման վերաբերյալ համաձայնագրի ստորագրման հեռանկարը<sup>38</sup>, ինչպես նաև «Հյուսիս–Հարավ» միջանցքի համատեքստում՝ Պարսից ծոց–Սև ծով բազմատեսակ տրանսպորտային միջանցքի ստեղծման գործում Իրանի ունեցած դերը է՛լ ավելի են շեշտում Թեհրանի հետ ՀՀ հարաբերությունների խորացման անհրաժեշտությունը: Այս ուղղությամբ կարևոր քայլ կարող է լինել եռակողմ ձևաչափով Հայաստան–Իրան–Ռուսաստան համագործակցություն զարգացնելու վերաբերյալ Իրանին և Ռուսաստանին ՀՀ արած առաջարկությունը (Ադրբեջան–Իրան–Ռուսաստան և Ադրբեջան–Իրան–Թուրքիա ձևաչափերի առկայության հաշվառմամբ):

Նշենք, որ Իրանի շահերից չեն բխում ՀՀ-ի վրա Թուրքիայի ազդեցության լծակների մեծացումը և Հարավային Կովկասում նրա գերիշխանության հաստատումը, ուստի և Իրանն այս առումով շահագրգռված է ՀՀ-ի և ՌԴ-ի հետ համագործակցության խորացման մեջ: Սակայն լայն տարածաշրջանային համատեքստում Իրան–Թուրքիա բազմաշերտ հարաբերությունները (հայկական բաղադրիչը այդ բարդ փոխհարաբերության միայն մի կողմն է, ուստի և ՀՀ-ի հետ կապված շահերն Իրանի ավելի ընդգրկուն շահերի տեսանկյունից դառնում են երկրորդական) էապես նվազեցնում են Թուրքիայի, նաև Ադրբեջանի հետ Իրանի՝ խոր հակադրման մեջ մտնելու հավանականությունը: Այս տեսանկյունից չի կարելի գերազնահատել նաև տարածաշրջանում որպես Թուրքիային հակակշիռ հանդես գալու և ՀՀ-ին ուղղված սպառնալիքները լիարժեք կերպով չեզոքացնելու Իրանի ցանկությունն ու հնարավորությունները:

Հաշվի առնելով տարածաշրջանի և համաշխարհային անվտանգային ճարտարապետության ինտենսիվ վերափոխումները, ինչպես նաև հիմնական արտատարածաշրջանային դերակատարների (ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան) հետ Իրանի ու Թուրքիայի ոչ գծային և բարդ հարաբերությունների համակարգը՝ կարծում ենք, որ չափազանց խրթին է մեծ ռազմավարական անորոշությունների պայմաններում կատարել Իրան–Թուրքիա հարաբերությունների հետագա զարգացման վերաբերյալ երկարաժամկետ սցենարային կանխատեսումներ: Դրանց վրա էական ազդեցություն կգործի այն, թե ինչ դիրքավորում կունենան Թուրքիան և Իրանը ԱՄՆ–Ռուսաստան ու ԱՄՆ–Չինաստան խորացող դիմակայության նկատմամբ, և թե ինչ դեր նրանք կխաղան Վաշինգտոնի, Կրեմլի ու Պեկինի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նախագծերում: Սակայն պարզ է մի բան. երկու

<sup>37</sup> Stu “China, With \$400 Billion Iran Deal, Could Deepen Influence in Mideast”. “The New York Times”, 27 March 2021 (<https://www.nytimes.com/2021/03/27/world/middleeast/china-iran-deal.html>):

<sup>38</sup> Stu «EAЭС и Иран расширяют договоренности о свободной торговле». «Евразия. Эксперт», 22 июля 2021 (<https://eurasia.expert/eaes-i-iran-rasshiryat-dogovorennosti-o-svobodnoy-torgovle/>):

պետություններն էլ կշարունակեն օգտվել նոր ձևավորվող բազմաբևեռ աշխարհակարգից ու Միացյալ Նահանգների հարաբերական թուլացումից և, ըստ այդմ, Հարավային Կովկասում ու Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի պարտավորությունների և ներգրավվածության աստիճանական նվազումից: Այս համատեքստում առավել հավանական է, որ Իրանը և Թուրքիան ընդլայնեն տարածաշրջանում առաջնորդության համար իրենց պայքարը՝ միևնույն ժամանակ փորձելով կառավարել երկկողմ հարաբերությունները և հավասարակշռել տարածաշրջանում իրենց ունեցած շահերը:

СТРАТЕГИЧЕСКАЯ ОЦЕНКА ПОЗИЦИИ ИРАНА  
В ИРАНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЯХ ПОСЛЕ  
АРЦАХСКОЙ ВОЙНЫ 2020 ГОДА:  
ГЕОПОЛИТИЧЕСКОЕ СОПЕРНИЧЕСТВО,  
ИЛИ ПРАГМАТИЧНОЕ ВЗАИМОДЕЙСТВИЕ?

*Д. М. МАНАСЯН, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Победа, одержанная Азербайджаном при прямом военном участии Турции в Арцахской войне 2020 г., привела к серьезным изменениям в расстановке сил на Южном Кавказе. Сложившаяся архитектура безопасности в регионе требует нового осмысления в связи с открытым военно-политическим присутствием Турции, а также процессом вовлечения Южного Кавказа в Большой Ближневосточный геополитический регион.

В этих условиях особого внимания заслуживают отношения между Турцией и Ираном, как основными непосредственными акторами в Южно-Кавказском регионе, а также их взаимодействие с Россией и Китаем. В настоящее время Турция и Иран находятся в состоянии соперничества за гегемонию в регионе, а также – сотрудничества по отдельным вопросам. При этом их отношения на Южном Кавказе являются частью системы их взаимоотношений в Большом Ближневосточном регионе.

Угрозы для безопасности Ирана, связанные с интенсификацией присутствия Турции на Южном Кавказе, являющейся частью пантюркистской стратегии Турции по созданию «Великого Турана» с объединением тюркоязычных народов Центральной Азии, созданием на территории Армении коридора между Турцией и Азербайджаном, пролегающего вдоль северных границ Ирана, наличием террористических суннитских бандформирований на Южном Кавказе, контролируемых Турцией и привлеченных ею для участия в войне против

Республики Арцах, возможностью использования США и Израилем территории Азербайджана и его логистических возможностей для агрессии против Ирана, активизацией деятельности спецслужб Турции и Азербайджана на территории Ирана – среди тюркского населения Южного Азербайджана, – политикой Турции по переходу населения АЗР из шиизма в суннизм и, вместе с тем, сотрудничества между ИРИ и ТР по некоторым проблемам, в частности – Курдскому вопросу, – заставляют Иран проводить на Южном Кавказе сдержанную политику, избегая открытой конфронтации с тандемом Турция – Азербайджан.

## STRATEGIC ASSESSMENT OF IRAN'S ATTITUDE TOWARDS THE IRAN – TURKEY RELATIONS AFTER THE ARTSAKH WAR IN 2020: GEOPOLITICAL COMPETITION OR PRAGMATIC COOPERATION?

*D. M. MANASYAN, PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses,  
NDRU, MOD, RA*

### SUMMARY

Azerbaijan's victory in the Artsakh War in 2020, gained through Turkey's direct military involvement, led to major changes in the power balance in the South Caucasus. The security architecture, developed in the region, requires new understanding in connection with the Turkey's overt military-political presence, as well as with the process of involving the South Caucasus into the Greater Middle East geopolitical region.

Under such circumstances, Turkey – Iran relations, both being main immediate actors in the South-Caucasian Region, as well as their interaction with Russia and China deserve special attention. At present, Turkey and Iran are in the state of both competition for hegemony in the region, and cooperation in selected issues. Withal, their relations in the South Caucasus are part of their relationships in the Greater Middle East region.

Iran's security is challenged with threats concerned with the intensification of Turkey's presence in the South Caucasus, this being part of Turkey's pan-Turkic strategy of establishing the Great Turan; the consolidation of Turkic-speaking people of Central Asia; the establishment of corridor on the territory of Armenia between Turkey and Azerbaijan, lying along Iran's northern border; the presence of Sunni terroristic armed gangs in the South Caucasus, who were controlled and involved into the war against the Republic of Artsakh by Turkey; the possibility of using Azerbaijan's territory and logistic facilities by the USA and Israel to

perpetrate aggression against Iran; the enhancement of Turkey's and Azerbaijan's intelligence services activity in Iran, i. e., amid the Turkic population of Southern Azerbaijan; Turkey's policy in regards of Azerbaijani population conversion from Shia to Sunni Islam, and at the same time the cooperation between IRI and TR on some problems, namely – the Kurdish Issue. These threats do make Iran implement a moderate policy in the South Caucasus thus avoiding open confrontation with the Turkey – Azerbaijan tandem.

ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ  
ՔՐԴԱՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Վ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Տարածաշրջանային ռազմավարական  
վերլուծությունների կենտրոնի ավագ գիտնական-վերլուծաբան



Հարավային Կովկասի (Անդրկովկասի) երեք պետությունները (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) քրդական խնդրի վերաբերյալ չունեն միասնական դիրքորոշում ընդհանրապես, և Իրաքյան Քրդստանի ու նրան առնչվող զարգացումների վերաբերյալ՝ մասնավորապես: Մյուս կողմից՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով Քրդստանի Շրջանային Կառավարությունը (ՔՇԿ), իր հերթին, հարկադրված է Հարավային Կովկասի պետությունների նկատմամբ ցուցաբերել տարբերակված մոտեցում, քանզի ներքրդական հակասությունների և տարածաշրջանային հակամար-

տությունների պայմաններում չունի միասնական՝ հարավկովկասյան քաղաքականություն: Ավելին. Իրաքյան Քրդստանի երկու առաջատար կուսակցությունների՝ Քրդստանի ժողովրդավարական կուսակցության (ՔԺԿ) և Քրդստանի հայրենասիրական միության (ՔՀՄ) միջև եղած տարաբնույթ հակասությունները, համաշխարհային և տարածաշրջանային տարբեր դերակատարների ազդեցության ներքո գտնվելու հանգամանքը ինքնին հանգեցնում են այն բանին, որ ՔՇԿ զուգահեռվանագիտությամբ՝ (պարադիվանագիտություն) շրջանակներում դրսևորվում են ոչ միայն և ոչ այնքան ազգային կամ համաքրդական, որքան կուսակցական շահերը: Հետևաբար Հարավային Կովկասի երեք պետությունների նկատմամբ ՔՇԿ-ն և ՔՀՄ-ն ունեն տարբեր մոտեցումներ:

\* Չուգահեռվանագիտություն, կամ պարադիվանագիտություն (անգլ. *paradiplomacy*), հասկացությունն առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել 20-րդ դարի 80-ական թվականներին: Այն որպես քաղաքագիտության վերլուծական հասկացություն օգտագործելու առաջնայնությունը պատկանում է Մոնրեալի համալսարանի պրոֆեսոր Պանայոտիս Սոլդատոսին և Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր Իվո Դուխաչեկին: Չուգահեռվանագիտությունը կոչված է բնորոշելու ենթազգային դերակատարների (դաշնային միավորներ, տարածաշրջաններ կամ շրջաններ, քաղաքային համայնքներ, խոշոր քաղաքներ և այլն) վարած ուղղակի միջազգային գործունեությունը: «Չուգա» («պարա») նախածանցը ճշգրիտ կերպով է հաղորդում այն իմաստը, որ դա գործունեություն է, «որը դիվանագիտության մեջ ընթանում է ի հավելումն կենտրոնական իշխանությունների գործունեության և դրան զուգահեռաբար» (*Ivo Duchacek. Perforated Sovereignties: Towards a Typology of New Actors in International Relations.-in: "Federalism and International Relations. The Role of Subnational Units" Oxford 1990*):



Այդուհանդերձ, ՔՀԿ պաշտոնատար անձանց կարծիքով՝ թեև Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը ունեն Իրաքյան Քրդստանի հետ համագործակցության մեծ ներուժ, սակայն լիովին չեն իրագործել այն<sup>1</sup>:

Հարավկովկասյան պետությունները որոշակի զգուշավորություն են հանդես բերել ՔՀԿ-ի հետ պաշտոնական հարաբերությունների հաստատման հարցում և ընդհանուր առմամբ որդեգրել են սպասողական դիրքորոշում: ՔՀԿ հարցում հարավկովկասյան պետությունների դիրքորոշումը եղել է ոչ հստակ, իսկ քաղաքական քայլերը՝ ոչ այնքան ակտիվ նախաձեռնողական, որքան ռեակտիվ, այսինքն՝ որպես արձագանք (պատասխանական):

Հարավային Կովկասի պետություններ–ՔՀԿ հարաբերությունները պաշտոնապես զարգանում են Իրաքի Հանրապետության հետ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ունեցած միջպետական հարաբերությունների համատեքստում, ինչը կողմերի համար ոչ միայն որոշակի զսպող գործոն է, այլև Հարավային Կովկասի պետություններին ստիպում է հաշվի առնել Բաղդադ–Էրբիլ հակասությունների և տարածաշրջանային ու համաշխարհային տերություններ–ՔՀԿ առնչությունների բարդ շղթան:

Այդուհանդերձ, ժամանակ առ ժամանակ կողմերն ունենում են որոշակի շփումներ, որոնց հիմնական բովանդակությունը Հարավային Կովկասի պետություններում ՔՀԿ ներկայացուցչությունների և էրբիլում՝ Հարավային Կովկասի պետությունների հյուպատոսությունների բացման ու առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման խնդիրներն են: Պաշտոնատար անձանց շփումների տեսանկյունից հարավկովկասյան պետությունների շարքում ամենակատիվը Հայաստանի Հանրապետությունն է, որն առավել հետևողական գտնվեց էրբիլում ՀՀ Գլխավոր հյուպատոսության բացման հարցում: ՌԻստի նպատակահարմար ենք համարում ստորև ներկայացնել էրբիլում ՀՀ Գլխավոր հյուպատոսության և Հարավային Կովկասի երեք պետություններում ՔՀԿ ներկայացուցչությունների բացման գործընթացները՝ որպես այդ առնչությունների առավել ցայտուն դրսևորումների:

#### ԷՐԲԻԼՈՒՄ ՀՀ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայաստանի անկախացումից հետո Հայաստանի Հանրապետության և 1992 թ. ձևավորված Իրաքյան Քրդստանի ինքնավարության միջև պաշտոնական հարաբերություններ, բնականաբար, չեն եղել, թեև որոշակի շփումներ եղել են: Իսկ արդեն 2003 թ. Իրաքյան պատերազմից հետո, երբ իրաքյան նոր՝ 2005 թ. Սահմանադրության համաձայն Քրդստանի Շրջանային Կառավարությունը պաշտոնապես դարձավ Իրաքի դաշնային և ինքնավար միա-

<sup>1</sup> Տես Վահրամ Պետրոսյանի հարցազրույցը ՌԴ-ում և ԱՊՀ-ում Քրդստանի ժողովրդավարական կուսակցության ներկայացուցիչ Խոշավի Բաբաքրի հետ «Интервью: Армения пока только готовится сделать первые шаги в экономическом сотрудничестве с Курдистаном». «Kurdistan.Ru», 30.04.2015 ([http://kurdistan.ru/2015/04/30/news-23975\\_Intervyu\\_Armeniya\\_poka\\_tolko\\_gotovitsya\\_sdelat\\_pervye\\_shagi\\_v\\_ekonomicheskom\\_sotrudnichestve\\_s\\_Kurdistanom.html](http://kurdistan.ru/2015/04/30/news-23975_Intervyu_Armeniya_poka_tolko_gotovitsya_sdelat_pervye_shagi_v_ekonomicheskom_sotrudnichestve_s_Kurdistanom.html)):

վոր, Հայաստանի Հանրապետության և ՔՇԿ-ի միջև շփումները տեղի էին ունենում ՀՀ–Իրաք հարաբերությունների համատեքստում:

2012 թվականին թե՛ Քրդստանի Շրջանային Կառավարության, թե՛ Հայաստանի Հանրապետության պաշտոնատար անձինք սկսեցին խոսել էրբիլում ՀՀ հյուպատոսություն բացելու Հայաստանի մտադրության մասին: Թեև այս հարցի փակ և բաց քննարկումների ընթացքում բազմաթիվ փորձագետների կարծիքները այս քայլի օգտին էին, սակայն պաշտոնատար անձինք իրաքցի քուրդ գործընկերների հետ հանդիպումների ժամանակ ցուցաբերում էին զգուշավորություն: Մասնավորապես՝ 2012 թ. ՀՀ փոխվարչապետ Արմեն Գևորգյանի՝ էրբիլ կատարած այցի ժամանակ քրդական կողմն առաջ քաշեց էրբիլում ՀՀ Պատվավոր հյուպատոսություն բացելու տարբերակը: ՔՇԿ-ն, ինչպես նշում էր ՌԴ-ում ՔԺԿ ներկայացուցիչ Խոշավի Բաբաքըրը, նույնիսկ «անդում էր» հիշյալ տարբերակի վրա: Քուրդ պաշտոնյաները համարում էին, որ Հայաստանը՝ որպես «այդքան մոտ գտնվող, քրդերի հետ այդքան երկարատև պատմական կապեր ունեցող երկիր, պետք է առաջիններից մեկը հոգ տաներ Քրդստանում իր հյուպատոսությունը բացելու մասին»<sup>2</sup>:

Քրդական շրջանն Իրաքի հյուսիսում դարձել էր ոչ միայն փաստացի, այլև իրավապես ինքնավար դաշնային միավոր: Նման պայմաններում Հայաստանի Հանրապետությունն ուներ էրբիլում իր ներկայությունը նման ձևով հաստատելու մի շարք պատճառներ և ավելի քիչ պատճառներ՝ դա չանելու համար: Սակայն տվյալ հարցի լուծումը, այն է՝ պաշտոնական ներկայության ապահովմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, հետաձգվեց շուրջ տասնվեց տարով (2005–2020/2021 թթ.): Տեսականորեն, եթե Հայաստանի Հանրապետությունը և Իրաքյան Քրդստանը ձեռնարկեին այդ քայլը կամ առնվազն այդ հարցի քննարկումներն սկսեին իրաքյան նոր Սահմանադրության ընդունումից անմիջապես հետո, ՀՀ-ն ու ՔՇԿ-ն, թերևս, միմյանց համար կլինեին ավելի արժեքավոր գործընկերներ: Սակայն միայն սուբյեկտիվ իրողությունների (ՀՀ և ՔՇԿ պասիվության) պատճառով չէ, որ կոնկրետ քայլերը ձեռնարկվեցին շուրջ տասը տարի անց. կային նաև սկզբունքային մոտեցումներ և իրավական արգելքներ: Իրաքում իր դեսպանությունը վերաբացած՝ Հայաստանի Հանրապետությունը ՔՇԿ տարածքում (մասնավորապես՝ էրբիլում) հյուպատոսության բացումից առաջ ցանկանում էր, նախ, լիարժեք

<sup>2</sup> Տես «Признание права на самооборону курдов облегчило задачу Башара Асада: интервью Хошави Бабакра». ИА «REGNUM», 30 ноября 2012 (<https://regnum.ru/news/polit/1599182.html>):

<sup>\*</sup> 2003 թ. Իրաքում ռազմական գործողությունների վերսկսման պատճառով երկու պետությունների մայրաքաղաքներում գործող դիվանագիտական ներկայացուցչությունները ժամանակավորապես դադարեցրին իրենց գործունեությունը: 2010 թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը վերստին բացեց Բաղդադում իր դեսպանատունը: Սակայն Երևանում Իրաքի դեսպանությունը իր գործունեությունը վերսկսեց միայն 2012 թվականի դեկտեմբերին:

հիմքերի վրա տեսնել հայ-իրաքյան հարաբերությունները՝ համարելով, որ պետք է նախապես Երևանում վերաբացվեր Իրաքի դեսպանատունը: Երևանում Իրաքի դեսպանատան բացակայությունը իրավական տեսանկյունից արգելք չէր երբիլում ՀՀ հյուպատոսության բացման համար, եթե, իհարկե, տվյալ հարցում ՀՀ-ն և Իրաքը ծեռք բերեին փոխհամաձայնություն: Սակայն երբիլում ՀՀ հյուպատոսության բացումը հայկական կողմը ուղղակիորեն կամ սկզբունքորեն կապում էր Երևանում Իրաքի դեսպանատան վերաբացման հետ: ՔՇԿ-ն, իր հերթին, իրավական տեսանկյունից ընդհանրապես չէր կարող ներկայացուցչություն բացել Երևանում, քանի դեռ չէր վերաբացվել ՀՀ-ում Իրաքի դեսպանատունը:

Նշենք, որ Իրաքի նոր Սահմանադրության համաձայն՝ Քրդստանի Շրջանային Կառավարության իշխանություններն իրավունք ունեն ներկայացուցչություններ բացելու բոլոր այն պետություններում, որտեղ գործում են Իրաքի դեսպանատները: Իրաքի Հանրապետության 2005 թ. Սահմանադրության համապատասխան հոդվածում (121-րդ հոդվածի, 4-րդ կետ) նշվում է. «Շրջաններն ու նահանգները պետք է ներկայացուցիչներ ունենան դեսպանատներում և դիվանագիտական առաքելություններում՝ մշակութային և սոցիալական հարաբերությունների զարգացման նպատակով»<sup>3</sup>: Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվեցին 2000 թ. Մոսկվայում ստորագրված արձանագրության համաձայն: Նույն՝ 2000 թ., Բաղդադում բացվեց Հայաստանի դեսպանությունը, իսկ 2001 թ.՝ Երևանում Իրաքինը<sup>4</sup>:

Սակայն Հայաստանի Հանրապետությունը շարունակում էր այս հարցում դրսևորել զգուշավոր ու սպասողական մոտեցում՝ հաշվի առնելով ինչպես հիմնախնդիրների արտաքին շղթան, այնպես էլ Իրաքի և արաբական աշխարհի այլ պետությունների հետ իր հարաբերությունները և հայկական համայնքների առկայության գործոնը:

2014 թ. փետրվարին Իրաք կատարած իր պաշտոնական այցի շրջանակներում ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանը հայտարարեց, որ Հայաստանն իր Գլխավոր հյուպատոսությունը կբացի Երբիլում<sup>5</sup>: Իսկ արդեն 2015 թ. փետրվարի 7-ին Մյունխենում կայացավ ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանի հանդիպումը Իրաքյան Քրդստանի Նախագահ Մասուդ Բարզանուի հետ, որտեղ վերջնականապես հստակեցվեց Երբիլում ՀՀ Գլխավոր

<sup>3</sup> Տես «Конституция Республики Ирак (Приложение 1)». *Фалых Исмаил Хачим*. Конституционное право стран Ближнего Востока и Северной Африки (Алжир, Египет, Израиль, Иран, Кувейт, Марокко, ОАЭ, Сирия). М., 2009, с. 219:

<sup>4</sup> ՀՀ-ԻՀ հարաբերությունների մասին տես «Երկկողմ հարաբերություններ՝ Իրաք: Ընդհանուր տեղեկություններ»: ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք (<http://mfa.am/hy/country-by-country/iq/>):

<sup>5</sup> Տես «Իրաքը պատրաստ է Հայաստանի հետ հարաբերությունների զարգացման մեծ քայլերի»: «Էկոնոմիկա հանդես», 18.02.2014 ([http://armef.com/hy/news/ishkhanutyun/article\\_1392729980/](http://armef.com/hy/news/ishkhanutyun/article_1392729980/)):

հյուպատոսություն բացելու որոշումը<sup>6</sup>: Հյուպատոսության բացումը նախատեսված էր 2015 թ. հունիսին: Սակայն այս դեպքում էլ ժամկետները չպահպանվեցին նույնիսկ ՀՀ ԱԳ նախարարի հայտարարությունից հետո, ինչը որոշ հայ վերլուծաբաններ փորձեցին բացատրել Հայաստանի արտաքին քաղաքականության ինքնուրույնության աստիճանով: Մասնավորապես՝ դեռ 2014 թ. ժիրայր Լիպարիտյանը նշում էր. «Ինձ համար պարզ չէ, թե ինչու Հայաստանի Հանրապետությունը դեռևս չունի Երբիլում պաշտոնական դիվանագիտական ներկայություն, ինչը կարող էր հեշտացնել ԲԿԿ տարածքում ինչպես տեղացի հայերի, այնպես էլ Իրաքի մյուս հատվածներից եկած հայ փախստականների կյանքը, ինչպես նաև դյուրացնել քրդական իշխանությունների հետ աշխատանքը՝ տարածաշրջանի անվտանգության, կայունության և զարգացման նպատակով: Հնարավոր է, որ մենք պետք է Հայաստանի արտգործնախարարի խոստացած հյուպատոսության հաստատման ծախսերում բացատրելու համար դիտարկենք Հայաստանի արտաքին քաղաքականության անկախության աստիճանը»<sup>7</sup>:

Մենք հակված չենք ընդունելու այդ բացատրությունը, քանզի այն պետությունները, որոնց կարծիքը ՀՀ-ն տեսականորեն կարող էր հաշվի առնել, վաղուց ներկայացված էին Երբիլում և/կամ Սուլեյմանիեում: Մեր կարծիքով՝ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Գլխավոր հյուպատոսություն բացելու կարգի հետ կապված հարցերը պահանջում են լուրջ քննարկումներ ու ժամանակ: Ըստ մեզ՝ հյուպատոսության բացման ձգձգումը հիմնականում կապված էր անվտանգության ապահովման պրոբլեմի (Իսլամական Պետության գործոնի ծայրահեղ ակտիվացման)<sup>\*</sup>, ֆինանսական խնդիրների,

<sup>6</sup> Տես «Հայաստանի արտգործնախարարը հանդիպեց Քրդստանի ինքնավարության նախագահին», 07.02.2015 ([http://mfa.am/hy/press-releases/item/2015/02/07/min\\_iraq\\_kurd/](http://mfa.am/hy/press-releases/item/2015/02/07/min_iraq_kurd/)), նաև՝ «Глава МИД Армении провел встречу с Президентом Иракского Курдистана». ИА «REGNUM», 8 февраля 2015 (<http://www.regnum.ru/news/polit/1893000.html>):

<sup>7</sup> Տես *Hrant Gadarigian*. Armenia and Iraqi Kurdistan: Why Doesn't Yerevan Have Diplomatic Representation in Erbil? "HETQ.am", 4 November 2014 (<http://hetq.am/eng/news/57174/armenia-and-iraqi-kurdistan-why-doesnt-yerevan-have-diplomatic-representation-in-erbil.html>):

<sup>\*</sup> Մասնավորապես՝ 2014 թ. օգոստոսին ԱՄՆ-ը Բաղդադից և Երբիլից դուրս բերեց իր դեսպանատան և Գլխավոր հյուպատոսության աշխատողների մի մասին՝ նրանց ժամանակավորապես տեղաբաշխելով Բասրայում գործող ԱՄՆ-ի Գլխավոր հյուպատոսությունում և Ամմանում (Հորդանան) գործող Իրաքին աջակցության շտաբում, ինչը պայմանավորված էր անվտանգության շարժառիթներով. Իսլամական Պետության զինյալները ձեռնարկել էին զանգվածային հարձակում Երբիլի ուղղությամբ, որին հետևել էին այդ զինյալներին հասցվող ամերիկյան ավիացիոն հարվածները: Սակայն թե՛ Բաղդադում գործող ԱՄՆ-ի դեսպանատունը, թե՛ Երբիլում գործող հյուպատոսությունը չփակվեցին և շարունակում էին գործել (տես «США эвакуировали часть сотрудников генконсульства из иракского Эрбиля». «Коммерсантъ», 11.08.2014 (<http://www.kommersant.ru/doc/2542892>); նաև՝ «США эвакуировали часть сотрудников консульства из Ирака». «Петербургский Дневник», 11.08.2014 (<http://www.spbdnevnik.ru/news/2014-08-11/ssha-evakuirovali-chast-sotrudnikov-konsulstva-iz-iraka/>):

տնտեսական գործոնի (ՀՀ-ՔՀԿ ապրանքաշրջանառության նվազ ծավալներ, առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարների հարցում երաշխիքներ չլինելը), ինչպես նաև զուտ տեխնիկական բնույթի (ՔՀԿ հատկացրած տարածքում հյուպատոսության շենքի կառուցում կամ տարածքի վարձակալում, հյուպատոսի թեկնածության անորոշություն և այլն) հարցերի հետ:

Այդուհանդերձ, տվյալ խնդիրը շարունակում էր մնալ ՀՀ Նախագահի և ԱԳՆ օրակարգում: Որպես արդյունք՝ ՀՀ Կառավարության 2017 թ. մարտի 2-ի նիստում քննարկվեց ու հաստատվեց «Իրաքի Հանրապետության էրբիլ քաղաքում Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի նախագիծը:

ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի ներկայացրած նախագծի հիմնավորման մեջ նշվում էր, որ Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև հարաբերություններում վերջին 5–6 տարիների ընթացքում կա էական առաջընթաց. «Երևանում վերաբացվել է Իրաքի Հանրապետության դեսպանությունը, գումարվել են տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան համատեղ միջկառավարական հանձնաժողովի նիստեր, գործարար համաժողովներ, բացի այդ, տարեցտարի աճում է երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը, զբոսաշրջային ժամանակահատվածում գործում են ուղիղ ավիաչվերթներ Բաղդադ-Էրբիլ-Երևան ուղղություններով»<sup>8</sup>:

Նախագծում նշվում էր նաև, որ արդյունավետ երկկողմ համագործակցություն զարգացնելու անհրաժեշտության, Քրդստանում հայ համայնքի էլ ավելի ստվարանալու միտումների, ինչպես նաև առևտրատնտեսական գործունեությամբ զբաղվող հայ ձեռներեցների շահերի, ապրանքաշրջանառության կայուն աճման հանգամանքների հաշվառմամբ ու Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև հայտագրերի փոխանակման միջոցով ձեռք բերված համաձայնության հիմքով՝ նպատակահարմար է էրբիլում հիմնել ՀՀ Գլխավոր հյուպատոսություն<sup>9</sup>:

Ի վերջո, 2017 թ. մարտի 13-ին ՀՀ Նախագահն ստորագրեց «Իրաքի Հանրապետության էրբիլ քաղաքում Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն ստեղծելու մասին» հրամանագիրը, որում, մասնավորապես, ասվում էր. «Հիմք ընդունելով «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ որոշում եմ. Իրաքի Հանրապետության էրբիլ քաղաքում ստեղծել Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն՝ հյուպատոսական

<sup>8</sup> Տես «Իրաքի էրբիլ քաղաքում Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն կհիմնվի»: «Այսօր», 01.03.2017 (<https://www.aysor.am/am/news/2017/03/01/էրբիլ-Հայաստան/1220242>):

<sup>9</sup> Տես նույն տեղում:

շրջանում ընդգրկելով Քրդստանի տարածաշրջանը (Երբիլ, Սուլեյմանիա, Դոհուկ)»<sup>10</sup>:

Սակայն միայն 2020 թվականի սեպտեմբերի սկզբին Երբիլում սկսեց գործել ՀՀ Գլխավոր հյուպատոսությունը, մինչդեռ պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ 2021 թ. փետրվարի 24-ին:

ՔՀԿ տարածքում ներկայումս (2021 թ. վերջի դրությամբ) գործում են 42 արտասահմանյան ներկայացուցչություններ<sup>11</sup>: Սակայն Հարավային Կովկասի պետությունների շարքում Հայաստանի Հանրապետությունը միակն է, որ ՔՀԿ տարածքում (պաշտոնապես՝ Իրաքի Հանրապետության Երբիլ քաղաքում) բացեց իր Գլխավոր հյուպատոսությունը:

Վրաստանը ներկայումս դիտարկում է Երբիլում Վրաստանի հյուպատոսության բացման հարցը<sup>12</sup>: Ըստ տեղեկությունների՝ նա Երբիլում կբացի ինչպես իր Պատվավոր հյուպատոսությունը, այնպես էլ առևտրային ներկայացուցչությունը<sup>13</sup>: Մինչդեռ Ադրբեջանի արտաքին քաղաքական օրակարգում այդ խնդիրը չի քննարկվում, թեև հետևողական քայլեր են ձեռնարկվում ՔՀԿ-ի հետ տնտեսական հարաբերությունները խորացնելու ուղղությամբ:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՔՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԲԱՑԵՆՈՒ ԽՆԴԻՐԸ

Հարավային Կովկասում և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում, ՔՀԿ ներկայացուցչություններ բացելու խնդիրը որոշակիորեն կապված է Ռուսաստանի Դաշնությունում ՔՀԿ ներկայացուցչության բացման հետ: Ռուսաստանի Դաշնությունում Քրդստանի Շրջանային Կառավարության ներկայացուցչության պաշտոնական կայքէջում այդ խնդրի վերաբերյալ համառոտակի նշվում է, որ «Ռուսաստանի Դաշնությունում Քրդստանի Շրջանային Կառավարության ներկայացուցչությունն իր աշխատանքը սկսել է 2013 թվականին: Պարոն Ասո Թալաբանին Ռուսաստանում ներկայացնում էր Քրդստանի Շրջանային Կառավարությունը մինչև 2017 թվականի վերջը: Նրա պաշտոնավարման ժամկետը լրանալուց հետո Ռուսաստանում Քրդստանի Շրջանային Կառավարության ներկայացուցչի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել պարոն Դանար Մուստաֆան: Ռուսաստանում Քրդստանի Շրջանային Կառավարության ներկայացուցչությունը գոր-

<sup>10</sup> Տես ՀՀ Նախագահի 2017 թ. մարտի 13-ի «Իրաքի Հանրապետության Երբիլ քաղաքում Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն ստեղծելու մասին» հմ. ՆՀ-288-Ս հրամանագիրը (<https://www.president.am/hy/decrees/item/3670/>):

<sup>11</sup> Տես Հավելված 1:

<sup>12</sup> Տես "Georgia to open consulate in Kurdistan Region: official". "Zhyan", 04.06.2021 (<https://zhyan.co/En/news.aspx?id=1151&mapid=1>): "Georgian Consulate to be opened in Kurdistan Region". "PUKmedia", 06.06.2021 (<https://www.pukmedia.com/EN/details/?Jimare=67124>):

<sup>13</sup> Տես «Грузия откроет Почетное консульство и торговое представительство в Курдистане». «RiaTaza.com» 05.06.2021 (<https://riataza.com/2021/06/05/gruziya-otkroet-pochetnoe-konsulstvo-i-torgovoe-predstavitelstvo-v-kurdistane/>):

ծում է Իրաքի Քրդստանի Շրջանային Կառավարության Արտաքին կապերի վարչության ղեկավարությամբ: Մեր առաքելությունն է՝ զարգացնել մշակութային, առևտրային, դիվանագիտական և հասարակական կապերն Իրաքյան Քրդստանի և Ռուսաստանի միջև»<sup>14</sup>:

Այդուհանդերձ, ՌԴ-ում ԲՇԿ ներկայացուցչությունն ունեցել է նաև իր ոչ պաշտոնական կամ առնվազն փաստացի գործունեության փուլը:

Դեռ 1998 թվականին ՌԴ այն ժամանակվա Վարչապետ Եվգենի Պրիմակովի նախաձեռնությամբ Ռուսաստանի ԱԳՆ-ն Մոսկվա հրավիրեց Իրաքյան Քրդստանի պատվիրակությանը, որի կազմում էին հայտնի քաղաքական գործիչ Հոշիար Ջեբարին և Իրաքյան Քրդստանի փոխվարչապետ Սամի Աբդուլ Ռահմանը: Հանդիպումից հետո երբիլում որոշում կայացվեց Մոսկվայում Իրաքյան Քրդստանի մշտական ներկայացուցիչ նշանակելու մասին: 2000 թ. այդ պաշտոնը ստանձնեց Խոշավի Բաբաբըրը, որի հայրը լեգենդար Մուստաֆա Բարզանու զինակիցն էր, և որն ուսում էր առել Խորհրդային Միությունում (Կիևում): Նա Մոսկվայում իր աշխատանքն սկսեց որպես ԱՊՀ երկրներում Քրդստանի Շրջանային Կառավարության և անմիջականորեն Մասուդ Բարզանու անձնական ներկայացուցիչ: Իսկ նրա օգնականի պաշտոնն ստանձնեց հասարակական գործիչ Յուրի Նաբիևը: Հասկանալի է, որ սկզբնական շրջանում՝ նախքան Քրդստանի ժողովրդավարական կուսակցության ու Քրդստանի հայրենասիրական միության վարչակարգերի միավորումը, Մոսկվայում ԲՇԿ ներկայացուցչությունը գերազանցապես ներկայացնում էր ԲԺԿ-ն: Թեև ներկայացուցչությունը պաշտոնապես չունեւր և չէր կարող ունենալ դիվանագիտական առաքելության կարգավիճակ, սակայն փաստացի վարում էր նմանատիպ գործունեություն և գերազանցապես զբաղված էր քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերի խորացմամբ, ինչպես նաև աջակցում էր Ռուսաստանում և ԱՊՀ այլ տարածքներում գործող քրդական համայնքներին<sup>15</sup>:

Այսպիսով՝ Մոսկվայում Իրաքյան Քրդստանի ներկայացուցչությունը նպատակադրված էր իր գործունեությունը ծավալելու ամբողջ ԱՊՀ տարածքում: Պատահական չէ, որ ավելի ուշ Խոշավի Բաբաբըրը արդեն պաշտոնապես հանդես էր գալիս որպես ՌԴ-ում և ԱՊՀ երկրներում Իրաքյան Քրդստանի Շրջանային Կառավարության ներկայացուցիչ: Այնուհետև Խոշավի Բաբաբըրը թողեց այդ պաշտոնը և ներկայումս ԲԺԿ ներկայացուցիչն է միայն ՌԴ-ում<sup>16</sup>: Ինչ վերաբերում է Մոսկվայում Իրաքյան Քրդստանի ներկայա-

<sup>14</sup> Մեջբերումը համաձայն՝ «История представительства ПРК в России». Региональное Правительство Курдистана, Представительство в Российской Федерации (<https://krgrossia.ru/ru/history-of-krq-russia-representation/>):

<sup>15</sup> Տես *Ризган Гердензери*. Интервью с Юрием Набиевым!, 19 Июнь 2006 (<http://www.ezdixane.ru/2006/06/19/интервью-с-юрием-набиевым/>):

<sup>16</sup> Տես «Иракский Курдистан: текущая ситуация». Пресс-конференция. МИА «Россия сегодня», 22 ноября 2013 (<http://pressmia.ru/pressclub/20131122/948672796.html>):

ցուցչությանը, ապա այն նույնպես պաշտոնապես վերածվեց ՌԴ-ում ՔՀԿ ներկայացուցչության, այսինքն՝ «ԱՊՀ պետություններում ՔՀԿ-ն ներկայացնելու» ձևակերպումը պաշտոնապես հանվեց\*:

Իրավական տեսանկյունից Մոսկվայում գործող ՔՀԿ և ՔԺԿ ներկայացուցչությունները չեն կարող կոչվել ՌԴ-ում և ԱՊՀ երկրներում Քրդստանի Շրջանային Կառավարության կամ Քրդստանի ժողովրդավարական կուսակցության ներկայացուցչություններ, քանի որ ներկայացուցչություն բացելու համաձայնությունը ձեռք է բերվել բացառապես ՌԴ-ի հետ\*\*:

Կարևորվում է նաև մեկ այլ իրողություն. այն, որ թե՛ ՔՀԿ, թե՛ Սիրիական Քրդստանի (մասնավորապես՝ ԴՄԿ) ներկայացուցչությունները Մոսկվայում գործում են որպես հասարակական կազմակերպություններ, քանզի ՌԴ-ում գործող օրենքների համաձայն՝ չճանաչված պետությունները չեն կարող ունենալ պաշտոնական ներկայացուցչություններ:

Այդուհանդերձ, 2006 թվականից Իրաքյան Քրդստանի ղեկավար շրջաններում ակտիվորեն քննարկվում էր Հարավային Կովկասում Քրդստանի Շրջանային Կառավարության ներկայացուցչություն կամ ներկայացուցչություններ բացելու հարցը: Սկզբնական շրջանում ՔՀԿ-ն ավելի հակված էր Հարավային Կովկասի երեք հանրապետություններում՝ Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում, բացելու երեք առանձին ներկայացուցչություններ: Սակայն հետագայում, հաշվի առնելով թուրք-ադրբեջանական հարաբերությունները (Իրաքյան Քրդստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները սրված էին, իսկ Ադրբեջանի դիրքորոշումը չէր կարող էապես տարբերվել թուրքականից, քանզի Բաքուն չէր կարող անտեսել Իրաքյան Քրդստանի վերաբերյալ Անկարայի տեսակետը) ու Ղարաբաղյան հակամարտությունը,

\* Որոշակի ժամանակահատվածում ՌԴ-ում ՔՀԿ ներկայացուցչին էր «Քրդստանի Հայրենասիրական միություն» կուսակցության անդամ Ասո Ջանգի Բուրհան Թալաբանին, իսկ ներկայացուցչությունը պաշտոնապես կոչվում էր «ՌԴ-ում Քրդստանի Շրջանային Կառավարության ներկայացուցչություն» («Представительство Регионального Правительства Курдистана в РФ»): Այժմ ներկայացուցչության պաշտոնական անվանումն է՝ «ՌԴ-ում Քրդստանի Շրջանային Կառավարության ներկայացուցչություն» (Представительство Правительства Региона Курдистан (ПРК) в Российской Федерации), թեև զուգահեռաբար կիրառվում է նաև «ՌԴ-ում Քրդստանի Շրջանային ներկայացուցչություն» (Представительство Региона Курдистан в Российской Федерации), իսկ ՌԴ-ում Քրդստանի Շրջանային Կառավարության ներկայացուցչի ժամանակավոր պաշտոնակատարն է Քրդստանի ժողովրդավարական կուսակցությունը ներկայացնող Դանար Մուստաֆան: Միջքրդական, միջկուսակցական հակասությունների պայմաններում կարևորվում է նաև արտերկրում ՔՀԿ ներկայացուցչի կուսակցական պատկանելությունը:

\*\* Տեսականորեն, եթե Իրաքը (ներառյալ՝ ՔՀԿ-ն) համապատասխան համաձայնություն ձեռք բերեր, օրինակ, ՀՀ-ի հետ, Մոսկվայում քրդական ներկայացուցչությունը կարող էր կոչվել «ՌԴ-ում և ՀՀ-ում ՔՀԿ ներկայացուցչություն, նստավայրը՝ Մոսկվա»: Սակայն քանի դեռ ՔՀԿ-ն և ՔԺԿ-ն պաշտոնապես չունեն ԱՊՀ պետություններում առանձին ներկայացուցչություններ, թե՛ ՔՀԿ, թե՛ ՔԺԿ ներկայացուցչները Մոսկվայում փաստացի ներկայացնում են վերջիններիս ոչ միայն ՌԴ, այլև ԱՊՀ պետությունների տարածքում:



Իրաքյան Քրդստանի ղեկավարությունը վերանայեց իր այս տեսակետն ու որոշեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում բացել Հարավային Կովկասում ՔՇԿ մեկ ներկայացուցչություն: Սակայն այս ծրագիրը նույնպես չիրականացվեց, քանի որ 2006 թ. աշնանը և 2008 թ. օգոստոսին Վրաստանում տիրող իրավիճակը կտրուկ կերպով սրվեց: Գործընթացն առժամանակ դադարեցվեց, և ՔՇԿ-ն կրկին վերադարձավ Հարավային Կովկասի երեք հանրապետություններում երեք առանձին ներկայացուցչություններ բացելու տարբերակին<sup>17</sup>:

Երբիլում ՀՀ Գլխավոր հյուպատոսության բացմանը նախորդած փուլում Իրաքյան Քրդստանի իշխանությունները դիտարկում էին Երևանում ՔՇԿ ներկայացուցչության բացման խնդիրը: Մինչդեռ Թբիլիսիի և Բաքվի հարցը օրակարգում չէ:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՔՇԿ տարածքում օտարերկրյա պետությունների ու միջազգային կառույցների ներկայացուցչությունները (Գլխավոր հյուպատոսություններ, հյուպատոսություններ, Պատվավոր հյուպատոսություններ, առևտրային գրասենյակներ, համագործակցության գործակալություններ և այլն) կարող են բացվել միայն Իրաքի կենտրոնական իշխանությունների թույլտվությամբ, մինչդեռ ՔՇԿ ներկայացուցչությունները կարող են բացվել այն պետություններում, որտեղ գործում են Իրաքի դեսպանությունները: Հետևաբար Երբիլում հյուպատոսությունների բացումը կարևորվում է տվյալ պետության և Իրաքի միջև քաղաքական, տնտեսական ու ֆինանսական, հատկապես՝ ներդրումային, ինչպես նաև մշակութային ու կրթական բնագավառներում երկկողմ հարաբերությունների հաստատման համատեքստում: Մինևույն ժամանակ, Իրաքյան Քրդստանը ձգտում է դառնալու միջազգային հանրության անդամ և արդեն իր ներկայացուցչություններն է բացել 14 պետություններում: Այդ ուղղությամբ ՔՇԿ ձեռնարկած հետևողական աշխատանքը ավելի քան տպավորիչ է: Եթե 2011 թ. հունիսի դրությամբ Իրաքյան Քրդստանի տարածքում իրենց պաշտոնական ներկայացուցչություններն էին բացել շուրջ 20 պետություններ և միջազգային կառույցներ, ապա 2021 թ. վերջի դրությամբ այդ թիվը (գերազանցապես՝ մայրաքաղաք Երբիլում, ինչպես նաև Սուլեյմանիեում) հասել է 42-ի, ընդսմին շուրջ 50 %-ը Գլխավոր հյուպատոսություններ են: Հարավային Կովկասի պետությունների շարքում Հայաստանի Հանրապետությունը միակն է, որ ՔՇԿ տարածքում (պաշտոնապես՝ Իրաքի Հանրապետության Երբիլ քաղաքում) ունի իր Գլխավոր հյուպատոսությունը:

Վրաստանը ներկայումս դիտարկում է Երբիլում հյուպատոսություն բացելու հարցը: Ադրբեջանի արտաքին քաղաքական օրակարգում Երբիլում

<sup>17</sup> *Տես Գյուլնարա Ինանջ. Կурдистан откроет свои представительства. «Новости-Азербайджан», 22.01.2007 (<http://newsazerbaijan.ru/newsaz/20070122/41616797.html>):*

հյուպատոսության բացման խնդիրը չի դիտարկվում, սակայն հետևողական քայլեր են ձեռնարկվում ՔՀԿ-ի հետ տնտեսական հարաբերությունները խորացնելու ուղղությամբ:

Իր հերթին, ՔՀԿ-ն Հարավային Կովկասի պետություններում չունի ներկայացուցչություններ: Իրաքյան Քրդստանի իշխանությունները դիտարկում են Երևանում ՔՀԿ ներկայացուցչության բացման խնդիրը: Մինչդեռ Թբիլիսիում և Բաքվում ՔՀԿ ներկայացուցչությունների բացման հարցն օրակարգում չէ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

**ՔՀԿ տարածքում գործող արտասահմանյան ներկայացուցչությունները.**

***Աֆրիկա***

1. Եգիպտոսի Արաբական Հանրապետության հյուպատոսություն,
2. Սուդանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն:

***Ամերիկա աշխարհամաս***

1. Ամերիկայի Միացյալ Նահանգների Գլխավոր հյուպատոսություն,
2. Կանադայի դեսպանատան գրասենյակ:

***Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան***

1. Թուրքիայի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն\*\*,
2. Կորեայի Հանրապետության հյուպատոսություն,
3. Ճապոնիայի հյուպատոսական գրասենյակ,
4. Շրի Լանկայի Դեմոկրատական Սոցիալիստական Հանրապետության Պատվավոր հյուպատոսություն,
5. Հնդկաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն,
6. Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն,
7. Կորեայի միջազգային համագործակցության գործակալություն,
8. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն,
9. Կիպրոսի Հանրապետության Պատվավոր հյուպատոսություն:

\* Ֆինանսական ձգնաժամի ու խնայողության միջոցառումների պատճառով 2021 թ. Սուդանի Կառավարությունը որոշեց առժամանակ դադարեցնել իր գործունեությունը ՔՀԿ-ում և փակել Էրբիլում Գլխավոր հյուպատոսությունը, որը կվերաբացվի ֆինանսական վիճակի բարելավումից և վերոնշյալ պատճառների վերանալուց հետո (տես «Дипломатические представительства в Курдистане». Региональное Правительство Курдистана, Представительство в Российской Федерации (<https://krgrossia.ru/ru/diplomatic-representations-in-kurdistan/>)):

\*\* ՔՀԿ տարածքում գործող արտասահմանյան ներկայացուցչությունները նշվում են համաձայն ՔՀԿ արտաքին հարաբերությունների դեպարտամենտի պաշտոնական կայքէջի, որտեղ Թուրքիայի Հանրապետության Գլխավոր հյուպատոսությունն ու Կիպրոսի Հանրապետության Պատվավոր հյուպատոսությունը նշվում են «Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան» (*Asia and Pacific*) կարգախմբում:

**Եվրոպա**

1. Ուսաստանի Դաշնության Գլխավոր հյուպատոսություն,
2. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն,
3. Ֆրանսիայի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն,
4. Սեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Գլխավոր հյուպատոսություն,
5. Չեխիայի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն,
6. Հունգարիայի Գլխավոր հյուպատոսություն,
7. Նիդերլանդների Թագավորության Գլխավոր հյուպատոսություն,
8. Իտալիայի Հանրապետության հյուպատոսություն,
9. Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն,
10. Հունաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն,
11. Շվեդիայի Թագավորության դեսպանատան գրասենյակ,
12. Ռումինիայի հյուպատոսական գրասենյակ,
13. Լեհաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն,
14. Ավստրիայի Հանրապետության առևտրային գրասենյակ,
15. Բուլղարիայի Հանրապետության կոմերցիոն գրասենյակ,
16. Եվրոպական Միություն պատվիրակություն - Երբիլի կապի գրասենյակ,
17. Իսպանիայի Թագավորության Պատվավոր հյուպատոս,
18. Ղանիայի Թագավորության Պատվավոր հյուպատոս,
19. Բելառուսի Հանրապետության Պատվավոր հյուպատոս\*,
20. Սլովակիայի Հանրապետության Պատվավոր հյուպատոս,

\* 2021 թ. Բելառուսա-լեհական սահմանին Իրաքից և Իրաքյան (Հարավային) Քրդստանից Եվրոպա մեկնել ցանկացող հազարավոր քրդերի սպասումը ոչ միայն առաջացրեց լարվածություն ԵՄ-Բելառուս հարաբերություններում, այլև հայտնվեց համաշխարհային պրոբլեմների ցանկում: ԵՄ-ի ձնշման ներքո Իրաքը 2021 թ. օգոստոսին դադարեցրեց Բաղդադից Մինսկ ուղիղ չվերթները: Այնուամենայնիվ, միգրանտներն սկսեցին անցնել Բելառուս՝ ԱՄԷ-ի կամ Թուրքիայի տարածքով:

Արտագաղթի աճումը կանխելու նպատակով Իրաքի արտաքին գործերի նախարարության որոշմամբ 2021 թ. նոյեմբերի 6-ին փակվեցին Բելառուսի՝ Բաղդադում գործող Գլխավոր հյուպատոսությունը և Երբիլում գործող Պատվավոր հյուպատոսությունը: Երբիլում Բելառուսի Պատվավոր հյուպատոսության դիմաց իջեցվեց Բելառուսի դրոշը: Հյուպատոսությունների փակման հիմնական պատճառը Բելառուսի կողմից վիզայի տրամադրման չափազանց հեշտացված ընթացակարգն էր: Նշվում էր, որ Բելառուսը վիզաներ է տրամադրում դիմորդներից շատերին, ինչը խթանում է եվրոպական ուղղությամբ ներգաղթը (տես “Belarus’s un Bagdat ve Hewler konsolosluklari kapatildi”. “Roj news”, 06.11.2021 (https://rojnews.news/tr/ortadogu/belarusun-bagdat-ve-hewler-konsolosluklari-kapatildi)): Բելառուսալեհական սահմանին ներկայումս ծանր պայմաններում կուտակվել են մոտ 15 հազար ներգաղթյալներ: Այդ ներգաղթյալների զգալի մասը Իրաքի և Քրդստանի քաղաքացիներ են: Երբիլում Բելառուսի Պատվավոր հյուպատոս Ֆուադ Մամանդի պարզաբանումները տես “Belarus’un Erbil ve Bagdat’taki konsolosluklari kapatildi”. “Rûdaw”, 06.11.2021 (https://www.rudaw.net/turkish/middleeast/iraq/061120211):

21. Ուկրաինայի Պատվավոր հյուպատոսություն,
22. Միավորված ազգերի կազմակերպության առաքելություն Իրաքում–երբիլ տարածաշրջանային գրասենյակ,
23. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի տարածաշրջանային գրասենյակ:

**Մերձավոր և Միջին Արևելք**

1. Իրանի Իսլամական Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն,
2. Հորդանանի Հաշիմյան Թագավորության Գլխավոր հյուպատոսություն,
3. Պաղեստին Պետության Գլխավոր հյուպատոսություն,
4. Արաբական Միացյալ Էմիրությունների Գլխավոր հյուպատոսություն,
5. Քուվեյթի Պետության Գլխավոր հյուպատոսություն,
6. Սաուդյան Արաբիայի Թագավորության Գլխավոր հյուպատոսություն<sup>18</sup>:

ՀԱԿԵԿԱԾ 2

**Քրդստանի Շրջանային Կառավարության գրասենյակներն արտասահմանում.**

1. ՔԵԿ ներկայացուցչություն Ավստրալիայի Համագործակցությունում,
2. ՔԵԿ ներկայացուցչություն Ավստրիայի Հանրապետությունում,
3. ՔԵԿ ներկայացուցչություն Եվրոպական Միությունում (ԵՄ),
4. ՔԵԿ ներկայացուցչություն Ֆրանսիայի Հանրապետությունում,
5. ՔԵԿ ներկայացուցչություն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում,
6. ՔԵԿ ներկայացուցչություն Իրանի Իսլամական Հանրապետությունում,
7. ՔԵԿ ներկայացուցչություն Իտալիայի Հանրապետությունում,
8. ՔԵԿ ներկայացուցչություն Լեհաստանի Հանրապետությունում,
9. ՔԵԿ ներկայացուցչություն Ռուսաստանի Դաշնությունում,
10. ՔԵԿ ներկայացուցչություն Իսպանիայի Թագավորությունում,
11. ՔԵԿ ներկայացուցչություն Շվեդիայի Թագավորությունում,
12. ՔԵԿ ներկայացուցչություն Շվեյցարիայի Համադաշնությունում,
13. ՔԵԿ ներկայացուցչություն Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում,
14. ՔԵԿ ներկայացուցչություն Ամերիկայի Միացյալ Նահանգներում<sup>19</sup>:

<sup>18</sup> Մեջբերումը համաձայն՝ “Foreign Representations in the Kurdistan Region”. Kurdistan Regional Government, Department of Foreign Relations (<https://gov.krd/dfr-en/foreign-representation/>):

<sup>19</sup> Տես նույն տեղում:

## ПРОБЛЕМА ОТКРЫТИЯ КОНСУЛЬСТВ И ПРЕДСТАВИТЕЛЬСТВ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГОСУДАРСТВ ЮЖНОГО КАВКАЗА С РЕГИОНАЛЬНЫМ ПРАВИТЕЛЬСТВОМ КУРДИСТАНА

*В. С. ПЕТРОСЯН, кандидат исторических наук, доцент, старший ученый-аналитик  
Центра региональных стратегических исследований НИУО МО РА*

### РЕЗЮМЕ

В вопросе установления официальных отношений с Региональным Правительством Курдистана (РПК) государства Южного Кавказа проявляют определенную осторожность, заняв в сущности выжидательную позицию. В свою очередь, РПК также не имеет четко выраженной позиции по интересующим Грузию, Армению и Азербайджан проблемам, не предпринимая каких-либо активных шагов. В сущности, их отношения развивались в рамках межгосударственных отношений южнокавказских республик с Республикой Ирак, что налагало определенные ограничения, или красные линии, в этих отношениях, обусловленные необходимостью учета взаимоотношений между Багдадом и Эрбилем, а также сложных отношений РПК с региональными и глобальными акторами.

Тем не менее, время от времени между этими сторонами наблюдается активизация контактов, основным содержанием которых являются вопросы открытия представительств РПК в республиках Южного Кавказа и их консульств в Эрбиле, а также развитие торгово-экономических связей между ними. В плане осуществления контактов на уровне лиц и готовности к сотрудничеству с РПК наибольшую активность проявляет Республика Армения, которая оказалась наиболее последовательной в вопросе открытия Генерального консульства в Эрбиле.

В статье анализируются подходы республик Южного Кавказа к открытию своих генконсульств в Эрбиле и позиция РПК в вопросе открытия своих представительств в Армении, Грузии и Азербайджане.

На данный момент Армения является единственным государством на Южном Кавказе, имеющим генконсульство в Эрбиле (официально – генеральное консульство РА в городе Эрбиле Республики Ирак). Грузия пока рассматривает вопрос открытия консульства в Эрбиле, в то время как в Азербайджане подобный вопрос пока не стоит на повестке дня, хотя Баку и последователен в развитии торгово-экономических отношений с РПК. В свою очередь, Иракский Курдистан не имеет представительств в государствах Южного Кавказа, хотя по Иракской Конституции 2005 г. имеет право на открытие представительств во всех государствах, с которыми Республика Ирак имеет дипломатические отношения.

В статье подчеркивается, что Армения, Грузия и Азербайджан не имеют и не могут иметь единой политики по курдскому вопросу, как и РПК не имеет единой южнокавказской политики, что обусловлено внутрикурдскими разногласиями между двумя ведущими партиями Иракского Курдистана – Демократической партией Курдистана (ДПК) и Патриотическим союзом Курдистана (ПСК), а также различными влияниями внешних акторов. Данные политические процессы в Иракском Курдистане привели к тому, что в настоящее время РПК осуществляет единую парадипломатию как в рамках всего образования, так и на партийном уровне, а ДПК и ПСК имеют различные взгляды на три государства Южного Кавказа.

В результате всех этих процессов и реалий Армения, Грузия и Азербайджан, обладающие большим потенциалом развития сотрудничества с РПК, на деле практически не реализуют его, что в полной мере относится и к самому РПК.

## THE PROBLEM OF OPENING CONSULATES AND REPRESENTATIVE OFFICES IN THE CONTEXT OF RELATIONS OF THE SOUTHERN CAUCASUS STATES WITH THE KURDISTAN REGIONAL GOVERNMENT

*V. S. PETROSYAN, PhD in History, Associate Professor, Senior Research Fellow,  
Center for Regional Strategic Analyses, INSS, NDRU, MOD, RA*

### SUMMARY

The states of the South Caucasus show certain caution in the matter of establishing official relations with the Kurdistan Regional Government (KRG) taking in essence a wait-and-see approach. In its turn, KRG doesn't express a clear attitude towards the problems that matter for Georgia, Armenia and Azerbaijan by not taking any active steps. Virtually, their relations have developed within the framework of interstate relations between the South Caucasian republics and the Republic of Iraq, which imposed certain restrictions or red lines in these relations, conditioned by the need to take into account the relationship between Baghdad and Erbil, as well as the complicated relations of the KRG with regional and global actors.

However, contacts between these parties are seen to be intensified from time to time, the main content of them being the matters of opening KRG representative offices in the republics of the South Caucasus and their consulates in Erbil, as well as the development of trade and economic ties between them. In terms of making contacts at the level of individuals, and readiness to cooperate with the KRG, highest activity is

shown by the Republic of Armenia, which turned out to be the most consistent in the matter of opening a Consulate General in Erbil.

The article analyzes the approaches that the South Caucasian republics take towards opening their consulates general in Erbil, and the KRG's posture towards the matter of opening their representational offices in Armenia, Georgia and Azerbaijan.

At the moment, Armenia is the only state in the South Caucasus that has a Consulate General in Erbil (the Consulate General of the Republic of Armenia in the city of Erbil of the Republic of Iraq). Georgia is still considering the issue of opening a consulate in Erbil, while in Azerbaijan such an issue is still not even put on the agenda, although Baku is consistent in developing trade and economic relations with the KRG. In its turn, Iraqi Kurdistan does not have representation offices in the states of the South Caucasus, although under the Iraqi Constitution of 2005 it does have the right to open them in all states which the Republic of Iraq has diplomatic relations with.

The article highlights that Armenia, Georgia and Azerbaijan do not and cannot have a unified policy on the Kurdish issue, just like the KRG does not have a unified South Caucasian policy, which is due to intra-Kurdish disagreements between the two leading parties of Iraqi Kurdistan – the Kurdistan Democratic Party/KDP (Kurdish: Partiya Demokrat a Kurdistanê), and the Patriotic Union of Kurdistan/PUK (Yekîtiya Nîştimanî ya Kurdistanê), as well as various influences from external actors. These political processes in Iraqi Kurdistan have led to the fact that at present the KRG is carrying out a single paradiplomacy both within the framework of the entire entity, and at the party level, and the KDP and PUK have different views on the three states of the South Caucasus.

Owing to all these processes and realities, Armenia, Georgia and Azerbaijan, while enjoying a great potential for developing cooperation with the KRG, in fact practically do not realize it, which fully applies to the KRG itself.

ՀԱՅԱՍՏԱՆ–ՉԻՆԱՍՏԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի  
Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի  
գիտնական-վերլուծաբան



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների ասպարեզում կարևոր տեղ է տրվում Չինաստանին: Դա զլխավորապես պայմանավորված է այն բանով, որ վերջին տասնամյակներում Չինաստանն իր տնտեսական աճման բարձր տեմպերի շնորհիվ ոչ միայն տնտեսապես դառնում է աշխարհի համար մեկ պետությունը և, միևնույն ժամանակ, զգալիորեն մեծացնում է մեր տարածաշրջանում իր առևտրատնտեսական ներկայությունը: Ակտիվորեն զարգացնելով իր առևտրատնտեսական հարաբերությունները ինչպես անմիջական հարևան, այնպես էլ հեռավոր երկրների հետ՝ Չինաստանը նպատակադրվել է 2049 թ.<sup>1</sup> իր անկախության 100-ամյակի առթիվ, հասնելու «չինական երազանքին»<sup>1</sup>: Հայաստանի անկախացումից հետո Չինաստանի հետ նրա առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման ներուժը ամբողջությամբ չի իրացվում, ինչը սահմանափակում է նրանց համագործակցության դիմամիկ զարգացման տեմպերը: Ուստի փորձենք պարզել առևտրատնտեսական ոլորտում հայ-չինական երկարաժամկետ համագործակցության զարգացման համար անհրաժեշտ քայլերը: Տվյալ հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի գիտական շրջաններում Չինաստանի հետ մեր երկրի առևտրատնտեսական հարաբերությունների հիմնախնդիրները վերջին Արցախյան պատերազմի հետևանքների և ներկայիս տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական զարգացումների հաշվառմամբ համապարփակ կերպով դեռ վերլուծված չեն:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին 40 տարիներին Չինաստանի հետամնաց ագրարային տնտեսությունը վերածվել է աշխարհի երկրորդ խոշորագույն տնտեսության: Դեռ 1970-ական թվականների վերջին սահմանվել են Չինաստանի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները: Դրանք են.

<sup>1</sup> Տես *Юрий Тавровский*. Китайская мечта и ее составляющие. Стратегический план развития страны, расчеты и программы. «Независимая газета», 4 декабря 2015 г. ([https://www.ng.ru/ideas/2015-12-04/5\\_ideas.html](https://www.ng.ru/ideas/2015-12-04/5_ideas.html)):



- ✓ տարածքային ամբողջականության և ինքնիշխանության փոխադարձ հարգումը,
- ✓ ազդեցիկ մերժումը,
- ✓ ներքին գործերին չմիջամտելը,
- ✓ հարաբերություններում հավասարությունը և փոխադարձ շահավետությունը,
- ✓ խաղաղ գոյակցությունը<sup>2</sup>:

Այդ սկզբունքների պահպանումը դեռ 1970-ական թվականների վերջից զուգակցվում է բարեփոխումների ու բացության ներքին քաղաքականությամբ, որն ուղղված է յուրահատուկ չինական սոցիալիզմի կառուցմանը: Չինաստանի ռազմաքաղաքական դեկավարությունը մինչ այսօր վարում է այդ քաղաքականությունը, որը համարվում է «չինական երազանքին»՝ չին ժողովրդի մեծ վերածննդին, հասնելու ճանապարհ: Այս առումով «չինական երազանքի» հայեցակարգը բխում է հետևյալ անհրաժեշտություններից. առաջինը՝ բարձրացնել չին ժողովրդի ոգին, հայրենասիրությունը, նորամուծականությունը, երկրորդը՝ շարժվել ուրույն չինական ուղիով, երրորդը՝ չին ժողովրդի բոլոր ուժերը համախմբել հանուն ընդհանուր նպատակի: Չինաստանում Սի Չինփինի իշխանության գալուց հետո նրա ռազմաքաղաքական դեկավարությունն ակտիվացրել է «չինական երազանքի» իրագործմանն ուղղված իր ջանքերը: Այսպես. սահմանվել է կոնկրետ ազգային նպատակ, որին ենթադրվում է հասնել անկախության հարյուրամյակին (2049 թ.): Խոսքը հարուստ, տնտեսապես հզոր, տեխնոլոգիապես զարգացած ժողովրդավարական, քաղաքակիրթ, ներդաշնակ և ժամանակակից սոցիալիստական պետություն ստեղծելու մասին է: Մյուս կողմից՝ Չինաստանը հանդես է գալիս միաբևեռ աշխարհակարգի դեմ և առաջարկում է զարգացող շուկաներով երկրների հետ համագործակցության ընդլայնում համաշխարհային տնտեսական օգուտների արդարացի բաշխման սկզբունքով:

Որպես պետության գերնպատակ դիտվում է Չինաստանի՝ տնտեսական և տեխնոլոգիական առաջատարությունը: Նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ դրան հասնելու համար սահմանվում են հետևյալ նպատակները.

- տեխնոլոգիական զարգացման բարձր տեմպերի արագացում,
- աճող ներքին սպառման բավարարման քաղաքականության վարում,
- ԱՄՆ-ի հետ տնտեսական ու քաղաքական խնդիրներ ունեցող պետությունների հետ համագործակցության խորացում,
- ներմուծման և արտահանման ուղիների անվտանգության ապահովում,
- ԵՄ-ի և այլ տարողունակ շուկաների գրավում,
- չինական ընկերությունների արտաքին տնտեսական շահերի պաշտպանություն,

<sup>2</sup> Ств Цуй Цимин. Пять принципов мирного сосуществования сохраняют актуальность в XXI веке. «БелТА», 28 июня 2014 (<https://www.belta.by/interview/view/pjat-printsipov-mirnogo-sosuschestvovaniya-sohranjajut-aktualnost-v-xxi-veke-4127>):

- կիբեռտարածությունում ազգային տնտեսական շահերի պաշտպանություն:

Որպես արտաքին առևտրատնտեսական ու ֆինանսական քաղաքականության իրագործման գործիքներ կարելի է առանձնացնել հետևյալները. «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունը,

- ✓ յուանով միջազգային առևտրի խթանումը,
- ✓ իր միջազգային վճարային համակարգի ստեղծումը,
- ✓ իր արտադրական տեխնոլոգիաների ու հոսքագծերի արտահանման խթանումը,
- ✓ փոխշահավետ միջտարածաշրջանային առևտրատնտեսական, ֆինանսական և ենթակառուցվածքային համագործակցության խթանումը,
- ✓ լայնածավալ առևտրատնտեսական ինտեգրումային կազմավորումների ստեղծումը և զարգացումը,
- ✓ միջազգային վարկավորման ծավալների մեծացումը,
- ✓ ազգային ապրանքների միջազգային մրցունակության մակարդակի բարձրացումը:

Պետք է նշել, որ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության իրագործումը ուղեկցվում է վերը նշված մյուս գործիքների ակտիվ օգտագործմամբ: Հետևաբար Չինաստանի արտաքին առևտրատնտեսական քաղաքականության ուղղություններն ավելի հանգամանորեն վերլուծելու համար պետք է ուսումնասիրել «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության կողմնորոշիչները:

Տվյալ նախաձեռնությունն ունի հետևյալ հինգ բաղադրիչները. քաղաքական համակարգում, ենթակառուցվածքների փոխկապվածություն, առևտրի շարունակական աճ, կապիտալի ազատ տեղաշարժ, ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդում<sup>3</sup>:

Քաղաքական համակարգման առնչությամբ պետք է նշել, որ Չինաստանը նպատակաճանաչված է ամրապնդելու միջկառավարական համագործակցությունը և ակտիվորեն ստեղծելու բազմամակարդակ կապեր՝ կառավարությունների վարած քաղաքականությունները համադասելու, շահերի փոխհամաձայնությունը խորացնելու և փոխադարձ քաղաքական վստահությունը ամրապնդելու համար:

Ենթակառուցվածքների միացումը նախաձեռնության առաջնահերթություններից է: «Գոտի և ճանապարհ»-ի երկայնքով տնտեսական օգուտների մեծացման նպատակով պետությունները պետք է փոխհամաձայնեցնեն իրենց ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը, տեխնոլոգիական ստանդարտները և համատեղ իրականացնեն մայրուղիների կառուցման միջազգային նախագծեր:

Առևտրի և ներդրումների ոլորտում համագործակցությունը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության հիմնական բովանդակությունն է: Այս առումով

<sup>3</sup> Տես ««Экономический пояс Шелкового пути» и «Морской шелковый путь 21-века»» (<http://eurasianeconomic.org/1001/2017/01/30/Ekonomicheskij-poyas-SHelkovogo-puti-i-Morskoj-SHelkovyj-put-21-go-veka.phtml>):

Չինաստանը առաջ է մղում առևտրի և ներդրումների ընթացակարգերի պարզեցման, առևտրի և ներդրումների միջև առկա խոչընդոտների վերացման և բարենպաստ գործարար միջավայրի ստեղծման գաղափարը: Այս նախաձեռնության մասնակից պետությունները պետք է սերտացնեն մաքսային համագործակցության ոլորտում տեղեկույթի փոխանակումը, քայլեր ձեռնարկեն մաքսային հսկողության արդյունքների փոխադարձ ճանաչման և իրավապահ մարմինների փոխօգնության ուղղությամբ:

Կապիտալի ազատ տեղաշարժը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության հիմնասյունն է: Դրա շրջանակներում Չինաստանը նպատակադրված է ֆինանսական համագործակցության խորացմանը, «գոտում» գտնվող երկրների միջև արժույթային, ֆինանսական և վարկային գործառնությունների կայունության ապահովմանը:

Եվ վերջին բաղադրիչը ժողովուրդների միջև բարեկամության որպես «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության իրականացման սոցիալական հիմքի ամրապնդումն է: Այս առումով, անհրաժեշտ է համարվում զարգացնել «համագործակցության» ոգին, ինչպես նաև համագործակցությունը մշակույթի, գիտության, մասնագետների փոխանակման ասպարեզում և այլն:

Չինաստանը ձգտում է աշխատանքի միջազգային բաժանման ասպարեզում իրացնելու իր մրցակցային առավելությունները, ինչի համար օգտագործում է համապարփակ բաց քաղաքականություն<sup>4</sup>: Այս առումով, Չինաստանը նախաձեռնության ուղեծրում գտնվող երկրներին ներկայացնում է իր հետ համագործակցության առավելությունները: Նման քաղաքականությունը օգնում է նվազեցնել տարբեր տարածաշրջանների և պետությունների տնտեսական զարգացածությունների միջև եղած անհամաչափությունը<sup>5</sup>: Չինաստանի ղեկավարությունը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում ակտիվորեն իրականացնում է այլ երկրների ենթակառուցվածքների, արդյունաբերության, էներգետիկայի, ֆինանսների, գյուղատնտեսության, տեխնոլոգիաների, կրթության և մշակույթի ոլորտներում ներդրումային ծրագրեր: Այդ ընթացքում Չինաստանը ակտիվորեն օգտագործում է Ասիական ենթակառուցվածքների ներդրումային բանկի և Մետաքսի ճանապարհի հիմնադրամի ֆինանսական ռեսուրսները: Որպես արդյունք՝ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում նախատեսված ընդհանուր ներդրումը կհասնի հսկայական գումարների: Մասնավորապես՝ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության մասնակից երկրներին չինական բանկերը մինչև 2027 թ. կհատկացնեն 1,3 տրիլիոն դոլար<sup>6</sup>:

Չինաստանի այս նախաձեռնությունը տասնյակ զարգացող երկրներում

<sup>4</sup> Steu Ван Ивэй. Внутреннее цивилизационное содержание «Одного пояса, одного пути». «Контуры глобальных трансформаций», 2016, вып. 6, т. 9 (<https://www.ogt-journal.com/jour/article/view/307/308>):

<sup>5</sup> Steu նույն տեղում:

<sup>6</sup> Steu Т. Данилова. Пояс, путь, проекты и проблемы ([http://atomicexpert.com/silkway\\_belt\\_and\\_path](http://atomicexpert.com/silkway_belt_and_path)):

կարող է արագացնել տնտեսական զարգացումը և նվազեցնել աղքատությունը, սակայն հաջողության հասնելու համար անհրաժեշտ են լայնամասշտաբ քաղաքական բարեփոխումներ<sup>7</sup>: Այն պետությունները, որոնցով անցնում են տրանսպորտային միջանցքները, կարող են 2-4 անգամ ավելացնել իրենց իրական եկամուտները, եթե իրականացնեն բարեփոխումներ առևտրի հոսքերը մեծացնելու և առևտրային սահմանափակումները նվազեցնելու համար: Այդ միջոցառումները կարող են տարեկան մինչև 9 % մեծացնել դրա եկամուտները<sup>8</sup>:

Համաշխարհային բանկի փորձագետները նշում են, որ այս նախաձեռնությունը «վարակման» ռիսկեր է ստեղծում՝ կապված Չինաստանում լայնածավալ ֆինանսական ձգնաժամի հետ: Բանն այն է, որ այս փորձագետների կարծիքով՝ Չինաստանի տնտեսական և ֆինանսական համակարգի հետ չափազանց սերտ կապվածությունը կարող է արագացնել Չինաստանից ֆինանսատնտեսական ձգնաժամի տարածումը: Այնուամենայնիվ, ի հեճուկս այդ փորձագետների՝ տնտեսական անկումից հետո Չինաստանի տնտեսությունը արագորեն վերականգնվում է, ինչը մեծացնում է Չինաստանի տնտեսական հեռանկարների նկատմամբ նրա գործընկեր պետությունների վստահությունը, և նրանց միջև առևտրատնտեսական հարաբերությունները խորանում են: Այդ երկրների և Չինաստանի փոխկախվածության վկայությունն է այն փաստը, որ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում Չինաստանը ստորագրել է 103 երկրների հետ համագործակցության վերաբերյալ 118 փաստաթուղթ: Չինաստանի առևտուրը «Գոտի և ճանապարհ»-ի շրջանում գտնվող երկրների հետ կազմել է մոտ 5 տրիլիոն դոլար, նա դարձել է 25 երկրների խոշորագույն առևտրային գործընկերը, իսկ այդ պետություններում նրա կատարած ներդրումները տարեկան աճում են միջինը 7,2 %-ով<sup>9</sup>:

Հարկ է նաև նշել, որ այդ պետությունների ընդհանուր պարտքի վերլուծությունը ցույց է տալիս, որ ցածր և միջին եկամուտ ունեցող 43 երկրներից 12-ը միջնաժամկետ հատվածում կկանգնեն իրենց պետական պարտքի կառավարման լուրջ դժվարությունների առաջ<sup>10</sup>: Սա պայմանավորված է այն բանով, որ ներդրումներ կատարելու համար չինական պետական ընկերությունները պահանջում են պետական երաշխիքներ, ինչը բարձրացնում է գործընկեր պետությունների պետական պարտքի մակարդակը:

<sup>7</sup> Տես «Что сулит китайский мегапроект: огромные долги или процветание». «Радио Озоди», 23 Июнь 2019 (<https://rus.ozodi.org/a/30015339.html>):

<sup>8</sup> Տես «Экономика Одного пояса, Одного пути: возможности и риски транспортных коридоров». «World Bank Group», 2020 (<https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/31878/211392RU.pdf?sequence=12&isAllowed=y>):

<sup>9</sup> Տես «Что сулит китайский мегапроект: огромные долги или процветание» (<https://rus.ozodi.org/a/30015339.html>):

<sup>10</sup> Տես «Экономика Одного пояса, Одного пути: возможности и риски транспортных коридоров» (<https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/31878/211392RU.pdf?sequence=12&isAllowed=y>):

Պետք է նաև նշել, որ Չինաստանի ռազմաքաղաքական ղեկավարությունը արտաքին առևտրատնտեսական քաղաքականության վերը նշված գործիքների օգտագործման շարունակականությունը և հետևողականությունը դիտում է որպես ԱՄՆ-ի հետ առևտրատնտեսական պայքարում հաջողության հասնելու համար անհրաժեշտ պայման: Ի դեպ այդ պայքարում երկու պետություններն էլ ձգտում են մեծացնելու այլ պետություններում իրենց տնտեսական ու ֆինանսական դերը՝ այդպիսով մեկը մյուսի նկատմամբ ստանալով առավելություն, ընդամին դա անում են նաև նրա դաշնակից պետություններում: Ընդ որում, ԱՄՆ–Չինաստան առևտրատնտեսական պայքարը դրսևորվում է նաև մեր տարածաշրջանում: Այսպես, Թուրքիայի նկատմամբ ԱՄՆ-ի ձեռնարկած ճնշումների աճումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Թուրքիա–Չինաստան տնտեսական համագործակցության խորացումը հակասում է ԱՄՆ-ի աշխարհատնտեսական շահերին: Դրա հետ մեկտեղ նշանակալիորեն ընդլայնվել է Չինաստանի և Ռուսաստանի համագործակցությունը՝ ծավալվելով ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական դաշտում: Ընդ որում, երկու պետությունները Կենտրոնական Ասիայում հաջողությամբ վարում են փոխլրացնող քաղաքականություն: Այս միտումը նկատվում է նաև Հարավային Կովկասում, որտեղ Ռուսաստանը ձգտում է Չինաստանի հետ համագործակցության մեջ ներգրավելու նաև Թուրքիային և Իրանին: Այդպիսով՝ Ռուսաստանը նվազեցնում է Թուրքիայի միջոցով ԱՄՆ-ի ազդեցությունը տարածաշրջանում: Նույն նպատակն ունի նաև Չինաստանը, որը, ինչպես նշվեց, ձգտում է իր կողմը ներշաքել ԱՄՆ-ի դաշնակից պետություններին:

Հարկ է հիշատակել, որ ԱՄՆ-ի և Չինաստանի միջև առևտրային պատերազմի համատեքստում ամերիկացիները ձգտում են սահմանափակելու Չինաստանի առևտրատնտեսական ազդեցությունը աշխարհում, խոչընդոտելու տարբեր պետություններում չինական ընկերությունների գործունեությանը: Որպես արդյունք՝ չինական պետական և մասնավոր ընկերություններն ու բանկերը չինական կապիտալը տեղափոխում են ներդրումներ կատարելու համար բարենպաստ պայմաններ ունեցող երկրներ:

ՀԱՅԱՍՏԱՆ–ՉԻՆԱՍՏԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆԵՍԱԿԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևանի ու Պեկինի միջև առևտրատնտեսական կապերի հաստատման սկզբից ի վեր երկու պետությունների արտահանման-ներմուծման կառուցվածքում արմատական փոփոխություններ չեն նկատվել: Չինաստան հայկական արտահանման գրեթե ամբողջ ծավալը բաժին է ընկնում «պղնձի հանքաքար և խտանյութ» ապրանքին: Չինաստանի արտահանումն ավելի բազմազան է՝ ներառելով թեթև, գյուղատնտեսական և քիմիական արդյունաբերության արտադրանքը<sup>11</sup>: Վերջին տարիներին Հայաստան–Չինաստան

<sup>11</sup> Sht A. *Овannisян*. Армяно-китайские отношения: реалии и перспективы развития, 10.05.2019 (<https://www.orbeli.am/ru/post/208/2019-05-10/Армяно-китайские+отношения%3A+реалии+и+перспективы+развития>):

փոխադարձ առևտուրը հաստատուն կերպով աճում է: Դա հիմնականում պայմանավորված է Հայաստանից Չինաստան մատակարարվող հումքի ծավալների աճմամբ, Չինաստանից Հայաստան մանվածքեղենի, մեքենաների և սարքավորանքի ներմուծմամբ: Չինաստանը Ռուսաստանից հետո Հայաստանի երկրորդ առևտրատնտեսական գործընկերն է<sup>12</sup>:

2020 թ. հունվար–դեկտեմբեր ամիսներին Հայաստանի ամենամեծ ապրանքաշրջանառությունը եղել է Ռուսաստանի, Չինաստանի և Շվեյցարիայի հետ: Արտաքին և փոխադարձ առևտրաշրջանառության ծավալը 2020 թ. հունվար–դեկտեմբեր ամիսներին կազմել է 7103875,5 հազար դոլար՝ 2019 թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 13,2 %-ով<sup>13</sup>: Հայաստանն ամենամեծ ծավալով արտաքին և փոխադարձ ապրանքաշրջանառություն ունեցել է Ռուսաստանի հետ՝ 2156126,5 հազար դոլար՝ թեև 2019 թ. նկատմամբ այն նվազել է 3,5 %-ով: Ռուսաստանից հետո արտաքին և փոխադարձ առևտրի ամենամեծ ապրանքաշրջանառություն եղել է Չինաստանի հետ՝ 964531,4 հազար դոլար, ընդ որում, 2019 թ. նկատմամբ այն աճել է 2,0 %-ով<sup>14</sup>:

Չինաստանը, իհարկե, նույնքան ակտիվ չէ, որքան Ռուսաստանը կամ ԵՄ-ի անդամները, բայց, այնուամենայնիվ, ներդրումներ է կատարում Հայաստանի տնտեսության մեջ: 2018 թ. դրությամբ Հայաստանում գրանցված են չինական կապիտալով շուրջ 50 ձեռնարկություններ, որոնք զբաղվում են սննդի, խմիչքների և ծխախոտի, մանվածքի և կոշկեղենի մեծածախ վաճառքով, ռեստորանային բիզնեսով, կենցաղային էլեկտրասարքերի և հագուստի արտադրությամբ, դեղորայքի և բժշկական գույքի, ինչպես նաև կոսմետիկայի պարագաների մանրածախ առևտրով: Երկկողմ տնտեսական համագործակցության շրջանակներում 2011 թվականից ի վեր ամենամեծ նախագծերից մեկը Շանսի–Նաիրիտ կաուչուկի գործարանի շահագործումն է Չինաստանի Շանսի նահանգի Դատոնգ քաղաքում: Գործարանի տարեկան հզորությունը 30 հազար տոննա է, դրա շինարարության համար ներդրվել է 220 միլիոն դոլար, իսկ ձեռնարկության տարեկան եկամուտը մոտավորապես 100 միլիոն դոլար է: Այս նախագծում հայկական կողմի մասնաբաժինը 40 % է<sup>15</sup>:

Հայաստանում չինացիները ներգրավված են տարբեր էներգետիկ նախագծերում, այդ թվում՝ ՋԷԿ-երի վերակառուցման ու նորոգման աշխատանքներում: Մասնավորապես՝ Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ էներգաբլոկի վերանորոգման ու վերակառուցման աշխատանքների 80 %-ը կատարել են չինացիները: Չինաստանի արդյունաբերական և առևտրային բանկը (*ICBC*) քննարկում է Հայաստանի էներգետիկ ոլորտում ներդրումներ կատարելու

<sup>12</sup> Տես նույն տեղում:

<sup>13</sup> Տես «Հայաստանը 2020-ին ամենաշատ առևտրաշրջանառությունն ունեցել է Ռուսաստանի, Չինաստանի և Շվեյցարիայի հետ»: «Արմենպրես», 05.02.2021 (<https://armenpress.am/arm/news/1042548/>):

<sup>14</sup> Տես նույն տեղում:

<sup>15</sup> Տես նույն տեղում:

հնարավորությունները: Խոսքը, մասնավորապես, արևային մարտկոցների արտադրության կազմակերպման հեռանկարների մասին է: Չինական կողմը Հայաստանին անհատույց օգնություն է տրամադրում գյուղատնտեսության համար պարարտանյութերի (ազոտ, պոտաշ և այլն) մատակարարումների տեսքով:

2019 թ. փետրվարին այլումինի արտադրությամբ զբաղվող հայտնի «Դայլին Գոմինգ Գրուպ» (*“Dalian Guoming Group”*) չինական ընկերությունը հայտարարել է Հայաստանում արդյունաբերական գոտու ստեղծման համար մոտ 100 միլիոն դոլար ներդրելու մտադրության մասին: Արտադրանքը հիմնականում արտահանվելու է ԵՄ-ի երկրներ: Ընդհանուր առմամբ ներդրումային ծրագրերի ծավալը հասնում է 100 միլիոն դոլարի, նախատեսվում է ստեղծել 300-400 աշխատատեղ: Այս նախագծի շրջանակներում երկաթուղու հարևանության հաշվառմամբ հավանաբար Վանաձորում կստեղծվի նյութատեխնիկական հանգույց: Ակնկալվում է, որ դա հնարավորություն կտա ավելի լավ կազմակերպելու Հայաստանից ապրանքների արտահանումը: Չինացի ձեռներեցները մտադիր են Հայաստանում կառուցել նաև նյութատեխնիկական պահեստի կենտրոններ, որոնք կսպասարկեն առևտրի հոսքերը դեպի ԵԱՏՄ, ԵՄ-ի և այլ երկրներ<sup>16</sup>: Այդ նպատակով, տարածաշրջանային ապաշրջափակման միտումների հաշվառմամբ այդպիսի կենտրոններ նպատակահարմար է ստեղծել նաև Մեղրիում:

Հարկ է նշել, որ Հայաստան–Չինաստան համագործակցության ընդլայնումը հնարավոր չէ առանց համապատասխան նախադրյալների: Այդ նախադրյալներն են.

- ✓ Չինաստանից ներդրումների ներգրավման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում ՀՀ-ում մշակված «Օտարերկրյա ներդրումների մասին» նոր օրենքը, որով նախատեսվում է օրենսդրորեն ուժեղացնել և միջազգային առաջադիմական ստանդարտին հասցնել ներդրողների պաշտպանության և երաշխիքների համակարգը<sup>17</sup>,
- ✓ ԵԱՏՄ–Չինաստան առևտրատնտեսական համագործակցության խորացման միտումները: Չինաստան–ԵԱՏՄ ազատ առևտրի համաձայնագրի առկայությամբ անհրաժեշտ է, որ Հայաստանը ջանքեր գործադրի այն ապրանքների գծով մաքսատուրքերի վերացման ուղղությամբ, որոնց արտադրության համար ունի բարենպաստ պայմաններ,
- ✓ Իրանի ցանկությունը անդամակցելու ԵԱՏՄ-ին,
- ✓ Հարավային Կովկասի տրանսպորտային ապաշրջափակման քայլերը: Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային կապերի նախատեսվող աստիճանական ապաշրջափակումը<sup>18</sup> կմե-

<sup>16</sup> Տես նույն տեղում:

<sup>17</sup> Տես «Մշակվել է օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենք»: «Առավոտ», 13.01.2017 (<http://www.aravot.am/2017/01/13/845280/>):

<sup>18</sup> Տես «Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության

- ✓ ծացնի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության տրանսպորտային փոխադրումներում Հայաստանի ներգրավման հնարավորությունները,
- ✓ մարդասիրական ոլորտում Հայաստան–Չինաստան բարենպաստ հարաբերությունները,
- ✓ Հայաստանի գյուղատնտեսական, հանքահումքային, թեթև արդյունաբերության ճյուղերի զարգացման համար նախադրյալների առկայությունը:

Մեր կարծիքով՝ Չինաստանի հետ առևտրատնտեսական հարաբերություններն ընդլայնելու նպատակով ԵԱՏՄ–Չինաստան համագործակցության միտումներն օգտագործելու հարցում հայկական կողմը բավական պասիվ է: ԵԱՏՄ–Չինաստան աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական գործակցության ընդլայնման հիմքերը դրվեցին դեռ 2012 թ., երբ Ռուսաստանը առաջ քաշեց «Շրջադարձ դեպի Արևելք» ռազմավարությունը<sup>19</sup>: Դրանում առաջնային կարևորություն է տրվում Չինաստանի հետ բազմաբնագավառ համագործակցության զարգացմանը: Այնուհետև՝ 2015 թ., Ռուսաստանի և Չինաստանի նախագահները հայտարարեցին Եվրասիայում «միասնական տնտեսական տարածության» ստեղծման նպատակով ԵԱՏՄ և «Մետաքսի ճանապարհի» տնտեսական գոտիների նախագծերը համադասելու մասին, իսկ ԵԱՏՄ-ի և Չինաստանի միջև ազատ առևտրի համաձայնագրի վերաբերյալ հուշագրի ստորագրումը լրացուցիչ խթան էր Եվրասիա մայրցամաքում ԵԱՏՄ տնտեսական դերի մեծացման համար<sup>20</sup>: Դրանից հետո ԵԱՏՄ-ի և Չինաստանի միջև ստորագրվեց առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը: Այն չի ենթադրում առևտրային սակագների վերացում կամ ոչ սակագնային խոչընդոտների կրճատում, այլ հնարավորություն է տալիս համաձայնագրում առկա նորմերի միջոցով բարելավելու ԵԱՏՄ անդամ-պետությունների արտադրանքի չինական շուկա մտնելու պայմանները<sup>21</sup>:

Միևնույն ժամանակ, եթե նկատի ունենանք այլ երկրների հետ Չինաս-

---

նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը», 10.11.2020 (<https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>), *Նաև*՝ «Նիկոլ Փաշինյանի, Վլադիմիր Պուտինի և Իլհամ Ալիևի հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն», 11.01.2021 (<https://www.primeminister.am/hy/foreign-visits/item/2021/01/11/Nikol-Pashinyan-visit-to-Moscow/>):

<sup>19</sup> Տես *Մո Եա*. Стратегия России «Поворот на Восток»: возможности и вызовы для сопряжения с китайскими трансрегиональными проектами. «Сравнительная политика», 2017, т. 8, № 2 ([http://www.intelros.ru/pdf/Sravnitel'naya\\_politika/2017\\_02/652-1340-1-SM.pdf](http://www.intelros.ru/pdf/Sravnitel'naya_politika/2017_02/652-1340-1-SM.pdf)):

<sup>20</sup> Տես *Ханс-Йоахим Шпангер*. Поворот России на Восток, поворот Китая на Запад: взаимодействие и конфликты на Шёлковом пути. «Россия в глобальной политике», 14.06.2016 (<http://www.globalaffairs.ru/valday/Povorot-Rossii-na-Vostok-povorot-Kitaya-na-Zapad-vzaimodeistvie-i-konflikty-na-Shlkovom-puti-18208>):

<sup>21</sup> Տես «ЕАЭС и Китай подписали соглашение о торгово-экономическом сотрудничестве». «ТАСС» (<http://tass.ru/ekonomika/5208022>):



տանի տնտեսական համագործակցության պրակտիկան, անհրաժեշտ է մեծացնել Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական հատվածների արտադրողականությունը: Դրան կարելի է հասնել այդ ոլորտների տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման միջոցով, ինչը հնարավոր է նաև չինական ներդրումների ներգրավման դեպքում: Մյուս կողմից՝ տնտեսական համագործակցության ընդլայնումն ուղղակիորեն կախված է Հայաստանում ներդրումային նախագծերի ակտիվ զարգացումից և Չինաստանին ներկայացումից: Այնուամենայնիվ, նշված ոլորտներում Չինաստանի հետ Հայաստանի տնտեսական համագործակցությունն ընդլայնելու համար անհրաժեշտ է Հայաստանի ուղենշային փաստաթղթերում մանրամասնորեն ներկայացնել Չինաստանի հետ տնտեսական համագործակցության ուղղությունները, ինչը համակարգված հիմք կստեղծի Չինաստանի հետ պաշտոնական մակարդակով ավելի առարկայական բանակցություններ վարելու համար: Տնտեսական համագործակցության ընդլայնման համար նպատակահարմար է, որ Հայաստանի ղեկավարությունը պաշտոնապես հայտարարի պետական մակարդակով Չինաստանի հետ համագործակցության զարգացման առաջնահերթությունները, վարի չինական կապիտալի ներգրավմամբ մշակող արդյունաբերության զարգացման քաղաքականություն, իրական քայլեր ձեռնարկի բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայրենական և չինական ձեռնարկությունների համատեղ նախագծերի իրագործման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու ուղղությամբ, նաև խթանի չինական շուկայում պահանջարկ ունեցող հումքի և ապրանքների արտադրությունն ու Չինաստան արտահանումը: Հայաստանի և հարևան երկրների միջև համատեղ տնտեսական նախագծերի մշակումը և իրականացումը կնպաստի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությանը Հայաստանի տնտեսական մասնակցության մակարդակի բարձրացմանը: Դա կմեծացնի տարածաշրջանի ինտեգրվածության աստիճանը, ինչը, իր հերթին, կնպաստի այս նախաձեռնությանը Հայաստանի մասնակցության բազմապատիկ տնտեսական էֆեկտի աճմանը՝ տվյալ ներդրումային նախագծերում չինական կապիտալի ներգրավմամբ:

Պետք է նշել, որ ներկայումս տեղի են ունենում նաև Հայաստան–Ռուսաստան ինտեգրումային գործընթացներ, որոնք նպատակաուղղված են ռուբլու շրջանառության ընդլայնմանը: Դրա հետ մեկտեղ, Արևմուտք–Ռուսաստան խոր հակասությունների պայմաններում նկատվում են արևմտյան վճարային համակարգից Ռուսաստանի մեկուսացման միտումներ, իսկ Չինաստանը ձգտում է յուան–ռուբլի–եվրո արժույթային զամբյուղի հիման վրա ստեղծելու իր միջազգային վճարային համակարգը: Կարելի է ասել, որ Հայաստանի՝ ռուբլու գոտուն անդամակցելը ձեռնտու է, քանի որ Ռուսաստանն ու Չինաստանը հետագայում ավելի են ընդլայնելու ազգային արժույթներով առևտուրը:

«Գոտի և ճանապարհ» նախաձեռնությանը Հայաստանի ենթակառուցվածքային մասնակցությունն ունի ռազմավարական նշանակություն: Ենթակառուցվածքների մասնակցության ընդլայնման համար Հայաստանի ղեկա-

վարությունը պետք է արագացնի «Հյուսիս–Հարավ» մայրուղու կառուցումը և շահագործման հանձնումը, դրա ինտեգրումը Պարսից ծոցից Սևծովյան տարածաշրջան բեռնափոխադրումներին: Պարսից ծոց–Սև ծով բազմատեսակ տրանսպորտային միջանցքը (Հայաստանի մասնակցությամբ), Չինաստանից դեպի Եվրոպա բեռնափոխադրումների երթուղում ներառելու դեպքում կստեղծվի արդեն գործող «Բալկանյան մետաքսի ճանապարհի» նմանակը: Այսպիսի զարգացումները լիովին համապատասխանում են Չինաստանի առևտրատնտեսական շահերին, քանի որ ԱՄՆ-ի և Չինաստանի միջև առևտրային պատերազմի պայմաններում վերջինս շահագրգռված է իր բեռնափոխադրումները բազմազանեցված ցամաքային երթուղիներով ապահովելու գործում:

Բացի այդ, դրական արդյունքի հասնելու համար ՀՀ-ն կարող է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- ✓ խթանել Հայաստան–Ռուսաստան–Իրան–Չինաստան համատեղ առևտրատնտեսական և տրանսպորտային նախագծերի իրագործումը,
- ✓ ապահովել չինական բանկերի մուտքը հայկական շուկա և նրանց կապիտալով ներդրումային նախագծերի ֆինանսավորումը,
- ✓ անդամակցել «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության ֆինանսավորմամբ զբաղվող Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկին,
- ✓ ակտիվացնել անդամակցումը Համագործակցության շանհայյան կազմակերպությանը, ինչը մեր երկրի համար կստեղծի Չինաստանի հետ ֆինանսատնտեսական և առևտրատնտեսական համագործակցության խորացման հեռանկարները,
- ✓ Հայաստանը Չինաստանին ներկայացնել որպես չինական տեխնոլոգիաներով և հոսքագծերով արտադրություն կազմակերպելու պատրաստակամ երկրի: Այս առումով նախապատվելի է չինական ապրանքների հավաքման ձեռնարկությունների հիմնումը:

Այնուամենայնիվ, առևտրատնտեսական, ֆինանսական և ենթակառուցվածքային ոլորտներում Հայաստան–Չինաստան համագործակցության խորացման գործում կան նաև լուրջ խոչընդոտներ: Դրանց շարքում է Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր չլինելու հանգամանքը, ինչը բացասաբար է ազդում դեպի Հայաստան օտարերկրյա ներդրումների, այդ թվում՝ Չինաստանից, հոսքի վրա: Մյուս կողմից՝ օտարերկրյա ներդրումների ներգրավմանը խոչընդոտում է նաև Հայաստանի պետական համակարգում ներդրումային նախագծերի մշակման և օտարերկրյա գործընկերներին ներկայացման համար որակյալ մասնագետների պակասը: Մյուս կարևոր հանգամանքը Հայաստանի տրանսպորտային և ապահովումային ցանցի թերզարգացածությունն է, ինչը նշանակալիորեն նվազեցում է բեռնափոխադրումների հարմարավետությունը և շահավետությունը: Այս առումով կարևոր է թվում դեպի Վրաստան երկաթգծի բեռնատարողունակության մեծացումը բեռնատար գնացքների թվի ավելացման միջոցով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստան–Չինաստան առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումն ունի նշանակալի չիրացված ներուժ: Դրանց զարգացման հնարավորությունները նպատակահարմար է փնտրել ոչ միայն երկու պետությունների արտաքին առևտրատնտեսական կողմնորոշիչներում, այլև Հարավային Կովկասում ուժային կենտրոնների հարուցած տարածաշրջանային զարգացումներում: Այս առումով նպատակահարմար է մշակել Չինաստանի հետ առևտրատնտեսական համագործակցության խորացման ռազմավարություն, որը հենված լինի տարածաշրջանում տնտեսական և ենթակառուցվածքային ոլորտներում ներկայումս ընթացող, ինչպես նաև կանխատեսվող փոփոխությունների, Չինաստանի տարածաշրջանային շահերի և ՀՀ տնտեսական ներուժի իրական գնահատման վրա:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ  
ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ  
МЕЖДУ АРМЕНИЕЙ И КИТАЕМ

*А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, ученый-аналитик Группы стратегических игр и моделирования ИНСИ НИУО МО РА*

РЕЗЮМЕ

В последнее время Китай активизировал свои торгово-экономические отношения с государствами Южного Кавказа. Он рассматривает этот регион в качестве важного транзитного узла для осуществления потоков своих грузоперевозок. При этом Китай выражает готовность углублять торгово-экономические отношения со всеми государствами Южного Кавказа на основе принципа равноправия и взаимного уважения интересов сторон.

Данный вопрос приобретает особую актуальность в связи с ожидаемым по итогам Арцахской войны 2020 г. разблокированием региональных транспортных артерий, что создает необходимость пересмотра проблем развития торгово-экономических взаимоотношений с Китаем и выработки ориентиров для их решения. В этих целях осуществлен анализ основных направлений внешней торгово-экономической политики Китая, выявлены наиболее характерные ее особенности, которые необходимо учитывать при выстраивании государствами региона своих торгово-экономических отношений с Китаем.

На базе общего анализа исследуются возможности стимулирования расширения торгово-экономических связей Армении с Китаем в контексте укрепления экономического потенциала РА и тенденций развития отраслей ее экономики. При этом особое внимание уделено

китайской инициативе «Пояс и путь» с точки зрения определения предпосылок для полноценного участия Армении в этом проекте и влияния отношений ЕАЭС – Китай на перспективы углубления экономических связей между РА и КНР.

На основе указанного анализа выработаны предложения по целесообразным для Армении шагам, направленным на расширение ее экономических связей с Китаем и преодоление существующих на этом пути препятствий.

## SOME ISSUES OF THE DEVELOPMENT OF THE RA – CHINA TRADE AND ECONOMIC RELATIONS

*A. G. DAVTYAN, PhD in Economics, Research Fellow, Strategic Games  
and Simulation Group, INSS, NDRU, MOD, RA*

### SUMMARY

China has recently intensified its trade and economic relations with the South Caucasian states. It views this region as a critical transit hub for its freight traffic. Withal, China expresses its willingness to deepen trade and economic relations with all the states of the South Caucasian states on the basis of principles of equality and mutual respect of the parties' interests.

This issue is becoming particularly relevant in view of the unblocking of the regional transportation arteries anticipated as a result of the Artsakh War, 2020, which creates the necessity to review the problems of developing trade and economic relations with China and to elaborate guidelines of solving them. For these reasons, an analysis of the main directions of China's foreign trade and economic policy has been carried out, with identifying such specific feature of it, which should be taken into account when the regional states are structuring their trade and economic relations with China.

Against the backdrop of strengthening RA's economic potential and development trends of its economic sectors, possibilities of encouraging the expansion of Armenia–China trade and economic ties are being studied on the base of general analysis. Withal, special attention is drawn to the Chinese Belt and Road Initiative in terms of defining the prerequisites for Armenia's full participation in this project and of the EAEU – China relations influencing on the perspectives of intensifying the RA – PRC economic ties.

Based on the said analysis there have been developed recommendations on appropriate for Armenia steps targeted at the extension of its economic ties with China and breaking obstacles existing on this way.

ՄԻԿՐՈԱԼԻՔԱՅԻՆ ԽՈՑՈՂ ԶԵՆՔ.  
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

- Ա. Ա. ՀԱՆՈՒՄՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր,  
ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ գիտական ղեկավար,  
Խ. Վ. ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ, ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, ԵՊՀ ռադիոֆիզիկայի  
ֆակուլտետի ղեկան,  
Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ, ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու, ԵՊՀ ռադիոֆիզիկայի  
ֆակուլտետի ամբիոնի վարիչ,  
Հ. Ս. ՀԱՐՈՅԱՆ, տ. գ. թ., ԵՊՀ ռադիոֆիզիկայի  
ֆակուլտետի ամբիոնի վարիչ,  
Վ. Ռ. ՄԻՐՁՈՅԱՆ, «Ֆերոն» ՍՊԸ բաժնի վարիչ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին ռազմական ոլորտում աշխարհի առաջատար պետությունները մեծ ուշադրություն են դարձնում ոչ մահաբեր զինատեսակների դասին պատկանող էլեկտրամագնիսական, մասնավորապես՝ միկրոալիքային, կամ գերբարձր հաճախականային, զենքի ստեղծման ու կատարելագործման վրա: Գերբարձր հաճախականային է կոչվում 0,3–300 ԳՀց հաճախականությամբ միկրոալիքային ճառագայթումը ( $\lambda=1$  մմ–1 մ): Բավարար հզորություն ունենալու դեպքում այն կարող է շարքից հանել կողային ռադիոէլեկտրոնային և օպտիկական սարքերը, ինչպես նաև վնասել մարդու օրգանիզմին՝ ազդելով նրա նյարդային համակարգի վրա: Ղա նաև արդյունավետ միջոց է հակառակորդի գերձշգրիտ զենքից, մասնավորապես՝ անօդաչու թռչող ապարատների պարսից, յուրային օբյեկտները պաշտպանելու համար<sup>1</sup>:

ԳԲՀ զենքը հզոր ԳԲՀ ճառագայթման աղբյուրների, նշանակետի հայտնաբերման միջոցների, ինչպես նաև ճառագայթման կառավարման այն միջոցների համախումբ է, որոնցով ապահովվում են օբյեկտների խոցման համար նախատեսվող էլեկտրամագնիսական էներգիայի ուղղորդումն ու կենտրոնացումը (խտացումը)<sup>2</sup>:

ԳԲՀ զենքն ըստ աղբյուրների լինում է միջուկային և սովորական, ըստ լուծվող խնդիրների մասշտաբի՝ ռազմավարական, օպերատիվ-մարտավարական, ըստ խոցվող նշանակետի՝ միանշանակետ և ընդհանուր, ըստ հարձակման համակարգերի՝ ստացիոնար և տարաշարժուն, ըստ կրիչի տեսակի՝

<sup>1</sup> Stu A. *Заквасин, Е. Комарова*. «Эффективное нелетальное средство»: почему США форсируют создание СВЧ-оружия. «RT», 25.09.2019 (<https://russian.rt.com/world/article/671617-svch-pushka-ssha-elektromagnitnoe-oruzhie>):

<sup>2</sup> Stu «Сверхвысокочастотное оружие (СВЧ-оружие)». «Энциклопедия» МО РФ ([https://encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details\\_rvsn.htm?id=14198@morfDictionary](https://encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details_rvsn.htm?id=14198@morfDictionary)):

ավիացիոն, նավային, տանկային և այլն, ըստ մարտական մասի տեսակի՝ հրթիռային, ռմբային և հրետանային: Որպես զԲՀ ճառագայթման աղբյուր կարող են օգտագործվել միջուկային պայթյունի էներգիան, հզոր ռեյաուի-վիստական զԲՀ զենեատորները (պայթյունամագնիսական, մագնիսակու-տակային, վակուումային) և այլն: Որպես ճառագայթիչներ կարող են կիրառ-վել բացվածքային ավեցիրները (հայելային, փողածև) և փուլայնացված ավե-ցիրային ցանցը, կամ վանդակը<sup>3</sup>:

զԲՀ զենքը գործում է այսպես կոչված *նոր ֆիզիկական սկզբունքների* հիման վրա<sup>4</sup>, ընդամին ֆիզիկայի այս ոլորտը բավական սպեցիֆիկ է, ուստի նպատակահարմար է համառոտակի ներկայացնել զԲՀ զենքի ֆիզիկական տեսությունը:

1. ԷԼԵԿՏՐՈՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԻՄՊՈՒԼՍՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՎՐԱ


Էլեկտրամագնիսական իմպուլսների (ԷՄԻ) ճառագայթումը կարող է ներ-թափանցել սարքավորում ինչպես ուղիղ, այնպես էլ ածանցյալ եղանակնե-րով: ԷՄԻ-ի ազդեցությունը՝ կախված հզորությունից, կարող է հանգեցնել սարքի ինչպես հակադարձելի, կամ ժամանակավոր, խանգարումների, այն-պես էլ անհակադարձելի խափանումների ու վնասվածքների<sup>5</sup>: Նշենք, որ այդ ազդեցությունները կարող են իրագործվել տարբեր մեխանիզմներով, ինչը կքննարկվի ստորև:

Էլեկտրոնային սարքերի վրա ԷՄԻ-ի ազդեցությունը կարելի է սխեմայա-բար պատկերել հետևյալ կերպ (տես նկ. 1):

<sup>3</sup> Տես նույն տեղում:

<sup>4</sup> Տես, օրինակ, *Carlo Kopp*. The Electromagnetic Bomb – a Weapon of Electrical Mass Destruction (<https://www.airuniversity.af.edu/Portals/10/ASPJ/journals/Chronicles/apjemp.pdf>):

<sup>5</sup> Տես *C. Kopp and R. Pose*. The Impact of Electromagnetic Radiation Considerations on Computer System Architecture. Clayton (<https://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.623.6915&rep=rep1&type=pdf>); *V. Lakshminarayanan*. Basic steps to successful EMC design. “R.F. Design”, September 1999, Vol. 22, Issue 9; “Hypothetical electromagnetic bomb” (<http://www.dl.edi-info.ir/Hypothetical%20electromagnetic%20bomb.pdf>); “High Power Microwave Technology and Effects”. University of Maryland Short Course Presented to MSIC Redstone Arsenal, Alabama, 8-12 August 2005; *S. M. Hwang, J. I. Hong and C. S. Huh*. Characterization of the susceptibility of integrated circuits with induction caused by high power microwaves. “Progress in Electromagnetics Research”, 2008, Vol. 81; *V. V. Shurenkov*. On the physical mechanism of interaction of the microwave radiation with the semiconductor diodes. “Advanced Materials Research”, 2014, Vol. 1016; *J.-I. Hong, S.-M. Hwang, K.-Y. Kim, C.-S. Huh, U.-Y. Huh, and J.-S. Choi*. Susceptibility of TTL Logic Devices to Narrow-band High Power Electromagnetic Threats. “PIERS Online”, 2009, Vol. 5, N 8 (<https://www.piers.org/piersonline/pdf/Vol5No8Page756to760.pdf>); *X. Fei, C. Bing and L. Chenglong*. Damage efficiency research of PCB components under strong electro-magnetic pulse. “Applied Mechanics and Materials”, 2012, Vol. 130–134:



Նկ. 1. Էլեկտրոնային սարքերի վրա ԷՄԻ-ի ազդեցության սխեման

### 1.1. Կապակցման մեխանիզմներ

Խափանման կամ վնասման աստիճանը պայմանավորված է էներգիայի այն չափաբաժնով, որը էլեկտրոնային սարք է ներթափանցել կապակցման միջոցով: Կապակցումը, ըստ էության, մի մեխանիզմ է, որով ընկնող էլեկտրամագնիսական ալիքի էներգիան փոխանցվում է սարքին որևէ շղթայի կամ դրա հանգույցի միջոցով<sup>6</sup>: Անկախ ԷՄԻ-ի աղբյուրի տեսակից և թիրախ սարքից տարբերվում են կապակցման երկու տեսակի մեխանիզմներ:

Առաջինը կապակցման ուղիղ, կամ անմիջական, ճանապարհն է (*Front Door Coupling, FDC*): Այս դեպքում ԷՄԻ-ն թիրախ սարք է ներթափանցում ալեհավաքի և ընդունիչ ուղեսարքվածքի (տրակտ) միջոցով:

Երկրորդը կապակցման անուղղակի, կամ ոչ անմիջական, ճանապարհն է (*Back Door Coupling, BDC*): Այս կապակցումը տեղի է ունենում այն դեպքում, երբ ԷՄԻ-ն էլեկտրոնային սարքի վրա ազդում է ձևավորված մեծ անցումային հոսանքների կամ կանգուն ալիքների միջոցով, որոնք առաջանում են ճաքերի, փոքր բացվածքների, մալուխների, միակցումների ամրապայթյալան պատճառով<sup>7</sup>:

Քանի որ ժամանակակից էլեկտրոնային սարքավորանքի հիմքում կիսահաղորդչային սարքերն են, հետաքրքրություն է ներկայացնում դրանց վրա ԷՄԻ-ի ազդեցության գործոնների քննարկումը:

ԷՄԻ-ի ազդեցությամբ կիսահաղորդչային սարքերի վնասման հիմնական ֆիզիկական գործոններն են.

- գերհոսանքների և գերլարումների ստեղծումը տարրերի օդակաձև հանգույցներում ռեզոնանսային երևույթների առաջացման հետևանքով,
- սխեմաներում միմյանց մոտ գտվող հաղորդիչների միջև դիէլեկտրիկների ծակումը և օդում պարպումը,
- մակաբույծ (պարազիտային) թիրիստորների առաջացումը,
- ԷՄԻ-ով պայմանավորված վերահամակցումային (ռեկոմբինացիոն) հոսանքների առաջացումը:

Ներկայացնենք մի քանի տիպական կիսահաղորդչային սարքերի խափանման լարումների արժեքները (տես աղ. 1):

<sup>6</sup> Տես Ք. Քոպ, Ռ. Փոուս, Նշ. աշխ., “Hypothetical Electromagnetic Bomb” (<http://www.di.edi-info.ir/Hypothetical%20electromagnetic%20bomb.pdf>), Ջ.-Ի. Հոնգ, Ս.-Ս. Հվանգ, Ք.-Յ. Կիմ, Չ.-Ս. Հահ, Ու.-Յ. Հահ, Ջ.-Ս. Չոի, Նշ. աշխ.:

<sup>7</sup> Տես Ք. Քոպ, Ռ. Փոուս, Նշ. աշխ., Ք. Ֆեի, Ք. Բինգ, Լ. Զենգլոնգ, Նշ. աշխ.:

ԿԻՍԱՀԱՂՈՐԴՉԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ԽՈՓԱՆՄԱՆ ԼԱՐՈՒՄՆԵՐԸ

Կիսահաղորդչային սարքի տեսակ	Խափանման լարում
Բարձր հաճախականային երկբևեռ տրանզիստոր	10-65 Վ
Գալիում-արսենիդային դաշտային տրանզիստոր	10 Վ
Հիշողության տարր ( <i>DRAM</i> )	7 Վ
ՓՄՕԿ ( <i>CMOS</i> <sup>*</sup> ) տրամաբանական տարր	7–15 Վ
3,3 Վ կամ 5 Վ լարումով միկրոպրոցեսոր	3,3–5 Վ

Գերմանացի գիտնականներ Ս. Կամպը, Հ. Գրաբեն և Դ. Նիտշը ցույց են տվել, որ *ՓՄՕԿ* և տրանզիստորա-տրանզիստորային տրամաբանությամբ (*SSS*) տրանզիստորների աշխատանքի խափանման համար անհրաժեշտ են դաշտի հարյուրավոր (200–800) կՎ/մ լարվածություններ<sup>8</sup>: Որպեսզի պարզ լինի, թե ինչպիսի հզորության աղբյուրներ պետք է կիրառվեն և ինչ հեռավորությունների վրա կարելի է հասնել ցանկալի արդյունքի (սարքի աշխատանքի խափանում), կազմվել է հաշվարկային ծրագիր՝ հիմնված Ֆրիսի բանաձևի վրա.

$$P_r = P_t * G_t * G_r * \left(\frac{\lambda}{4\pi r}\right)^2, \quad (1)$$

որտեղ  $P_r$ -ը աղբյուրից  $r$  հեռավորության վրա գրանցվող հզորությունն է,  $P_t$ -ն՝ աղբյուրի ճառագայթված հզորությունը,  $G_t$ -ն և  $G_r$ -ը ավեցիրի (հաղորդիչ) և ավեհավաքի (ընդունիչ) ուժեղացման գործակիցներն են, իսկ  $\lambda$ -ն աշխատանքային ալիքի երկարությունն է:

Քանի որ օբյեկտի ավեհավաքն ուղղված չէ դեպի ճառագայթիչը, ապա կարելի է ընդունել  $G_r=1$ -ի: Հարկ է նշել, որ եթե օբյեկտում տեղադրված է ուղղորդված ավեհավաք, ապա  $G_r$ -ի փոփոխման տիրույթը կարող է լինել շատ լայն՝ ինչպես մեկից շատ փոքր, այնպես էլ մեծ: Եթե տեղադրված է չուղղորդված ավեհավաք, ապա  $G_r=1$  պայմանը բավական մոտ կլինի իրականությանը: Որպես մուտքային պարամետրներ տրվում են  $P_t$ ,  $G_t$ ,  $r$  և  $\lambda$  մեծությունները և հաշվվում է  $P_R(r)$  կախումը:

<sup>\*</sup> *CMOS* (*complementary metal – oxide – semiconductor* (անգլ) – փոխլրացնող մետաղ – օքսիդ – կիսահաղորդիչ կառուցվածք, ՓՄՕԿ) – ինտեգրալային միկրոսխեմաների կառուցման կիսահաղորդչային տեխնոլոգիաների և դրան համապատասխանող սխեմատեխնիկայի հավաքածու:


<sup>8</sup> Steu M. Camp, H. Garbe and D. Nitsch. Influence of the technology on the destruction effects of semiconductors by impact of EMP and UWB pulses. "2002 IEEE International Symposium on Electromagnetic Compatibility Symposium Record". Minneapolis, 19–23 August 2002, Vol. 1, PP. 87–92:



Տրված  $P_t=1\text{GW} = 10^9\text{W}$ ,  $\lambda = 3 \cdot 10^{-2} = 3\text{cm}$ ,  $G_r=1$  պարամետրների համար գնահատվել են հասանելի հզորությունները և դաշտի լարվածությունը, որը հաշվարկվել է ըստ հետևյալ բանաձևի՝

$$E = \frac{\sqrt{30 \cdot P_t \cdot G}}{r} : \quad (2)$$

(1) և (2) բանաձևերի միջոցով կարելի է ավիքի տրված երկարության դեպքում ստանալ ճառագայթման հզորության և դաշտի լարվածության կախումները ճառագայթիչից եղած հեռավորությունից ավեցիր/ավեհավաք ուժեղացման գործակիցներից (տես նկ. 2) և նշագծել թիրախի՝ անօդաչու թռչող ապարատի՝ ԱԹԱ-ի վրա ազդեցության աստիճանները և դաշտի անհրաժեշտ լարվածությունները:



- 1 – ԱԹԱ-ի աշխատանքի ամբողջովին խափանման մակարդակ,  
 2 – ԱԹԱ-ի աշխատանքի մասնակի խափանման մակարդակ

Նկ. 2. Էլեկտրական դաշտի լարվածության կախումը հեռավորությունից ավեհավաքների ուժեղացման տարբեր գործակիցների և գլխավոր թերթիկի լայնքերի սահմաններում գտնվելու պարագայում

Որոշակի հեռավորությունների համար էլեկտրամագնիսական դաշտի հզորության և լարվածության արժեքները ճառագայթման տրված հզորության ( $P_t=10\text{GW}$ ,  $P_t=100\text{GW}$ ) դեպքում ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:


ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՀՋՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԱԴԲՅՈՒՐԻՑ ՈՐՈՇԱԿԻ ՀԵՌԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ՝ ԱԼԵՑԻՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՔՎՈՂ ՀՋՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Հեռավորություն (մ)	Հզորություն, Վտ ( $G_f = 45 \text{ dB}$ )	Դաշտի լարվածություն ( $G_f = 45 \text{ dB}$ )	Հեռավորություն (մ)	Հզորություն ( $G_f = 20 \text{ dB}$ )	Դաշտի լարվածություն ( $G_f = 45 \text{ dB}$ )
100	18022,8	308007,0	100	173205	$3,08 \cdot 10^6$
500	720,913	61601,4	500	34641	$6,16 \cdot 10^5$
1000	180,228	30800,7	1000	17320,5	$3,08 \cdot 10^5$
5000	7,20913	6160,14	5000	3464,1	$6,16 \cdot 10^4$

ա) Ճառագայթման հզորությունը 10 ԳՎտ    բ) Ճառագայթման հզորությունը 100 ԳՎտ


ՓՄՕԿ-ի և SSS տեխնոլոգիաների խափանման շեմային դաշտի լարվածությունների արժեքների հետ հաշվարկային արդյունքների բաղդատումը ցույց է տալիս, որ անգամ 100 ԳՎտ Ճառագայթային հզորությունների պարագայում էլեկտրոնային համակարգերի հավաստի խափանում կարելի է ստանալ մինչև 100 մ հեռավորությունների վրա: Հարկ է նշել, որ այստեղ խոսքը դաշտի ոչ թե գազաթնային հզորության, այլ միջինացված արժեքների մասին է: Այսինքն՝ եթե կիրառվեն շատ կարճ (օրինակ՝ նանովայրկյանային) ԷՄ իմպուլսներ, ապա կարճ ժամանակային միջակայքերում այդպիսի մեծ հզորությունների ապահովումը կդառնա իրատեսական:

Նկ. 3-ում ներկայացված է տրանզիստորա-տրանզիստորային տրամաբանությամբ աշխատող միկրոսխեմային վնասելու համար անհրաժեշտ ինտենսիվության կախումը 5 մկվ տևողությամբ ռադիոիմպուլսների կրկնման հաճախականությունից:



Նկ. 3. Միկրոսխեման վնասելու համար անհրաժեշտ ինտենսիվության կախումը ԳԲՀ իմպուլսների կրկնման հաճախականությունից:

Ռադիոճառագայթման ինտենսիվությունից SSS-ով աշխատող միկրոսխեմայի վնասման հավանականության կախումը պատկերված է նկ. 4-ում: Հավանականությունը հաշվված է որպես վնասվածքների թվի և հետազոտվող միկրոսխեմաների ընդհանուր թվի հարաբերություն:




Նկ. 4. Միկրոսխեմայի վնասման հավանականության կախումը 5 մկվ տևողությամբ ռադիոիմպուլսի հզորությունից

Ինտենսիվության շեմային արժեքի գոյությունը նշանակում է, որ վնասման ֆիզիկական մեխանիզմները գործի են դրվում ռադիոիմպուլսի հզորության որոշակի շեմային արժեքից մեծ հզորությունների պարագայում:


## 2. ԳԵՐԲԱՐՉՐ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՄԻԿՐՈԱԼԻՔԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՎԱԿՈՒՌՄԱՅԻՆ ԱՂՔՈՒՐՆԵՐ

Վերը նշված պայմաններին լավագույնս բավարարում են էլեկտրավակուումային աղբյուրները:

ՈՂ ակադեմիկոս Մեսյացը, կիրառելով միկրոպայթյունային կաթոդներ և արագագործ գերմեծ հոսանքների *Silicon on sapphire (SOS)* դիոդներ, ստեղծել է գերհզոր ռեյաստիվիստական ԳԲՀ աղբյուրներ (տես նկ. 5):



ա)



բ)

Նկ. 5. ա) («Սինուս-7») էլեկտրոնային արագացուցիչ. սանտիմետրային և դեցիմետրային տիրույթներում ԳԲՀ ճառագայթման հզորությունը՝ 5–6 ԳՎտ, իմպուլսի տևողությունը՝ 50 նվրկ, կրկնման հաճախականությունը՝ մինչև 100 Հց, բ) ԳԲՀ «Ռադան» գեներատոր. ճառագայթման հզորությունը՝ 300–1000 ՄՎտ, իմպուլսի տևողությունը՝ 0,3 նվրկ, կրկնման հաճախականությունը՝ մինչև 3,5 կՀց:

Ստորև ներկայացնենք ժամանակակից գերիզոր ԳԲՀ աղբյուրների հիմնական բնութագրերը (տես աղ. 3):

Աղյուսակ 3


ՈՒՆՅԱՏԻՎԻՍԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱՎԱԿՈՒՄԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹԻՉՆԵՐԻ ՈՐՈՇ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Գագաթնային հզորություն, ԳՎտ	Հաճախականություն, ԳՀց	ՕԳԳ, %	Իմպուլսի տևողություն, նվրկ	Էլեկտրոնային փնջի լարում, կՎ	Էլեկտրոնային փնջի հոսանք, կԱ
1.05	1.61	14.4	38	703	10.6
1	3.6	20	100	700	7
5.3	3.6	30	25	1200	15
2	3.755	30	110	820	8.1
5.06	8.25	25	13.8	1000	20
0.8	10	24	-	550	6
0.55	9.45	17	8	620	5.2
0.9	9.4	29	32	500	6.2
1.4	9.4	26	30	790	6.7
3	9.4	735	30	2000	20
1.1	38	~150	0.2	290	2.3
0.4	38	66	0.2	290	2.1
10 <sup>-4</sup>	140	0.1	1-2	100	1
6·10 <sup>-4</sup>	340	0.6	1.66	100	0.9

Սակայն այս աղբյուրներն իրենց մեծ չափերի պատճառով հարմար չեն չարժանական համակարգերում կիրառման համար:

3. ԷՄԻ-ՆԵՐԻ ԳԵՆԵՐԱՑՈՒՄԸ ՊԱՅԹՅՈՒՆԻ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓՈՆԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Պայթուցիկի էներգիան ԷՄ իմպուլսների կերպափոխիչը՝ ԷՄ ռումբը (ԷՄՐ), որի կառուցվածքը և էլեկտրական սխեման պատկերված են նկ. 7-ում, աշխատում է հետևյալ կերպ. մարտկոցի (1) լարումը լարման փոխակերպիչի (2) միջոցով բարձրացվում է մինչև ~5 կՎ, որը լիցքավորում է համառանցք կոնդենսատորային մարտկոցը (3): Բանալին (Բ) միացնելու ժամանակ (տես նկ. 6) կոնդենսատորները պարպվում են հիմնական կոճի (5) վրա, ինչի հետևանքով հոսանքն սկսում է աճել: Հոսանքի աճմանը զուգընթաց աճում է նաև կոճում առաջացած մագնիսական դաշտը: Երբ հոսանքը (մագնիսական դաշտը) հասնում է իր առավելագույն արժեքին, կոճի մեջ տեղադրված գլանաձև հաղորդչում եղած պայթուցիկը (4) գործի է դրվում այնպես, որ պայթյունն սկսվում է գլանի մի ծայրում և տարածվում դրա երկայնքով, ինչպես պատկերված է նկ. 6-ի Ն. 1 ներդիրում:



Նկ. 6. Էլեկտրամագնիսական ռուբը. ա) ԷՄՈ-ի կառուցվածքը, բ) ռուբի էլեկտրական սխեման ըստ [3]-ի. 1 – սնուցման աղբյուր, 2 – լարման փոխակերպիչ, 3 – կոնդենսատորային մարտկոց,  $P$  – բանալի, 4 – պայթյուցիկ, 5 – հիմնական կոճ, 6 – բալաստային կոճ, 7 – էներգիայի փոխանցման ցանց, 8 – վիրկատոր, 9 – ճառագայթիչ ալեցիր, 10 – ապահովիչ, Ներդիրներ. Ն. 1. – հիմնական զենքատորի կառուցվածքը, Ն. 2. – ապահովիչի կառուցվածքը, Ն. 3. – վիրկատորի կառուցվածքը


Պայթման ընթացքում գլանաձև հաղորդիչն ընդարձակվում է, ինչի հետևանքով արագորեն փոխվում է կոճում եղած մագնիսական հոսքը, ինչն իր հերթին հանգեցնում է հսկայական էլեկտրաշարժ ուժի (լարման) զենքացման: Հաշվարկները ցույց են տալիս, որ այս ճանապարհով կարելի է ստանալ ԳՎտ-ների կարգի հզորությամբ և տասնյակ միկրովայրկյաններ տևողությամբ էլեկտրական իմպուլսներ:

Իմպուլսների հզորությունը մեծացնելու նպատակով հաճախ ԷՄՈ ռուբի մեջ ավելացվում է երկրորդ՝ բալաստային կոճ (6), որի ելքը կարճ միացված է հատուկ ապահովիչի (10) միջոցով (տես նկ. 6): Ապահովիչի տեսքը պատկերված է նկ. 6-ի Ն.2 ներդիրում: Ապահովիչը հաշվարկվում է այնպես, որ շղթան անջատվի այն պահին, երբ հոսանքը հասնի առավելագույն արժեքին: Այս դեպքում էլեկտրական իմպուլսի ամբողջ էներգիան կենտրոնանում է կարճ ժամանակահատվածում, ինչի շնորհիվ իմպուլսի հզորությունը կարող է հասնել տասնյակ, կամ նույնիսկ հարյուրավոր ԳՎտ-ների: Ստացվող էլեկտրական իմպուլսի տևողությունը կարող է կազմել միկրովայրկյաններ, հետևաբար նրա սպեկտրի առավելագույն հաճախականությունները կլինեն ՄՀց-ների կարգի: Արդյունավետ կերպով, առավել ևս ուղղորդված ձևով այսպիսի հաճախականություններ ճառագայթելու համար անհրաժեշտ են չափազանց մեծ ալեցիրներ, որոնց պատրաստումը իրատեսական չէ: Այդ

պատճառով, ստացված էլեկտրական էներգիան հնարավորինս ավելի արդյունավետ կերպով ճառագայթելու նպատակով հաճախ այն օգտագործվում է որպես որևէ ԳԲՀ գեներատորի սնուցում: Սակայն ակնհայտ է, որ մեկանգամյա օգտագործման գեներատորները պետք է լինեն հնարավորինս պարզ, հուսալի և էժան, իսկ ճառագայթման որակին ներկայացվող պահանջները կարող են անհամեմատ մեղմ լինել:

Որպես ԳԲՀ գեներատոր հաճախ օգտագործվում է վիրտուալ կաթոդով գեներատորը՝ այսպես կոչված վիրկատորը (8), որը լավ է բավարարում վերը նշված պահանջներին: Վիրկատորը հոծ կաթոդով և ցանցածն անոդով երկէլեկտրոդ լամպ է (տես նկ. 6, Ն. 3): Մեծ լարման պատճառով կաթոդից տեղի է ունենում ավտոէլեկտրոնային էմիսիա, էլեկտրոնները ձեռք են բերում շատ մեծ արագություն և անարգել անցնում են ցանցածն անոդով: Որոշ ճանապարհ անցնելուց հետո դրանք կանգ են առնում և սկսում են վերադառնալ դեպի անոդ: Այսպիսով՝ էլեկտրոնների շրջադարձի տեղում առաջանում է լիցքերի կուտակում և ձևավորվում է վիրտուալ կաթոդ: Դեպի անոդ վերադարձող էլեկտրոնները մինչև անոդով գրավվելը կատարում են տատանումներ նրա շուրջը, և, հետևաբար, ճառագայթում են:

Վիրկատորի կառուցվածքի հատուկ ընտրությամբ հնարավոր է ստանալ համեմատաբար ուղղորդված ճառագայթում (մոտ  $30^\circ$  դիագրամի բացվածքով): Նկ. 7-ում ներկայացված են մի քանի հիմնական պարամետրներ, որոնք բնորոշ են ուղղորդված ճառագայթմամբ վիրկատորին:



Նկ. 7. Ուղղորդված ճառագայթմամբ վիրկատորի հիմնական պարամետրները

Ինչպես երևում է վիրկատորի ճառագայթման սպեկտրից, այն հիմնականում ճառագայթում է ԳՀց տիրույթում, հետևաբար հնարավոր է ճառագայթման ուղղորդվածությունը կառավարել և ճառագայթման տվյալ հզորության դեպքում դրա միջոցով ընտրել ազդեցության հեռավորությունն ու գոտին:

Չնայած իրենց հսկայական էներգետիկ պոտենցիալին՝ էլեկտրամագնիսական ռունքերն ունեն նաև մի շարք թերություններ, մասնավորապես՝

- անպայման պետք է սնուցվեն հզոր էլեկտրական մարտկոցներով,
- անպայման պետք է ներառեն կուտակիչ կոնդենսատորներ, որոնք պետք է ապահովեն տասնյակ հազարավոր ամպերների հասնող պարպման հոսանք,

– անհրաժեշտ է ապահովել առավելագույն հոսանքի և պայթման համաժամանակությունը:


Այս թերությունները շրջանցելու նպատակով առաջարկվում է էլեկտրամագնիսական ռումբի պատրաստման այլ տարբերակ, որի էությունը պարզաբանենք ստորև:

Հաշվարկները ցույց են տալիս, որ գոյություն ունեցող ԷՄ ռումբերում մագնիսական դաշտերը չեն գերազանցում 1Տ-ն: Հետևաբար, եթե ԷՄ ռումբի հիմնական կոճի մեջ մագնիսական դաշտը փոփոխվի հաստատուն մագնիսը պայթեցմամբ արագ կերպով տեղաշարժելու միջոցով, ապա կոճում գեներացվող էլեկտրական իմպուլսը կլինի ստանդարտ՝ ԷՄ ռումբերում գեներացվող իմպուլսին համանման:

Արված դատողությունների հիման վրա առաջարկվել է ԷՄ ռումբի մի տարբերակ, որն իր կառուցվածքով էապես ավելի պարզ է և համեմատաբար հեշտ իրականանալի:

Ըստ գնահատականների՝  $B_0 \approx 1$  Տ մագնիսական դաշտի և  $S \approx 150$  մ<sup>2</sup> մակերեսով գալարների դեպքում, եթե մագնիսական դաշտի փոփոխման ժամանակը  $\Delta t \sim 3$  մկվրկ է, ապա կոճի մեկ գալարում կառաջանա  $\sim 50$  Վ լարում:

Նախնական փորձարկումների ժամանակ 12 մմ տրամագծով մագնիսների դեպքում 6 գալար ունեցող կոճում գեներացվել է  $\sim 200$  Վ լարում: Ստացված իմպուլսի տատանագիրը բերված է նկ. 8-ում:



Նկ. 8. 12 մմ տրամագծով մագնիսներով և 6 գալար ունեցող կոճով ԷՄՈ-ով գեներացրած իմպուլսի տատանագիրը

Հետագա փորձարկումների ժամանակ ստացվել է  $\sim 40$  մվրկ տևողությամբ մինչև 100 կՎ զագաթնային արժեքով լարում:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ԷՄ իմպուլսների գեներացման առաջարկվող տարբերակը հակառակորդի էլեկտրոնային համակարգերի խոցման տեսակետից հեռանկարային է:

Համակարգի բաղադրիչների բարելավման միջոցով կարելի է կարգերով մեծացնել ԷՄՈ-ի հզորությունը: Այդ դեպքում առաջարկվող տարբերակը կարող է մրցակցել գոյություն ունեցող նմանատիպ համակարգերի հետ:

4. ՀՋՈՐ ՃԱՌԱԳԱՅԹԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ ՓՈՒԼԱԿՈՐԿԱԾ ՑԱՆՑԵՐՈՒՄ

Հակառակորդի ռադիոսարքավորանքի խափանման համար միկրոալիքային, կամ ԳԲՀ, տիրույթի էլեկտրամագնիսական էներգիայի օգտագործումը և ազդեցության մեխանիզմները քննարկվել են նախորդ գլուխներում: Պարզվել է, որ մեծ հեռավորությունների վրա անհրաժեշտ ազդեցություն ապահովելու համար պետք է բավականաչափ հզոր միկրոալիքային էներգիայի աղբյուր: Ֆրիսի հեռագրային հավասարման հիման վրա կատարվել են որոշակի գնահատումներ, որոնք ցույց են տալիս, որ անհրաժեշտ են տասնյակ և հարյուրավոր ԳՎտ հզորությամբ աղբյուրներ, որպեսզի ստացվի ցանկալի արդյունք, այն էլ՝ ոչ մեծ հեռավորությունների վրա:

Անդրադառնալով Ֆրիսի բանաձևին՝ նկատենք, որ որոշակի հեռավորության վրա ԷՄ հզորությունը ուղիղ համեմատական է ճառագայթվող հզորությանը, ինչը ենթադրում է, որ պետք է ունենալ մեծ հզորությամբ աղբյուրներ: Միևնույն ժամանակ, այդ հզորությունը համեմատական է աղբյուրի ալեցիրի ուժեղացման գործակցին: Այս հանգամանքը խիստ կարևոր է այն տեսակետից, որ ուղղորդված ճառագայթում ապահովելու շնորհիվ հնարավոր է ստանալ դաշտի համեմատաբար փոքր հզորություններով էապես ավելի մեծ լարվածություններ, քան մեծ հզորությամբ չուղղորդված ճառագայթման դեպքում: Քանի որ շատ մեծ հզորությամբ ԳԲՀ աղբյուրների պատրաստումը բավական բարդ և թանկ գործընթաց է, ապա կարելի է այս բարդությունը շրջանցել, եթե կիրառվեն հույժ մեծ ուժեղացումով ալեցիրի հետ համադրված մեծ հզորությամբ համեմատաբար մատչելի ԳԲՀ աղբյուրներ: Տվյալ դեպքում որպես ԳԲՀ աղբյուրներ կարող են օգտագործվել մեծ հզորությամբ տրանզիստորների հիմքի վրա մշակված աղբյուրները, որոնք վակուումային աղբյուրների նկատմամբ ունեն մի շարք առավելություններ, օրինակ՝ փոքր չափեր, ցածր ինքնարժեք և այլն: Որպես մեծ ուժեղացումով ալեցիր կարող է ծառայել փուլավորված ալեցիրային ցանցը (ՓԱՑ):


ՓԱՑ-ի կիրառումը հնարավորություն է տալիս ոչ միայն ստանալու մեծ ուժեղացումներ, այլև էլեկտրական եղանակով ապահովելու դիագրամի ճոճքը, կամ տեսածրումը, և, միևնույն ժամանակ, կառավարել տարրերի փուլային բաշխվածությունը: ՓԱՑ-ի շնորհիվ կարող ենք ոչ միայն ստանալ ցանկալի ուղղվածությամբ դիագրամ (ՌԻԴ), այլև անհրաժեշտության դեպքում վերակառուցել դիագրամը՝ այն տրոհելով բազմաթիվ թերթիկների (*multi-beam pattern*): Այս հանգամանքը հույժ կարևոր է, երբ գործ ունենք, օրինակ, ԱԹԱ-ների պարսերի հետ:

Արդեն գոյություն ունեն վերը նշված սկզբունքով աշխատող համակարգեր: Դրանց հակիրճ նկարագրությունը բերենք ստորև:

ՌԷշադրության է արժանի «Էպիրուս Լեոնիդաս» *“Epirus Leonidas”* համակարգը:

Համաձայն աղբյուրի՝ այս համակարգն ուղղորդված էներգիայի զինատեսակ է, որն ունակ է ԱԹԱ-ների պարսի հարձակումից պաշտպանելու որոշակի տարածք (տես նկ. 9):






Սկ. 9. «Էպիրուս Լեոնիդաս» (*“Epirus Leonidas”*) համակարգը

Այս համակարգն օգտագործում է ոչ թե ավանդական հրթիռային խոցման կամ պայթեցման սկզբունքը, այլ ուղղորդված ճառագայթումը՝ խաթարելով ԱԹԱ-ների աշխատանքը: Այն ունակ է պաշտպանելու ինչպես փոքր տարածքներ, այնպես էլ ամբողջ օդանավակայաններ: Ըստ էության, դա բազմաթիրախ համակարգ է, որն ունի փոքր ծավաղ կցորդի չափեր: Վայրկյանում ճառագայթում է հազարավոր ԷՄ իմպուլսներ: ՈՒԴ-ի ճշգրիտ ձևավորման շնորհիվ հնարավորություն ունի ընտրելու բազմաթիվ նշանակետերից մեկը, կամ միանգամից հարձակվելու մի ամբողջ տարածքի վրա՝ գործելով լայն ՈՒԴ-ով ճառագայթման բանելակարգում և ստեղծելով «ուժային դաշտ», որից չի կարող անվնաս անցնել և ոչ մի էլեկտրոնային սարք:

Որպես այս համակարգի դրական կողմեր նշվում են.

- համակարգի չափերի էական նվազեցման շնորհիվ կիսահաղորդչային տրանզիստորային աղբյուրների և կոմպակտ ՓԱՑ-ի կիրառումը,
- ունակությունը կատարելու վայրկյանում 1000 «կրակոց» ինչպես խիստ ուղղորդված բանելակարգով՝ մեկ թիրախի ուղղությամբ, այնպես էլ լայն ՈՒԴ-ով՝ ԱԹԱ-ների պարսի ուղղությամբ,
- օպերատորային համակարգի անվտանգությունը:

«Էպիրուս Լեոնիդաս» (*“Epirus Leonidas”*) համակարգում մեծ հզորությամբ կիսահաղորդչային աղբյուրների կիրառումը հնարավորություն է տալիս ունենալու նվազ չափեր: Ստորև գրաֆիկորեն ներկայացված են հասանելի և կանխատեսվող հզորությունների արժեքները (տես նկ. 10):



Սկ. 10. Si2-i, GaAs- ի, SiGe- ի, InP- ի և GaN- ի հիման վրա հզորության ուժեղարարների հագեցման հզորությունների աճման 20-ամյա դինամիկան 4 ԳՀց-ից ցածր հաճախական տիրույթում:

Ինչպես երևում է նկ. 10-ից, մոտ տարիներին կիսահաղորդչային ուժեղարարի էլքային հզորությունները կհասնեն 80-90 dBm-ի, ինչը կազմում է  $10^5$ – $10^6$  վտ: Նախնական գնահատումները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ ՌԴ-ի թվային ձևավորմամբ կիսահաղորդչային ԳԲՀ աղբյուրների և ՓԱՑ-ի համադրման միջոցով կարելի է կառուցել մի այնպիսի համակարգ, որն ունակ լինի ուղղորդելու հզոր ԷՄ ճառագայթումը մեկ կամ բազմաթիվ թիրախների ուղղությամբ՝ ապահովելով հեռահար ազդեցություն ԱԹԱ-ների էլեկտրոնային և ռադիո-սարքավորանքի վրա:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով գիտական հրապարակումների հավաստի տվյալների վերլուծության, կիսահաղորդչային էլեկտրական շղթաների հետ իմպուլսային էլեկտրամագնիսական դաշտերի (ԻԷՄԴ) փոխազդեցության համակարգչային մոդելավորման, ինչպես նաև պայթյունային եղանակով ԻԷՄԴ գեներացման փորձարկումների արդյունքների վրա՝ կարող ենք եզրակացնել, որ գեներացման պայթյունային եղանակը առավել իրատեսական է և արդյունավետ, հատկապես՝ ԱԹԱ-ների պարսերի դեմ պայքարում:

Նշված եղանակի առավելություններից է նաև հրետանային արկի կամ հրթիռի միջոցով գեներատորային գլխիկի տեղափոխման հնարավորությունը: Այս դեպքում վերանում է հեռավորությամբ սահմանափակված ուղղորդված ճառագայթման օգտագործման անհրաժեշտությունը:

## ВООРУЖЕНИЕ

### ПОРАЖАЮЩЕЕ МИКРОВОЛНОВОЕ ОРУЖИЕ: НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ТЕОРИИ И КОНСТРУКЦИИ

*А. А. АХУМЯН, член-корреспондент НАН РА, доктор физ-мат. наук, научный руководитель ИРФЭ НАН РА, профессор факультета радиофизики и электроники ЕГУ; Х. В. НЕРКАРАРЯН, доктор физ-мат. наук, декан факультета радиофизики и электроники ЕГУ; А. О. МАКАРЯН, канд. физ-мат. наук, заведующий кафедрой радиофизики и электроники факультета радиофизики и электроники ЕГУ; О. С. АРОЯН, канд. тех. наук, заведующий кафедрой телекоммуникаций и обработки сигналов факультета радиофизики ЕГУ; К. Р. МИРЗОЯН, заведующий отдела ООО «Ферон»*

#### РЕЗЮМЕ

В последние годы ведущие в военной сфере государства уделяют большое внимание вопросам разработки, совершенствования и производства электромагнитного, в частности СВЧ, оружия, относящегося к классу нелетальных типов вооружения. К СВЧ относится излучение в частотном диапазоне 0,3–300 ГГц. При достаточной мощности СВЧ импульсы могут вывести из строя бортовые радиоэлектронные и оптические устройства, а также оказать вредное воз-

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



Դրվագներ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Ռազմական դիվանագիտությունը  
ՀՀ անվտանգային միջավայրում.  
հեռանկարներ և մարտահրավերներ» խորագրով գիտաժողովից  
Երևան, դեկտեմբեր

## ՈՒՂՈՐԴՎԱԾ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԶԵՆՔԵՐ\*



ա) ընդհանուր տեսքը



բ) լազերային գլխիկը

«Ռատ»  
(Ռուսաստան)



ա) ընդհանուր տեսքը



բ) լազերային գլխիկը

«Սայլենտ հանտեր»  
(Չինաստան)

---

\* Ներկայացված նմուշներին վերաբերող տվյալները տես էջ 128–130:



«ՆԵԼ ԷՄԴԻ»  
(ԱՄՆ)



«ՍկայԼոկ 3»  
(Իսրայել)





«Պանցիր-Ս1»  
(Ռուսաստան)



«Սայլենտ գարդիան»  
(ԱՄՆ)

действие на человеческий организм. СВЧ-оружие является эффективным средством защиты объектов от нападения беспилотных летательных аппаратов.

СВЧ-оружие представляет собой совокупность источников мощного СВЧ излучения, средств обнаружения цели, а также тех средств управления излучением, которые обеспечивают направленность и концентрацию электромагнитной энергии, предназначенной для поражения объектов противника.

В статье на основе достоверных данных, опубликованных в научной литературе по данной тематике, компьютерного моделирования взаимодействия импульсных электромагнитных полей (ИЭМП) с полупроводниковыми электрическими цепями, а также предварительных экспериментальных исследований генерации ИЭМП взрывным методом делается вывод о наибольшей реалистичности взрывного метода и его эффективности в борьбе со стаями БПЛА. Одним из преимуществ данного способа является возможность транспортировки генераторной головки с использованием ракет или артиллерийских снарядов. При этом исчезает необходимость использования направленного излучения, приводящего к ограничению дальности поражения.

## ARMAMENT

### MICROWAVE WEAPON OF DESTRUCTION: SOME ISSUES OF THE THEORY AND DESIGN

*A. A. HAKHUMYAN, Correspondent Member, NAS, RA, Doctor in Physics and Mathematics, Academic Supervisor, IRPhE, NAS, RA, Professor, Department of Radiophysics and Electronics, YSU; Kh. V. NERKARARYAN, Doctor in Physics and Mathematics, Dean, Department of Radiophysics and Electronics, YSU;*

*A. H. MAKARYAN, PhD in Physics and Mathematics, Head, Chair of Physics and Electronics, Department of Radiophysics and Electronics, YSU; H. S. HAROYAN, PhD in Technical Sciences, Head, Chair of Telecommunication and Signal Processing, Department of Radiophysics and Electronics, YSU;  
K. R. MIRZOYAN, Head, Department, "FERON" LTD*

#### SUMMARY

In recent years the leading states in the military sphere have been paying great attention to the issues development improvement and production of electromagnetic, in particular microwave, weapons which belong to the class of non-lethal weapons. Microwave radiation includes radiation in the frequency range of 0.3 – 300 GHz. In case of sufficient power the microwave impulses can disable on-board radio-electronic and optical devices, as well as have a harmful effect on the human body. Microwave weapons are an effective means of protecting objects from the attack by unmanned aerial vehicles.

The microwave weapon is a complex of high-power microwave radiation sources, means of target identification, as well as those means of radiation control, which provide for the direction and concentration of the electromagnetic energy, designated for the destruction of adversary objects.

Based on the reliable data in the published scientific literature concerning the given topic, the computer modeling of the interaction of pulsed electromagnetic fields with semi-conductive electric circuits, as well as preliminary experimental studies of generation of pulsed electromagnetic fields with the explosive method, the article concludes upon the feasibility of the explosion method and its effectiveness in countering UAV flocks. One of the advantages of the given method is the possibility of transporting the head generator by means of rockets and artillery shells. Withal, the necessity to use the directed radiation, leading to the limitation of the range of engagement, disappears.



**ՌԱԶՄԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՆԱՆՈՏԵԽՆՈՒՈՒԳԻԱՅԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

*Ա. Հ. ՄԵԼԻՔՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, Հայ-ռուսական համալսարանի պրոֆեսոր*



Մարդկության տեխնիկական զարգացման շարժիչ ուժերից մեկը «սրի և վահանի» փոխապայմանավորված հավասարակշռության ապահովումն է: Դրանց կատարելագործման կարևոր ուղղություններից է հարձակողական ու պաշտպանողական զենքերի տեսակարար արդյունավետության մեծացումը, այսինքն՝ հզորության մեծացումը կշռի նվազեցմամբ: Ինքնին հասկանալի է, որ դա լուրջ խնդիրներ է ստեղծում կիրառվող նյութերը անհրաժեշտ հատկություններով օժտելու տեսակետից:

Այսպես. հայտնի է, որ ռազմական էկոնոմիկան հենվում է ժողովրդական տնտեսության հիմքային ճյուղերի վրա, մասնավորապես՝ նոր տեխնոլոգիաների կիրառությամբ ստեղծվող նոր կառուցվածքային նյութերի արտադրության վրա<sup>1</sup>: Ռազմատեխնիկական ոլորտում, սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՄՌՏ) ստեղծման ու մշակման ասպարեզում, ըստ էության, հեղափոխություն կատարվեց այսպես կոչված նանոտեխնոլոգիաների կիրառման շնորհիվ: Նանոտեխնոլոգիա է կոչվում նոր օգտակար նյութերի ստեղծումը նանոմետրային (*nm*) մասշտաբով նյութի հետ կատարվող գործողությունների, ինչպես նաև նման գերփոքր չափերի նյութերին բնորոշ նոր երևույթների ու հատկությունների օգտագործման միջոցով<sup>2</sup>:

Նանոտեխնոլոգիաները կիրառվում են ռազմական բնագավառի բազմաթիվ ուղղություններում, և էապես մեծացնում են զինված ուժերի մարտական ներուժը՝ դրանց թվաքանակի պահպանման և անգամ կրճատման դեպքում: Որպես նման ուղղություններ կարելի է նշել, մասնավորապես, ինքնավերականգնվող համակարգերի, էներգիայի պաշարների կուտակման, կապի, քիմիական ու կենսաբանական աղտոտվածության հայտնաբերման և վնասագերծման միանգամայն նոր միջոցների մշակումը, անհատական պաշտպանական միջոցների (օրինակ՝ թեթև, բայց գերդիմացկուն զրահաբաձկոնների), օպտոէլեկտրոնային սարքերի ու դրանց տարրերի, ջերմային, դիտողական, էլեկտրական տվիչների, զգայարարների ու վերլուծիչների

<sup>1</sup> Տես *Ա. Փ. Գաբիտով, Օ. Յու. Եփրեմով. Экономика. Учебник для военных вузов. Изд. 2-е. М., 2020, с. 258:*

<sup>2</sup> Տես *Ադրիան Մ. Կոնեսկու. Нанотехнологии и глобальная безопасность. "Connections", the Quarterly Journal, 2015, Vol. 15, N 2:*

ստեղծումը, ռոբոտաշինությունը և այլն: Այսպես, 2000-ական թվականների սկզբին ԱՄՆ-ն Աֆղանստանում հետախուզական նպատակներով փորձարկեց այսպես կոչված «խելացի փոշի»: Ղա գերմանրաչափ ռոբոտների (1/4 խորանարդ դյույմ ծավալով) «համաստեղություն» է՝ միավորված մեկ կենտրոնական համակարգով: Յուրաքանչյուրն օժտված է 8 կբայտ հիշողությամբ, ջերմատվիչով, տեսախցիկով, միկրոֆոնով, քիմիական զգայարարով, անլար կապի համակարգով: Նախատեսվում է, որ մոտ ապագայում ռազմական խնդիրներ կատարելու համար դրանք կկարողանան ինքնուրույնաբար միավորվել և շնորհիվ սնուցման ներսարված աղբյուրների՝ տարիներ շարունակ կատարել վերահսկողական առաջադրանքներ՝ մնալով միևնույն տեղում<sup>3</sup>:

Նանոտեխնոլոգիաների առջև դրված խնդիրների լուծման համար զարգացած պետությունները կատարում են հսկայական ֆինանսական ներդրումներ, որոնց չափերը համեմատելի են ատոմային էներգետիկայի և տիեզերագնացության ոլորտներում կատարվող ներդրումների հետ: Եվ իհարկե, պետք է ունենալ փորձառու ինժեներների և գիտնականների մի մեծ բանակ:

Հաշվի առնելով ռազմական ոլորտի համար նոր նանոյութերի ստեղծման հարցի կարևորությունը՝ համառոտակի ուսումնասիրենք նյութագիտության արդի վիճակն ըստ որոշ՝ ռազմական ոլորտին առնչվող, ուղղությունների:

\* \* \*

Հասարակության զարգացման ամենավաղ շրջանը կոչվում է քարի դար, հաջորդը՝ բրոնզի դար: Եթե զենք դարձնելու համար քարի մշակումը պահանջում էր միայն ֆիզիկական ուժ (ինչպես նաև որոշ հմտություն), ապա պղնձի և անագի համաձուլվածք ներկայացնող բրոնզն օգտագործելու համար նախ և առաջ անհրաժեշտ էր այն «համադրել» (սինթեզել): Այդ պրոցեսը հնարավոր դարձավ պղնձի և անագի մշակման եղանակների հայտնագործման և դրանց կատարելագործման շնորհիվ: Այսպիսով՝ նյութագիտությունը կարելի է համարել բնական գիտություններից ամենահինը, քանի որ դրա առաջին քայլերը վերաբերում են մ. թ. ա. երրորդ հազարամյակին: Ինչպիսի՞ն է նյութագիտությունը դրանից հինգ հազար տարի անց:

Ինչպես վերը նշեցինք, մենք այստեղ կքննարկենք ժամանակակից նյութագիտությանը վերաբերող այն խնդիրները, որոնք կապված են ռազմական տեխնիկայի զարգացման հետ և առավել ցայտուն կերպով արտացոլում են ժամանակակից նյութագիտության զարմանալի ձեռքբերումներն ու հնարավորությունները: Ղրանք են՝ անսովոր հատկություններով օժտված նոր նյութերի ստեղծումը (սինթեզումը) և ուսումնասիրությունը, ինչպես նաև դեռևս չսինթեզված նյութերի հատկությունների կանխատեսումը:

Միևնույն ժամանակ, նշենք, որ խնդիրների մի ընդարձակ դաս նվիրված է նոր նյութերի և էլեկտրամագնիսական դաշտի փոխազդեցությանը: Բանն

<sup>3</sup> Տես «Обзор. Нанотехнологии в военном деле». «NANO NEWS NET», 19.03. 2008 (<https://www.nanonewsnet.ru/blog/nikst/obzor-nanotekhnologii-v-voennom-dele>):

այն է, որ կապը իրագործվում է տարբեր հաճախականություններ ունեցող ալիքներով, ինչպես նաև հակառակորդի գանազան ռազմական օբյեկտների ու նշանակետերի հայտնաբերումը, ընդամին շատ մեծ հզորությամբ իմպուլսը կարող է շարքից հանել նրա կենդանի ուժը կամ տեխնիկան, մարդու օրգանիզմի վրա յուրահատուկ վնասակար ազդեցություն է ունենում նաև միջուկային ռեակցիայի ժամանակ առաջացող ճառագայթումը և այլն: Էլեկտրամագնիսական ճառագայթման ալիքի երկարությունների սպեկտրը անվերջ լայն է, ընդամին դրա առանձին տիրույթներին պատկանող ալիքը յուրովի է փոխազդում նյութի հետ: Նույնը կարելի է ասել տարբեր հզորությամբ ալիքների մասին: Այդ պրոցեսների մեխանիզմների բացատրությունը բավական ծավալուն է, ուստի մենք նախատեսել ենք այդ հարցերը պարզաբանել առանձին հոդվածում:

Իսկ այժմ ներկայացնենք նյութագիտության մի քանի նվաճումները, որոնք կապված են նանոնյութերի եզակի և արտասովոր հատկությունների հետ:

1. Այս մասում մենք կներկայացնենք ժամանակակից նյութագիտության որոշ տպավորիչ նվաճումներ:


Առաջին մասը նվիրված է ածխածնին և դրա ատոմներից կազմված մի քանի կառուցվածքների: Ի դեպ, կյանքի և գիտության տարբեր ոլորտներում այդ քիմիական տարրի դերն այնքան բարձր է գնահատվում, որ նրան նվիրված է անգամ «Կարբոն» (*“Carbon”*) կոչվող գիտական ամսագիր, որի ազդեցության գործակիցը 9, 594 է<sup>4</sup>: Բոլորիս քաջ հայտնի են գրաֆիտը և ալմաստը, ընդ որում, վերջինս բնության ստեղծած ամենակարծր նյութն է, և շնորհիվ այդ հատկության՝ ալմաստից են պատրաստում կտրող և մակերևույթ մշակող գործիքներ: Ի տարբերություն ալմաստից, գրաֆիտը շատ փխրուն է և կարող է հետք թողնել այլ նյութերի մակերևույթներին: Դա է պատճառը, որ մատիտների համար ծողեր են պատրաստում գրաֆիտից:

Մեխանիկական և ֆիզիկական հատկությունների այդքան մեծ տարբերությունը բացատրվում է գրաֆիտի և ալմաստի բյուրեղային ցանցերի կառուցվածքի առանձնահատկություններով, իսկ դա էլ պայմանավորված է ածխածնի ատոմի էլեկտրոնային կառուցվածքով: Յուրաքանչյուր ատոմ ունի 12 էլեկտրոններ, որոնցից քիմիական կապ են ապահովում չորսը: Ալմաստի բյուրեղում յուրաքանչյուր ատոմ նույն հեռավորության վրա գտնվող չորս հարևանների հետ կապված է այսպես կոչված համարժեքական (կովալենտ) կապերով: Նշենք, որ տվյալ կապերը բոլոր քիմիական կապերից ամենաուժեղն են և ապահովվում են յուրաքանչյուր ատոմի մեկական էլեկտրոնի մասնակցությամբ:

Պատկերացնենք մի կանոնավոր քառանիստ, որի կենտրոնում գտնվում է ածխածնի մեկ ատոմ, իսկ չորսը դրա զազաթներում են, ընդ որում, ձգողության ուժն ազդում է կենտրոնը զազաթի հետ միացնող հատվածի ուղղությամբ: Յուրաքանչյուր զազաթնային ատոմ իր հերթին մի այլ քառա-

<sup>4</sup> Steu “Carbon”- Journals” (<https://www.journals.elsevier.com/carbon>):

Արհեստի կենտրոնում է գտնվում, և այս պատկերը կրկնվում է տարածության մեջ (տես Նկ.1, ա): Նշենք, որ երկու մերձավոր հարևանների միջև հեռավորությունը 0,15 նմ է:



Նկ. 1. Ածխածնի բյուրեղական ցանցերի պատկերներ

Նկ. 1, բ-ում պատկերված է գրաֆիտի բյուրեղային ցանցի մի տեղամաս: Այն շերտավոր է, ընդ որում, շերտերի միջև հեռավորությունը մոտ երկու անգամ մեծ է միջատոմային հեռավորությունից: Ուստի շերտերի միջև եղած կապը միջատոմային կապից թույլ է, ինչի հետևանքով էլ գրաֆիտին բնորոշ է փխրունությունը: Գրաֆիտն օժտված է մի շարք օգտակար ֆիզիկական հատկություններով՝ մեծ էլեկտրահաղորդականությամբ, քիմիական կայունությամբ, ջերմակայունությամբ, ինչով էլ պայմանավորված են գիտության և տեխնիկայի բնագավառներում, ինչպես նաև ռազմական ոլորտում դրա կիրառությունները: Մասնավորապես՝ հայտնի են գրաֆիտային ռումբերը, որոնք դասակարգվում են որպես ոչ մահաբեր զինատեսակ և շարքից հանում են էլեկտրակայաններն ու էլեկտրահաղորդման գծերը<sup>5</sup>:


Գրաֆիտի բյուրեղային ցանցի կառուցվածքը հայտնի դարձավ միայն 1962 թ.՝ շնորհիվ էլեկտրոնային մանրադիտակի գյուտի: Սակայն գրաֆիտից ընդամենը մեկ ատոմային շերտ ունեցող կառուցվածք անջատելու եղանակը, որի հեղինակները 2004 թ. արժանացան Նոբելյան մրցանակի, հնարավորություն տվեց մանրակրկիտ ուսումնասիրելու այդ կառուցվածքը, որն անվանվեց գրաֆին<sup>6</sup> (*graphene*): Պարզվել է, որ գրաֆինի ամրությունը ապշեցուցիչ է. այն դիմանում է 100 անգամ ավելի մեծ մեխանիկական լարման, քան նույն հաստությունն ունեցող պողպատի թիթեղը: Ոչ պակաս զարմանալի են դրա էլեկտրոնային հատկությունները. գրաֆինը ցուցաբերում է Հուլի քվանտային էֆեկտ, իսկ հաղորդականության էլեկտրոնի էֆեկտիվ

<sup>5</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես, օրինակ, *А. Перенджиев. Подробности о графитовых бомбах, которыми в Киеве угрожают России. «Военное обозрение», 4 февраля 2019 г.* (<https://topwar.ru/153512-podrobnosti-o-grafitovyh-bombah-kotorymi-v-kieve-ugrozajut-rossii.html>):

<sup>6</sup> *Stu Li Guoxing, Li Yuliang, Liu Huibiao, Guo Yanbing, Li Yonjun and Daoben Zhu. Architecture of graphdiyne nanoscale films. "Chemical Communications", 2010, Vol. 46, Issue 19:*

զանգվածը հավասար է գրոյի: Այդ հատկությունների շնորհիվ գրաֆինն ստացել է բազմաթիվ կիրառություններ էլեկտրոնիկայում, կենսատեխնոլոգիաներում, ցածր տեսակարար կշիռ ունեցող գերամուր նյութերի ստեղծման ոլորտում և այլն: Շեշտենք, որ գրաֆինը այսպես կոչված նանոնյութերի կարևոր ներկայացուցիչներից է:

Ածխածնի ատոմներից են կազմված նաև մի քանի նանոչափային օբյեկտներ, որոնցից ամենահայտնիներն են ածխածնային նանոխողովակները<sup>7</sup>, որոնք ունեն նանոչափային տրամագիծ: Նանոխողովակները կարող են լինել միաշերտ, երկշերտ և այլն: Միաշերտ խողովակը պատկերված է Նկ. 2-ում: Փաստորեն, դա ոչ այլ ինչ է, եթե ոչ գրաֆինի շերտ, որը փաթաթված է խողովակի ձևով: Այս կառուցվածքն օժտված է մի շատ յուրահատուկ հատկությամբ. դրա հաղորդականության բնույթը կախված է այն բանից, թե ո՞ր առանցքի շուրջն է փաթաթված: Նկ. 2-ում պատկերված խողովակի էլեկտրահաղորդականությունը մետաղական է, այսինքն՝ ջերմաստիճանի նվազման դեպքում աճում է: Բայց եթե խողովակը փաթաթված լիներ ցուցադրվածին ուղղահայաց առանցքի շուրջը, ապա հաղորդականությունը կլիներ կիսահաղորդչային, այն է՝ ջերմաստիճանի նվազմանը զուգընթաց հաղորդականությունը կնվազեր: Սա հույս է ներշնչում, որ ամբողջ էլեկտրոնիկան հնարավոր է կառուցել միայն ածխածնի ատոմներից:



Նկ. 2. Ածխածնային նանոխողովակի պատկեր

Անհրաժեշտ է նշել ածխածնին վերաբերող հետազոտությունների մի շատ կարևոր ուղղություն ևս: Կան փորձարարական տվյալներ, որ ցեմենտին  $0,025 \pm 0,2$  կշռային տոկոսով ածխածնի նանոխողովակների ավելացման դեպքում բետոնի ամրությունը ձկման նկատմամբ աճում է  $7,5$  %-ից մինչև  $40$  %, իսկ սեղմման

նկատմամբ՝  $20$  %-ով: Ի դեպ, ածխածնի կոնցենտրացիան մեծանալու դեպքում ամրության աճումը նվազում է: Սակայն պարզվել է, որ մեծ ինտենսիվությամբ ուլտրաձայնով խառնուրդի մշակումը հանգեցնում է դրական արդյունքների<sup>8</sup>: Այս եղանակի կիրառումը հնարավորություն կտա էապես մեծացնելու ռազմական նախանշանակման ամրաշինությունների մեխանիկական դիմացկունությունը: Նշենք նաև, որ այն նյութը, որին դրա հատկությունները բարելավելու նպատակով ավելացվել են նանոմասնիկներ, անվանում են նանոկոմպոզիտ:

Սակայն նշվածով չեն սահմանափակվում ածխածնի օգտակար հատկությունները: Պարզվել է, որ պոլիմերային նյութի մեջ ածխածնային նանո-

<sup>7</sup> Ածխածնային նանոխողովակների մասին ավելի հանգամանորեն տես, օրինակ, «Углеродные нанотрубки. Устройство и применение. Особенности». «Электросам. Ру» (<https://electrosam.ru/glavnaja/jelectrotehnika/uglerodnye-nanotrubki/>):

<sup>8</sup> Տես S. C. Paul, A. S. van Rooyen, G.P.A.G. van Zijl, L. F. Petrik. Properties of cement-based composites using nanoparticles: A comprehensive review. “Construction and Building Materials”, 20 November 2018, Vol. 189:

խողովակների ներմուծումը նույնպես մեծացնում է պոլիմերի ամրությունը: Բացի այդ, կան որոշ պոլիմերներ, որոնք կիրառվում են երկու մակերևույթների շփման գործակիցը նվազեցնելու համար: Այստեղ նույնպես ածխածնի նանոխողովակների ներմուծմամբ էապես բերելավվում է վիճակը: Այդ երևույթների հիմքում մի շատ պարզ երևույթ է: Բանն այն է, որ նանոմասնիկների մակերեսի և ծավալի հարաբերությունը բավական մեծ է, և նանոմասնիկի և նյութի միջև եղած ձգողությունը ավելի մեծ է, քան այն դեպքում, երբ բոլոր նանոմասնիկները միավորվեին՝ կազմելով մակրոչափի մեկ գունդ: Իրոք, եթե  $1 \text{ մ}^3$  ծավալ ունեցող խորանարդը, որի մակերեսը  $6 \text{ մ}^2$  է բաժանենք երկու զուգահեռանիստի, ապա դրանց զուամարային մակերեսը կլինի  $8 \text{ մ}^2$ : Դա է ամրության մեծացման պատճառը: Նանոխաղավակների ավելացումը փոքրացնում է ջերմային ընդարձակման գործակիցը, ինչը շատ կարևոր է զանազան մեխանիզմների բնականոն աշխատանքը ապահովելու համար: Նանոխողովակներով հարստացված որոշ պոլիմերներ կարող են ծառայել որպես թունավոր գազերից կամ հեղուկներից պաշտպանիչ ծածկույթ: Այս հատկությունը պայմանավորված է այն բանով, որ այդպիսի նյութի մեջ մոլեկուլների ներթափանցումը (դիֆուզիան) էապես դժվարանում է<sup>9</sup>:

Եզրափակելով ածխածնին նվիրված այս փոքր բաժինը՝ նշենք, որ առաջինը, ով գտավ ածխածնի տեխնիկական կիրառության հնարավորությունը, ամերիկացի գյուտարար Թոմաս Էդիսոնն էր: 19-րդ դարի վերջում նա երկար ժամանակ նյութ էր փնտրում շիկացման լամպի թելիկ պատրաստելու համար: Բազմաթիվ գիտափորձերից հետո Էդիսոնը կանգ առավ ճապոնական բամբուկի տեսակներից մեկի ածխացած մանրաթելի վրա<sup>10</sup>: Դրանից մի քանի տասնամյակ անց ինժեներները հասկացան, որ ածխածնի մանրաթելն իր աննշան կշռի շնորհիվ շատ հարմար է ինքնաթիռներում տեղադրվող տարբեր սարքեր (ռեզիստորներ) պատրաստելու համար: Այս հանգամանքը առաջացրեց ածխածնի ուսումնասիրության մի հզոր ալիք, ինչի շնորհիվ 20-րդ դարի երկրորդ կեսին հայտնագործվեցին ածխածնի նանոխողովակներ և գրաֆին ստանալու եղանակներ:

2. Ստորև կներկայացնենք մի կարևոր ընտանիքի նոր նյութեր, որոնց անվանում են «խելացի»: Դրանք այն նյութերն են, որոնց ֆիզիկական հատկությունները՝ էլեկտրական, մագնիսական, մեխանիկական և այլն, կարող են էապես փոփոխվել արտաքին պայմանների՝ ջերմաստիճանի, ճնշման, խոնավության, էլեկտրական կամ մագնիսական դաշտի ազդեցության հետևանքով: Ընդ որում, այդ փոփոխությունը կարող է լինել հակադարձելի կամ ոչ հակադարձելի: Մենք այստեղ կխոսենք միայն մի տեսակի «խելացի» նյութերի մասին, այն նյութերի, որոնք, մեր կարծիքով, ամենատպավորիչն են: Դա այսպես կոչված «հիշողությամբ օժտված» նյութերն են: Մեկ օրինակով պարզաբանենք, թե ինչ է թաքնված այս անվան տակ:

<sup>9</sup> Stu “Handbook of Functionalized Nanomaterials for Industrial Applications”. Elsevier, 2020:

<sup>10</sup> Մու, օրինակ, «История лампочки Эдисона – как все было на самом деле» (<https://svetomaniya.ru/blog/rasskazy/istoriya-lampochki-edisona-kak-vse-bylo-na-sa-mom-dele>):

Դիցուք, նիկելի և տիտանի՝ «նիտինոլ» կոչվող համաձուլվածքից պատրաստված բարդ ձևի նմուշի ջերմաստիճանը բարձրացնում ենք այնքան, որ նա շիկանա և ստանա կարմիր գույն, այնուհետև ջերմաստիճանն իջեցնում ենք մինչև սենյակային: Այդ պայմաններում կարող ենք ձևափոխել նմուշը մեխանիկական ազդեցությամբ: Սակայն, եթե նմուշի ջերմաստիճանը նորից բարձրացնենք մինչև 40<sup>0</sup> C, նա ինքնաբերաբար կընդունի այն ձևը, որը մենք նրան տվել էինք շատ բարձր ջերմաստիճանում: Այս երևույթի ֆիզիկական բացատրությունն այն է, որ բարձր ջերմաստիճաններում նյութի հավասարակշիռ ձևը միանգամայն այլ է: «Ձևի հիշողության» երևույթը արդեն ունի բազմաթիվ կիրառություններ բժշկության ոլորտում, օրինակ՝ կոտրվածքների բուժման համար:

3. Այժմ ծանոթանանք 10 տարի առաջ Ֆիլադելֆիայի (ԱՄՆ) համալսարաններից մեկում սինթեզված մի նոր խմբի նյութերի հետ:

Վերջին տասնամյակներում կապի միջոցների անհավանական արագ զարգացումը մարդկությանը կանգնեցրեց էներգիայի ավելի դյուրակիր, արդյունավետ և հուսալի աղբյուրներ ստեղծելու խնդրի առաջ: Հայտնի է, որ կենցաղում օգտագործվող գաջետների ամենախոցելի օղակները սնուցման տարրերն են, որոնց լիցքավորումը և շահագործումը հատուկ բանելակարգեր են պահանջում: Իհարկե, տան պայմաններում այդ բանելակարգի պահանջներին բավարարելը այնքան էլ բարդ գործ չէ: Սակայն ռազմական գործողությունների կամ նույնիսկ խաղաղ դաշտային պայմաններում վիճակն այլ է, քանի որ կապը գործի կառավարման հիմնական միջոցն է, և կապի խափանումը կարող է հանգեցնել ողբերգական հետևանքների: Խափանման պատճառներից մեկը կապի միջոցը սնուցող մարտկոցում կուտակված լիցքի սպառումն է, ինչը կանխելու համար ավելացնում են մարտկոցի ունակությունը, իսկ դա անխուսափելիորեն առաջ է բերում մարտկոցի ծավալի և քաշի մեծացում: Բերենք մեկ օրինակ. 10 կգ կշիռ ունեցող ռադիոկայանը աշխատեցնելու համար օգտագործվում է այնպիսի մարտկոց, որի կշիռը 8,5 կգ է: Այստեղից բխող խնդիրները ակնհայտ են, և դրանց լուծումը կապված է լրացուցիչ ծախսերի հետ՝ վառելանյութի, մարդկային ռեսուրսի, ժամանակի վատնում, ինչը չի կարող չանդրադառնալ գործի կառավարման որակի վրա:

Այժմ անցնենք ստեղծված իրավիճակից բխող գիտատեխնիկական խնդրի քննարկմանը: Ավանդական մարտկոցը մի սարք է, որում տեղի է ունենում նյութի դրական և բացասական լիցքերի բաժանում: Այդ բաժանման համար անհրաժեշտ է կատարել որոշակի աշխատանք, քանի որ տարանուն լիցքերի միջև գործում է ձգողության ուժ: Այլ կերպ ասած՝ պետք է լինի սնուցման աղբյուր, որի էներգիայի հաշվին կկատարվի այդ աշխատանքը: Մարտկոցները կարելի է բաժանել երկու խմբերի՝ մեկում որպես էներգիայի աղբյուր ծառայում է մի այլ մարտկոց, որտեղ այդ բաժանումը արդեն կատարվել է էներգիայի մի այլ աղբյուրի միջոցով, օրինակ՝ ՀԷԿ-ից ստացված լարման օգնությամբ: Մյուս խմբին են պատկանում այն մարտկոցները, որոնցում լիցքերի բաժանումը տեղի է ունենում մարտկոցում ընթացող քիմիական ռեակցիայի շնորհիվ: Եթե ՀԷԿ-ում լարման առաջացումը տեղի է ունենում Ֆարադեյի մակածության (ինդուկցիայի) երևույթի շնորհիվ, ապա երկ-

րորդ խմբի դեպքում կատարվող պրոցեսը հասկանալու համար անհրաժեշտ է կիրառել քվանտային տեսության վրա հիմնված բավական նուրբ դատողություններ:

Նշված երկու տիպի մարտկոցների կատարելագործմանն ուղղված ջանքերը բավական արդյունավետ էին: Դրանց շնորհիվ հաջողվել է ստեղծել մարտկոցների մի քանի ընտանիքներ, որոնցում օգտագործվում են զանազան նյութերում ընթացող քիմիական ռեակցիաներ: Սակայն պարզ էր դառնում նաև այն, որ հոսանքի աղբյուրներ ստեղծելու ավանդական սկզբունքներն արդեն իրենց սպառում են, և հետագա առաջընթաց ապահովելու համար անհրաժեշտ է որոնել նոր սկզբունքներ:

Բնական գիտությունների պատմությունից հայտնի է, որ եթե մի ոլորտում ճեղքում է կատարվում, ապա դրա արդյունքը անմիջապես անդրադառնում է հարակից ոլորտների զարգացման վրա: Բավական է նշել բոլորովին վերջերս հաղորդակցության միջոցների ոլորտում մեր աչքի առաջ տեղի ունեցած հեղափոխական փոփոխությունները, որոնք պայմանավորված էին քիմիկոսների և նյութագետների համատեղ ջանքերով նանոտեխնոլոգիայի բուռն զարգացմամբ: Այստեղ մենք մոտենում ենք մեր ակնարկի գլխավոր գաղափարին, այն է՝ ինչպես է նանոտեխնոլոգիան ներխուժում էներգետիկայի ոլորտ, մասնավորապես՝ էլեկտրական էներգիայի կուտակման, պահեստավորման և փոխանցման հարցերում:

Այստեղ մի փոքր շեղվենք հիմնական թեմայից և ընթերցողի ուշադրությանը ներկայացնենք այսպես կոչված երկչափ նյութերը, որոնց ուսումնասիրությամբ աշխարհի հարյուրավոր (առանց չափազանցնելու) լաբորատորիաներում զբաղված են ֆիզիկոսներ, քիմիկոսներ և կենսաբաններ: Երկչափ են կոչվում այն համակարգերը, որոնք բաղկացած են մեկը մյուսի վրա տեղադրված մի քանի ատոմային շերտերից, ընդ որում, տվյալ շերտերի լայնությունը և երկարությունը կարող են լինել մակրո չափերի: Այդ նյութերից առավել հայտնի կարելի է համարել վերը նշված գրաֆինը, որը տակդիրի վրա կանոնավոր կերպով դասավորված ածխածնի ատոմների ընդամենը մեկ շերտ է: Ինչպես արդեն նշել ենք, գրաֆինն իր ֆիզիկական հատկություններով էապես տարբերվում է նույն ատոմներից կառուցված գրաֆիտից և ավստից, մասնավորապես, նա կարող է ցուցաբերել գերհաղորդչային հաղորդականություն:


Մեկ տասնամյակ առաջ ԱՄՆ-ի Դրեքսելի համալսարանի (Ֆիլադելֆիա, հիմնվել է 1891 թ.) նանոնյութերի ինստիտուտում մշակվել է մի նոր դասի երկչափ նյութերի սինթեզման եղանակ<sup>11</sup>: Այդ նյութերը անցումային մետաղների կարբիդներ/նիտրիդներ են, որոնք կոչվում են մաքսիններ (*MXenes*), որտեղ *M*-ը անցումային մետաղ է, *X*-ը ածխածին և/կամ ազոտ: Դրանք դարձել են ինտենսիվ բազմակողմանի ուսումնասիրությունների առարկա: Կանխատեսվել են ավելի քան 60 մաքսիններ, որոնցից ավելի քան 30-ն ար-

<sup>11</sup> Stur “2D Metal Carbides and Nitrides (MXenes): Structure, Properties and Applications”. Ed. by B. Anasori, Y. Gogotsi. Springer, 2019:



դեն սինթեզվել են՝ ոլորտը դարձնելով այլ երկչափ նյութերի համեմատությամբ ամենաարագ զարգացողը:

Նկ. 3-ում պատկերված են ա)  $Ti_3C_2$  մաքսինի թերթիկը, որը բաղկացած է տիտանի երեք ատոմային շերտերից, որոնց միջև տեղավորված են ածխածնի ատոմների երկու շերտեր: Բացի այդ, առկա են այսպես կոչված մակերևութային խմբեր, որոնք կարող են պարունակել թթվածին, ֆտոր, հիդրօքսիլ կամ (OH) խումբ: Թերթիկի հաստությունը 1,5 նմ է, և բ) սինթեզված մաքսինի թերթիկների «ակորդեոնային» կառուցվածքը՝ տեսաձրող էլեկտրոնային մանրադիտակով (SEU) ստացված, որում թերթիկները փոխկապված են վանդերվաալյան ուժերով<sup>12</sup>:



Նկ. 3.  $Ti_3C_2$  մաքսինի թերթիկների պատկերներ

Առավել լավ են ուսումնասիրված  $Ti_3C_2$  և  $Ti_2C$  միացությունների ֆիզիկական հատկությունները: Պարզվել է, որ դրանք օժտված են զրեթե մետաղական հաղորդականությամբ, ինչը լիցքակիրների մեծ կոնցենտրացիայի վկայությունն է:

Ո՞րն է այդ նյութերի նկատմամբ առաջացած հետաքրքրության պատճառը: Պարզվում է, որ մաքսիններն օժտված են էլեկտրական լիցք կուտակելու անհավատալի մեծ ունակությամբ:  $Ti_3C_2$  նյութի մեկ գրամը կարող է ապահովել մինչև 370 Ֆ ունակություն, ինչը մի քանի հազար անգամ գերազանցում է Երկիր մոլորակի ունակությանը: Այդ հատկությունն ընդունված է անվանել գերունակություն (*supercapacity*): Երևույթի ֆիզիկական բացատրությունը բավական բարդ է, և մենք դրա մասին այստեղ չենք խոսի: Սակայն կնշենք մի կարևոր առավելություն, որից զուրկ են ավանդական կուտակիչները: Բանն այն է, որ մաքսինից պատրաստված էլեկտրոդը ծծմբաթթվի մեջ առանց նկատելի փոփոխությունների դիմանում է վերալիցքավոր-

<sup>12</sup> Stu M. Johnson, Q. Zhang and D. Wang. Titanium carbide MXene: Synthesis, electrical and optical properties and their applications in sensors and energy storage devices. "Nanomaterials and Nanotechnology", 2019, Vol. 9, N 1–9:

ման 10000 փուլաշրջանի, մինչդեռ, շատ տարածված լիթիում-իոնային մարտկոցը դիմանում է միայն այդպիսի 600 փուլաշրջանի:

Ցավոք, կա մի լուրջ սահմանափակում, որը հնարավորություն չի տալիս լայնորեն կիրառելու մաքսիմի գերմեծ ունակությունը: Մաքսիմի էլեկտրոդներով մարտկոցները  $H_2SO_4$  էլեկտրոլիտում աշխատում են 1,5 V-ից ոչ բարձր լարման դեպքում: Այնուամենայնիվ, մինչ այժմ այդպիսի սարքերը էապես գերազանցում են իրենց ցուցանիշներով գերունակությամբ օժտված ածխածնային սարքերին: Դրա պատճառն այն է, որ գերունակության մեխանիզմի վերջնական բացատրությունը դեռևս զգալի ջանքեր է պահանջում: Բարձր լարումներով աշխատելու համար ցանկալի է թթվայինների փոխարեն ջրային էլեկտրոլիտների օգտագործումը: Այս խնդիրների լուծումը կյանքի կկոչի նոր սերնդի մաքսիմային էլեկտրոդներ, և էլեկտրական էներգիայի շահագործումը կդառնա ավելի դյուրին և բազմազան:

Գերունակությունը, ինչպես նաև վերունակությունը (*ultracapacity*<sup>13</sup>) և կեղծ ունակությունը (*pseudocapacity*) այժմ ֆիզիկոսների և քիմիկոսների ուշադրության կենտրոնում են: Այս նոր երևույթները բավական խոստումնալից են, սակայն դրանց լիարժեք տեսությունը դեռևս մշակված չէ: Այդուհանդերձ հուսանք, որ նոր սերնդի մարտկոցները, այնուամենայնիվ, շուտով հասանելի կդառնան ինչպես ռազմական տեխնիկայի ասպարեզում, այնպես էլ կենցաղում:

Նշենք, որ հայաստանցի ֆիզիկոսները, համագործակցելով Ղրեքսելի համալսարանի նանոնյութերի ինստիտուտի տեխնոլոգների ու քիմիկոսների հետ, կարողացել են մեկնաբանել մաքսիմների օպտիկական հատկությունների գիտափորձում դիտված մի քանի առանձնահատկություններ<sup>14</sup>:

Սույն ակնարկի վերջում ներկայացնենք նյութագիտության հիմնարար խնդիրներից մեկը, որն այսպես է ձևակերպվում. ըստ նյութի հայտնի քիմիական բանաձևի որոշել դրա ատոմային կառուցվածքը: Այս խնդրի ճշգրիտ լուծումը պահանջում է հսկայական ծավալով թվային հաշվարկումներ: Վերջին տարիներին հաջողվել է պարզել ընդամենը 150 ատոմներից բաղկացած համակարգի հավասարակշռված կառուցվածքը, որը համապատասխանում է ատոմների փոխազդեցության պոտենցիալ էներգիայի, կամ ոչ զրոյական

<sup>13</sup> Stu *Josie Garthwaite*. How ultracapacitors work (and why they fall short), 12 July 2011 (<https://web.archive.org/web/20121122020504/http://gigaom.com/cleantech/how-ultracapacitors-work-and-why-they-fall-short/>):

<sup>14</sup> Stu *M. Gonçalves, A. Melikyan, H. Minassian, T. Makaryan, P. Petrosyan, T. Sargsian*. Interband, Surface Plasmon and Fano Resonances in Titanium Carbide (MXene) Nanoparticles in the Visible to Infrared Range. "Photonics" 2021, Vol. 8, Issue 2; *A. Sarycheva, T. Makaryan, K. Maleski, E. Satheshkumar, A. Melikyan, H. Minassian, M. Yoshimura, Y. Gogotsi*. Two-dimensional titanium carbide MXene) as surface-enhanced Raman scattering substrate. "The Journal of Physical Chemistry C", 2017, Vol. 121, Issue 36; *E. Satheshkumar, T. Makaryan, A. Melikyan, H. Minassian, Y. Gogotsi, M. Yoshimura*. One-step Solution Processing of Ag, Au and Pd@MXene Hybrids for SERS. "Scientific Reports", 2016, Vol. 6:

ջերմաստիճանի դեպքում՝ ազատ էներգիայի նվազագույն արժեքին: Ավելի բարդ համակարգերի համար այդ խնդիրը լուծելու նպատակով ստեղծվել են հատուկ ալգորիթմներ, որոնք կոչվել են էվոլյուցիոն ալգորիթմներ: Սակայն ամենավճռական քայլը կատարել է ռուսաստանցի գիտնական, ծագումով թիֆլիսահայ Արտյոմ Օզանովը: Նրան հաջողվել է կատարելագործել էվոլյուցիոն ալգորիթմը, ինչի շնորհիվ հաշվարկումը, որը հին մեթոդներով կարող էր տևել միլիոնավոր տարիներ, մեր հայրենակցի մշակած եղանակով կատարելու դեպքում կպահանջի խելամիտ ժամանակ: Վերջերս Ա. Օզանովը այցելել է Հայաստան և ելույթ է ունեցել ՀՀ ԳԱԱ-ում: Ներկայումս նա ներկայացված է Նոբելյան մրցանակի:

Ավարտելով ռազմական ոլորտի համար նյութագիտության որոշ մշակումների այս համառոտ ներկայացումը՝ ցանկանում ենք ընթերցողների ուշադրությունը ևս մեկ անգամ ուղղել դեպի նանոտեխնոլոգիաները՝ շեշտելով ՀՀ-ի համար դրանց զարգացման խիստ անհրաժեշտությունը: Այսօր աշխարհի բոլոր առաջատար պետությունները նանոտեխնոլոգիաների զարգացումը հայտարարել են առաջնահերթություն: Ինչպես վերը նշել ենք, այն պահանջում է նյութագետների, ֆիզիկոսների, քիմիկոսների և մի շարք այլ գիտաճյուղերի մասնագետների համատեղ ներդաշնակ գործունեություն, որը, ցավոք, հատուկ չէր մեզ նաև խորհրդային շրջանում, ինչի վառ ակադեմիայն է այն, որ «Հայկական սովետական հանրագիտարանում» անգամ չկա «տեխնոլոգիա» հոդված:

Նանոտեխնոլոգիաների զարգացման համար նպատակահարմար է կատարել համապատասխան նպատակային ներդրումներ ինչպես գիտության, այնպես էլ կրթության բնագավառում: Մասնավորապես՝ կարելի է որպես խթան էապես մեծացնել անհրաժեշտ մասնագիտացումներ ստացող ուսանողների կրթաթոշակները, դասավանդման համար հրավիրել առաջատար ինչպես հայրենական, այնպես էլ օտարազգի մասնագետների և շրջանավարտներին ապահովել բարձր վարձատրվող աշխատավարձով: Մի խոսքով՝ նշված ոլորտներում աշխատանքը դարձնել ոչ պակաս համբավաբեր ու շահավետ, քան, ասենք, բանկային համակարգում:

## ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

### НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРИМЕНЕНИЯ НАНОТЕХНОЛОГИИ В ВОЕННЫХ ЦЕЛЯХ

*А. О. МЕЛИКЯН, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, профессор Российско-Армянского Университета*

#### РЕЗЮМЕ

В наше время наука о материалах стала одной из основ технического прогресса. Вторая молодость этой науки связана с развитием нанотехнологии. Дело в том, что так называемые наноматериалы

являются объектом изучения как собственно материаловедения, так и фундаментальных наук – физики и химии, так как новые материалы, как правило, возникают благодаря усилиям ученых именно в этих областях естественных наук.

Список возможных применений наноматериалов включает строительство плотин и жилых домов, конструирование медицинского оборудования и электронных приборов, устройств для накопления энергии и многое другое. Значительный прогресс в этой науке обусловлен развитием нанотехнологии в связи с тем, что свойства макроскопических образцов большинства веществ сильно отличаются от свойств наноразмерных образцов. Это было предсказано одним из создателей физики 20-го века Ричардом Фейнманом в его знаменитой статье «Как много места в глубине», написанной в 1959 г.

Особое значение нанотехнологии получили в военной сфере. Они используются в опто-электронных системах как видео-, термо- и электромагнитные сенсоры и датчики, в робототехнике (в частности, как «умная цель»), для бронезилетов и т.д.

В статье затронута лишь небольшая часть достижений и новых проблем науки о материалах. Вся история развития этой науки свидетельствует о том, что для успеха в деле создания новых материалов с заранее заданными свойствами необходимо сотрудничество специалистов в разных областях физики, химии, механики и программирования. Вместе с тем эти специалисты должны быть широко образованными людьми, свободно ориентирующимися хотя бы в основных принципах указанных областей науки.

К сожалению, в нашей стране очень редко можно было наблюдать примеры подобного сотрудничества, хотя и ясно, что оно могло позволить выйти на передовые позиции в некоторых важных направлениях прикладных и технических наук. Вообще отношение к прикладным наукам у нас оставляло желать лучшего. Об этом косвенно свидетельствует такой факт, как отсутствие в Армянской советской энциклопедии термина «տեխնոլոգիա» (технология). Не лучшим образом обстояли дела и в сфере высшего образования. Долгие годы в названии одного из факультетов Политехнического института, а в дальнейшем – Государственного инженерного университета Армении, содержалось название *несуществующей* технической специальности – «Факультет горной металлургии», вместо «Факультета горного дела и металлургии».

Можем ли мы исправить ошибки прошлого? Мы обязаны это сделать! Наряду с инвестициями в горнодобывающую промышленность и подобные сферы необходимо инвестировать в процесс подготовки специалистов по горному делу, металлургии, химическим тех-

нологиям. Для привлечения абитуриентов необходимо резко повысить стипендии на соответствующих специальностях и обеспечить работой выпускников вузов. Кроме того, необходимо привлечь к преподаванию лучших специалистов Диаспоры (что тоже требует инвестиций), так как в пресловутые 90-ые и последующие годы мы по хорошо известным причинам, главной из которых было уничтожение предприятий, потеряли много ценных кадров. Надо сделать так, чтобы работа в указанных сферах стала бы такой же престижной, как и работа в банковской системе. Альтернативы этим мерам не существует.

## MILITARY ENGINEERING

### SOME ISSUES OF THE MILITARY APPLICATION OF NANOTECHNOLOGY

*A. H. MELIKYAN, Corresponding Member, NAS, RA, Doctor in Physics  
and Mathematics, Professor, Russian-Armenian University*

#### SUMMARY

Nowadays, the materials science has become one of the bases for technological advance. The flashback of this science is concerned with the development of nanotechnology. The case is that the so-called nanomaterials are object of study for both the materials science, as such, and fundamental sciences – physics and chemistry, for new materials, as a rule, are being invented due to the efforts of scientists preeminently from these branches of natural sciences.

The list of possible applications of nanomaterials includes building of dams and accommodation units, engineering of medical equipment and electronic devices, energy storage installments, and many such. The significant progress in this science is conditioned by the development of nanotechnology as the macroscopic sample properties of the majority of substances greatly differ from their nano-sized sample signatures. This was predicted by one of the 20<sup>th</sup> century developers of physics, Richard Feynman, in his famous article *There's plenty of room at the bottom*, published in 1959.

Nanotechnologies gained special significance in the military field. They are used in the optoelectronic systems such as video-, thermo- and electromagnetic sensors and detectors, in robotics (particularly as "smart target"), for flak jackets and so on.

The article discusses only small part of the achievements and new problems of materials science. The entire history of the development of

this science attests to the fact that cooperation between specialists in various spheres of Physics, Chemistry, Mechanics and Computer Programming is necessary for succeeding in the development of new materials with predefined signatures. Withal, such specialists have to be widely read people, who freely orient themselves at least in the main principles of the named branches of science.

Unfortunately, examples of such cooperation have been very rare in our country, though it was evident that it could lead to the frontline in some important areas of applied and technical sciences. Generally, the attitude towards the applied sciences in our country was far from great. The fact that the term «տեխնոլոգիա» (technology) misses from the Armenian Soviet Encyclopedia indirectly testifies to that. Things were as bad in the higher education sphere. For many years in the Polytechnic Institute, later – the State Engineering University of Armenia, – there used to be a department named after a technical specialty, which did NOT exist – it was the Department of Mountain Metallurgy, whereas it should have been the Department of Mining and Metallurgy.

Can we rectify the mistakes of the past? We must do that! Along with the investments into the mining industry and such spheres, it is necessary to place investments into the process of specialist training in mining industry, metallurgy, chemical technologies. In order to attract students the scholarships for corresponding specialties should be drastically increased and university graduates should be provided with jobs. Besides, it is necessary to attract the best specialists of Diaspora (which also does require investments) into the teaching process, as in the notorious 90s and the years to follow we lost many assets for well-known reasons, the main of which being the destruction of enterprises. Work in mentioned spheres should be made as prestigious, as it is in banking. There is no alternative to these actions.

ՈՉ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1909 Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՕՐԵՆՔԻ  
ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

*Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր*



Օսմանյան կայսրությունում 1908 թ. հեղաշրջման արդյունքներով իշխանության գլուխ անցած երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վեթերաքքի») կուսակցությունը ձեռնամուխ եղավ բարեփոխումների, որոնց ընթացքում ընդունվեցին մի շարք օրենքներ, այդ թվում՝ ոչ մահմեդականների զինապարտության մասին օրենքը: Նման օրինագծի ընդունմանը նախորդել էին երկար տարիների բարեփոխումների փորձերը:

Օսմանյան կայսրության շուրջ 600 տարվա գոյության ընթացքում կայսրության պահպանման և մահմեդական միապետության ամրապնդման կարևոր միջոց են եղել հպատակ քրիստոնյա ժողովուրդների մահմեդականացումն ու թուրքացումը: Քրիստոնյաների իրավունքները խիստ սահմանափակ էին. նրանք պարբերաբար ենթարկվում էին ճնշումների, կողոպուտի, կոտորածների, զրկված էին կայսրության տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքից, համարվում էին «անհուսալի» տարր և չունեին զենք կրելու իրավունք, դատարաններում չէին քննվում մահմեդականների դեմ քրիստոնյաների հայցերը: Այս ամենը առաջ էր բերում քրիստոնյա ժողովուրդների դժգոհությունը, կենտրոնախույս տրամադրություններ, որոնք, ի վերջո, հանգեցրին ազգային-ազատագրական շարժումների ծավալման:

Կայսրության տնտեսական և քաղաքական անկումը, մեկը մյուսին հաջորդող ռազմական պարտությունները, փլուզման վտանգը սուլթան Աբդուլ Մեջիդին ստիպեցին 1839 թ. գահին հաստատվելուց անմիջապես հետո ձեռնարկել թանգիմաթը, որում ներառվեցին ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ բանակին վերաբերող մի շարք կարգավորումներ: 1856 թվականին սուլթանի հրամանով կայսրության բոլոր հպատակները՝ անկախ կրոնադավանական պատկանելությունից և ազգությունից, հռչակվում էին հավասար և, հետևաբար, նաև զինվորական ծառայության ենթակա: Քրիստոնյաների զորակոչման մասին որոշումը, սակայն, բախվեց և՛ մահմեդական, և՛ քրիստոնեական համայնքների դիմադրությանը: Բանակում համարում էին, որ քրիստոնյաների մուտքը բանակ պետության համար ավելորդ բեռ է: Ավելին. ոչ մահմեդականները կարող էին խեղաթուրել բանակի «բարոյական կերպարը»:

Ղա բավական լուրջ առարկություն էր, քանի որ օսմանյան բանակի մարտական ոգին վերին աստիճանի կրոնամոլական էր: Հաճախ գրոհները ուղեկցվում էին «Ալլահ», «Ալլահ ակբար» վանկարկումներով: Բնական է՝ բազմադավան գորքի համար դա աներևակայելի էր: Մահմեդականների համար անընդունելի էր անգամ այն միտքը, որ քրիստոնյաները պետք է ունենային զենք կրելու իրավունք: Քրիստոնյաները թեև իրենց համարում էին Օսմանյան կայսրության հպատակներ, սակայն՝ ոչ թուրքեր: 1856 թ. ջիզհան, որ քրիստոնյաներն ու հրեաները վճարում էին որպես պետության համար հարկ, վերացվում է: Ջիզհան, ընդ որում, կազմում էր պետության հարկային եկամտի մի զգալի մասը, ուստի պետությունը նախընտրեց, որ քրիստոնյաները շարունակեն վճարել զինվորական ծառայությունից ազատվելու՝ զինվորական փրկանքի վճար (*bedeli-i askeri*), որը քրիստոնյաների համար ավելի մեծ էր, քան մահմեդականների համար<sup>1</sup>: Այսպիսով՝ 1857 թվականին ոչ մահմեդականներին կրկին թույլատրվեց «զինվորական փրկանքի» միջոցով ազատվել զինվորական ծառայությունից:

Ջորակոչի ամբողջ համակարգը 1870–1871 թթ. վերանայվեց և կանոնակարգվեց նոր օրենքով, որի դրույթները հիմք դարձան 1879 թ. բանակային բարեփոխումների համար<sup>2</sup>: Այս բարեփոխումները հետևեցին 1875–1878 թթ. Բալկանյան ճգնաժամին և 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Թուրքիայի կրած ծանր պարտությանը:

Այսպես. երիտթուրքերը իշխանության եկան 1908 թ. հուլիսին, իսկ 1909 թ. ապրիլին Ստամբուլում տեղի ունեցած հակահեղափոխական ելույթները ճնշելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղան մի շարք օրենքների ընդունման՝ նպատակ ունենալով ազգային քաղաքական շարժումների առաջնորդներին իրենց կողմը գրավելով բացառել ժողովրդական ըմբոստությունները, իրենց ձեռքում կենտրոնացնել իշխանությունը և «օսմանացնել» կայսրության բնակչության տարբեր տարրերը<sup>3</sup>: Մի քանի ամիսների ընթացքում խորհրդարանն ընդունեց «Թափառաշրջիկության մասին», «Հասարակական հավաքների մասին», «Ցույցերի մասին», «Մամուլի և տպագրության մասին», «Գործադուլների մասին», «Ջինված խմբերի դեմ պայքարի մասին», «Ոչ մահմեդականների զինապարտության մասին» օրենքները<sup>3</sup>: Երիտթուր-

<sup>1</sup> Տես *Erik Jan Zürcher*. The Ottoman Conscript System, 1844-1914. «International Review of Social History», 1998, Vol. 43, Issue 3 (<https://www.cambridge.org/core/services/aop-cambridge-core/content/view/1086020302A263199BEEB062BF4C6874/S0020859098000248a.pdf/the-ottoman-conscription-system-1844-1914.pdf>):

<sup>2</sup> Այստեղ մասնավորապես ուշագրավ է հետևյալ ձևակերպումը. «Նորին Մեծության պաշտպանության տակ գտնվող տարածքների ամբողջ մահմեդական բնակչությունը (տղամարդիկ – Ա. Հ.) անխտիր կերպով պարտավոր է անցնել պարտադիր զինվորական ծառայություն» (տես *Էրիկ Յան Ցյուրխեր*, Նշ. աշխ.):

<sup>3</sup> Տես *Дж. Киракосян*. Младотурки перед судом истории. Ереван, 1989. ст. 129–131:

<sup>3</sup> Տես *Feroz-Uddin Ahmad*. The committee of Union and Progress in Turkish



քերի ռազմական ծրագիրը համահունչ էր պանթուրքական իմպերիալիզմի ոգուն: Նրանց համար առաջնահերթություն էր բանակի և նավատորմի վերակառուցումը ու վերակազմակերպումը<sup>4</sup>: Այսպիսով՝ 1909 թ. հուլիսի 27-ին հրապարակվեց ոչ մահմեդականների զինապարտության մասին նոր օրենքը, իսկ 1909 թ. հոկտեմբերին առաջին անգամ հրաման տրվեց զորակոչելու երիտասարդներին՝ անկախ նրանց կրոնական պատկանելությունից:



Օսմանյան խորհրդարանի մի խումբ պատգամավորներ, այդ թվում՝ 10 հայ («Արագած», Նյու Յորք, 1911)

1910 թ. օգոստոս–սեպտեմբեր ամիսներին գործողության մեջ դրվեց «հնության փոշիներից դուրս հանված» զինապարտության մասին օրենքը, որի համաձայն՝ Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին անգամ 20–40 տարեկան ոչ մահմեդական երիտասարդները, այդ թվում և հայերը, ենթարկվում էին զորակոչի՝ իրավունք ստանալով ծառայելու օսմանյան բանակում և զենք կրելու: Ըստ այդ օրենքի՝ զինվորական ծառայությունից կարող էին ազատվել միայն կաթողիկոսը, պատրիարքները, թեմակալները, վարդապետները, վանահայրերը, կրոնական ու բարձրագույն դպրոցների աշակերտները, ուսանողները, տարրական դպրոցների 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի ուսուցիչները<sup>5</sup>, բազմանդամ և աննեցուկ ընտանիքների՝ 26 տարին լրացրած այն երիտասարդները, որոնք միակ աշխատող ուժն էին և, իհարկե, բոլոր նրանք, ովքեր ներքին կարգով կվճարեին 44 օսմանյան լիրա (ոսկի) գլխագին՝ «բեդելի ասկերիե» («զինվորական փրկանք»)<sup>6</sup>:

Politics, 1908-1913. University of London, 1966 (<https://eprints.soas.ac.uk/33595/1/11010356.pdf>):

<sup>4</sup> Տես *W. E. D. Allen*. The Turks in Europe. London, 1919 ([http://www.public-library.uk/dailyebook/The%20Turks%20in%20Europe%20\(1919\).pdf](http://www.public-library.uk/dailyebook/The%20Turks%20in%20Europe%20(1919).pdf)):

<sup>5</sup> Տես *Ա. Փափազյան*, Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839–1915 թթ.): Ե., 2002, էջ 181–182:

<sup>6</sup> Տես Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 450, ց. 1, գ. 45, թ. 13, նաև՝ «Հայրենիք ամսագիր»: Բոստոն, 1924 թ. ապրիլ, հմ. 6: Ըստ Գ. Սյուրմենյանի՝ հայերը պետք է վճարեին 44 օսմանյան ոսկի (տես Գ. Սյուրմենյան, Տաճկահայ զինուոր եւ զինուորականութիւնը նախ տաճկական ապա հայկական բանակներուն մէջ: Բէյրութ, 1967, էջ 25): Ավելի վաղ այն կազմում էր 34–40 լիրա (տես «Հորիզոն»: Թիֆլիս, 1914 թ. օգոստոսի 22, հմ. 183):

Նոր օրենքին քրիստոնյա համայնքների արծագանքը միանշանակ չէր: Խանդավառություն չկար, թեպետ հունական, սիրիական, հայկական և բուլղարական համայնքների ներկայացուցիչները սկզբունքորեն համաձայնեցին, այդուհանդերձ, մի կարևոր վերապահությամբ, որ իրենց համայնքների անդամները ծառայեն առանձին՝ էթնիկական առումով միատարր ստորաբաժանումներում, որոնց գլխավորեն քրիստոնյա սպաները: Բուլղարացիները նույնպես համառորեն պնդում էին, որ ծառայեն միայն եվրոպական շրջաններում: Դա երիտթուրքերի համար լիովին անընդունելի էր, քանի որ նրանք դրանում տեսնում էին կայսրությունում ազգայնական կենտրոնախույս ուժերին խթանելու վտանգ, ինչը ճիշտ հակառակն էր իրենց ծգտմանը:

Երիտասարդ քրիստոնյա տղամարդիկ ձգտում էին լքելու երկիրը կամ գոնե օտարերկրյա անձնագիր ստանալու: Նրանք, ովքեր ի վիճակի չէին հեռանալու, փոխելու իրենց քաղաքացիությունը կամ վճարելու շատ ավելի բարձր սահմանված հարկ (*bedel-i nakdi*)\*, իսկապես զորակոչվեցին, երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը: Օսմանյան կառավարությունը շարունակում էր թերահավատորեն վերաբերվել իր քրիստոնյա հպատակներին այն աստիճանի, որ նրանք բոլորը՝ գրեթե առանց բացառության, մնացին անգեն: Նրանք ծառայում էին աշխատանքային գումարտակներում՝ կատարելով ճանապարհների ու երկաթգծի վերանորոգման աշխատանքներ և, հատկապես, պաշար էին հասցնում ռազմաճակատ: Բրիտանական ռազմական կցորդի 1910 թվականի զեկույցներում նշվում է, որ խաղաղ ժամանակ բանակի թվաքանակը կազմում էր 300000 մարդ, իսկ կանոնավոր բանակում ծառայության ժամկետը երեք տարի էր: Դա նշանակում է, որ անհրաժեշտ էր տարեկան 100000 զորակոչիկ, սակայն փաստացի տարեկան թվակազմը 90000 էր, որից զինվորական ծառայությունից ազատումներից հետո մնում էր մոտավորապես 50000 մարդ, և անհրաժեշտ էր ներգրավել մեծ թվով ռեզիվների (պահեստազորայիններ): 1914 թ. գրված զեկույցում արդեն նշվում էր, որ բանակի թվաքանակը խաղաղ ժամանակ մինչև Բալկանյան պատերազմները կազմում էր 230000 մարդ, իսկ դրանցից հետո՝ 200000: Ռուսական բանակը, օրինակ, նույն ժամանակաշրջանում խաղաղ ժամանակ ուներ հինգ անգամ ավելի մեծ թվակազմ<sup>7</sup>:

Ինչևէ, կարելի է ասել, որ վաթսուն տարվա ընթացքում շարունակական բարեփոխումների շնորհիվ Օսմանյան կայսրությունը կարողացավ ստեղծել զորակոչի համակարգ, որը, սակայն, քսաներորդ դարի սկզբին ենթակառուցվածքների և արդյունաբերական բազայի անբավարարության պատճառով չէր կարող բանակն ապահովել անհրաժեշտ թվով ու որակի մարդկային ռեսուրսով: Զորակոչը որպես պետական համակարգի ամրապնդման գործիք օգտագործելու երիտթուրքերի մտահղացումը ցանկալի արդյունքներ

\* *bedel-i nakdi*՝ զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք, որ կարող էին ձեռք բերել մահմեդականները օսմանյան բանակում՝ երեք ամիս ծառայելուց և համապատասխան հարկը վճարելուց հետո:

<sup>7</sup> Տես *Էրիկ Յան Յյուրխեր*, Նշ. աշխ.:

չտվեց, քանի որ «զինվորական փրկանքի» համակարգը պահպանվեց, որպեսզի բարելավվի պետության ֆինանսական վիճակը:

Ստորև Վանի նահանգի օրինակով դիտարկենք, թե ինչպիսի արծազանք ունեցավ և ինչպես կիրառվեց ոչ մահմեդականների զինապարտության մասին օրենքը հայաբնակ նահանգներում: Սույն ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վանի դաշնակցական կազմակերպության ղեկավարներից մեկը՝ Արշակ Վռամյանը, լինելով Մեջլիսի պատգամավոր, ակտիվ կերպով մասնակցել է այդ օրենքի նախագծի մշակմանը և ընդունմանը: Արևմտահայության և, հատկապես, Վանի հայության մեծ մասը սկզբում հավանություն չտվեց այս օրենքին, թեև ըստ դրա՝ երկրի մահմեդական բնակչությունն այլևս իրավունք չէր ունենալու իրեն համարելու «միլլեթը հաքիմե», այսինքն՝ տիրապետող ազգ:



Արշակ Վռամյան (1870–1915)  
Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վանից (<https://armenianweekly.com/2020/01/07/unders-tanding-the-responsibility-of-carrying-on-a-tradition/>)

Հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներն իրենց մասնավոր կամ հրապարակային հավաքույթների ժամանակ, ինչպես նաև այլ առիթներով և պերճախոս ճառերով նահանգի հայությանը վստահեցնում էին, որ հայերի զինվորական ծառայությունն ունի իր օգուտները, հատկապես՝ զենք կրելու հնարավորությունը\* : Մասնավորապես՝ Արշակ Վռամյանի և երիտասարդ դաշնակցական Արմենակ Մաքսապետյանի (Մաքսապետյան) նախաձեռնությամբ կազմակերպվեց հանրահավաք, որտեղ բարձրարժանվեց հայերի զինվորական ծառայության խնդիրը հանրաքվեի դնելու հարցը\*\* : Արդյունքը եղավ այն, որ խանդավառությամբ կայացվեց ոչ մահմեդականների զինապարտության մասին օրենքի ընդունման գաղափարը պաշտպանելու վճիռ և ընտրվեց 15 հոգուց կազմված հանձնաժողով: Այդ որոշման և կազմի մասին նույն օրը հեռագրվեց Կ. Պոլսի պատրիարքարանին և խորհրդարանին<sup>8</sup>:

Ոչ մահմեդականների զինապարտության մասին օրենքը ջանադրաբար պաշտպանեց նաև 1909 թ. հուլիսի սկզբին Յավեր փաշայի փոխարեն Վանի կուսակալ նշանակված մահմեդական օսեթ Բեքիր Սամի բեյը, որն ստացել էր եվրոպական կրթություն և ավելի շատ վարժ էր ֆրանսերենի, քան թուրքերենի իմացության մեջ\*\*\* : Ներկայացնելով Բեքիր Սամիի օրոք Վանում

\* Հարկ է նշել, որ մինչ այդ օրենքի ընդունումը քրիստոնյաները (գերազանցապես՝ հայերը և հույները) ծառայում էին բանակում որպես բժիշկներ՝ լեյտենանտի և կապիտանի կոչումներով (տես նույն տեղում):

\*\* Հարկ է նշել, որ Արմենակ Մաքսապետյանի հորը՝ Մկրտիչ Մաքսապետյանին, դրանից մեկ տարի առաջ խողխողել էին թուրքերը:

<sup>8</sup> Տես Հ. Երամեան, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ: Ալեքսանդրիա, 1929, էջ 152:

\*\*\* Բեքիր Սամի բեյը (Կունդուխ) (1865–1933) ռուսական բանակի նախկին գեներալ-

երիտթուրքական խորամանկ քաղաքականության ընդհանուր նկարագիրը՝ Հ. Երամյանը նշում է. «Հուրիեթի շրջանին քանի մը թուրք կամ խառն յանձնաժողովներ, բարենորոգումներու ուսումնասիրութեան պիտակին տակ, ասուպի պէս կ'երեւնային կ'անցնէին հայկական հորիզոններէն, կարծես մէկ կողմանէ հայութիւնը սին յոյսերով օրորելու և միւս կողմէ Եվրոպայի աչքին փոշի փչելու դիտումով»<sup>9</sup>:

Որոշումը ներկայացվում էր որպես երկկողմ շահավետ. մի կողմից՝ հայերը կարող էին խույս տալ զինվորական ծառայությունից, որն ըստ էության փոխարինվում էր դրամական վճարով, իսկ մյուս կողմից՝ պետությունը կարող էր լցնել իր դատարկ պետական գանձարանը:

Թեև օրենքը վերաբերում էր Օսմանյան պետության բոլոր քաղաքացիներին, սակայն այն խիստ չարաշահվում էր հատկապես հայերի նկատմամբ: Թուրքական իշխանությունները քմահաճորեն էին վարվում զորակոչի ենթակա անձանց հետ՝ հաճախ նորից զորակոչելով զինվորական ծառայությունից օրենքով ազատված հայերին, այսինքն՝ հայերից վերցնում էին և՛ զինվորական հարկ, և՛ զորակոչում բանակ:

Որպես տվյալ օրենքի տրամաբանական շարունակություն՝ օսմանյան խորհրդարանը 1910 թ. մարտի 1-ին հաստատեց քրիստոնյաների համար զինվորական տուրքի վերացման օրենքը<sup>10</sup>, ինչն առաջ բերեց քրդական վերնախավի մեծ անհանգստությունն ու դժգոհությունը<sup>11</sup>: Ղա ավելի էր սրելու առանց այն էլ խիստ լարված հայ-քրդական հարաբերությունները: Միևնույն ժամանակ, քուրդ աշիրեթապետերն այն գնահատեցին որպես ոտնձգություն իրենց «դարավոր ադաթների» և «պատմական իրավունքների» նկատմամբ<sup>12</sup>:

Ղժվար է ասել, թե զինվորագրության հարցն արդյոք անհրաժեշտ էր արևախել, ինչպես դա եղավ 1877–1878 թթ. պատերազմի ժամանակ, թե Իթթիհաթը, որին «ոյժ կուտար նաև Ղաշնակցութիւնը»<sup>13</sup>, վճռել էր հայերից

---

մայր, ապա երգումի բանակի հրամանատար Մուսա Կունդուխ (Կունդուխով) փաշայի (1818–1889) որդին էր, որը հետագայում անցավ Օսմանյան թուրքիայի կողմը: Կ. Պոլսի մոտ գտնվող Գալաթասարայ կղզու միջնակարգ դպրոցում բակալավրի աստիճան ստանալուց հետո Բեքիր Սամին սովորել է Փարիզի քաղաքական գիտությունների դպրոցում, վարել Պետերբուրգում Օսմանյան կայսրության դեսպանության քարտուղարի, Մալթայում հյուպատոսի, Ամասիայի կառավարչի, Վանի, Տրապիզոնի, Բուրսայի, Հալեպի և Բեյրութի վալիի (նահանգապետ) պաշտոնները: 1920 թ. մայիսի 3-ին նա նշանակվել է քենալական թուրքիայի արտաքին գործերի առաջին նախարար, իսկ 1921 թ. փետրվար – մարտին դեկավարել թուրքական պատվիրակությունը Մոսկվայի և Լոնդոնի բանակցություններում (տես «Մշակ»: Թիֆլիս, 1909 թ. նոյեմբերի 12, հմ. 251, նաև՝ «Бекир Сами-беи» ([https://dic.academic.ru/dic.nsf/dic\\_diplomatic/187/БЕКИР](https://dic.academic.ru/dic.nsf/dic_diplomatic/187/БЕКИР)):

<sup>9</sup> Հ. Երամյան, Նշ. աշխ., էջ 138:

<sup>10</sup> Տես Գ. Յ. Ալիև. Турция в период правления младотурок (1908–1918). М., 1972, с. 154:

<sup>11</sup> Տես Բ. Ա. Գորդևսկий. Силуэты Турции. М., 1972, с. 128:

<sup>12</sup> Տես Վ. Ա. Բայրուրդյան, Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո: Ե., 2008, էջ 196:

<sup>13</sup> Տես Հ. Երամյան, Նշ. աշխ., էջ 153:

ևս զորք կազմել: Այդուհանդերձ, 1910 թ. օգոստոս–սեպտեմբերին գործողության մեջ դրված օրենքի հետ համակերպվեցին ինչպես հայերը, այնպես էլ մահմեդականները:

Սկզբում Վանի հայ զորակոչիկների մի մասին ուղարկեցին Մուշ, իսկ մշեցի հայ նորակոչիկների մի մասն իր զինվորական ծառայությունն անցավ Վանում<sup>14</sup>:



Օսմանյան բանակի հայ սպաներ, 1915 (Ցեղասպանության թանգարան)

Աննկարագրելի էր Վանի հայության ոգևորությունը հայ զինվորների նկատմամբ, որոնք 600–700 հոգով մահմեդականների հետ ծառայում էին Վանի զորամասում: 1911 թ. Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ տրամադրված արձակուրդներին նրանք խումբ-խումբ այցելում էին Վանի եկեղեցիները և ապա հյուրասիրվում ժողովրդական հանգանակությամբ պատրաստված ճոխ սեղաններից<sup>15</sup>: Բացի այդ, 1911 թ. հունվարի 1-ին քաղաքի Հիսուսյան վարժարանում ի պատիվ հայ զինվորների կազմակերպվեց տոնական հանդես<sup>16</sup>:

Շատ շուտով պարզվեց, որ Վանի հայերը ոչ միայն ձեռներեց առևտրականներ ու բազմաշնորհ արհեստավորներ են, այլև քաջ են և հմուտ զինական արվեստում<sup>17</sup>: Վանի հայ զինվորականները և, մասնավորապես, թնդանոթածիզները քաջությամբ և հավատարմությամբ կռվեցին թուրք-իտալական և Բալկանյան պատերազմների ճակատներում՝ արժանանալով իրենց թուրք հրամանատարների, մասնավորապես, Վանի զինվորական հրամանատար Ճապիրի և ռազմական նախարար Նազիմ փաշայի բարձր գնահատանքին<sup>18</sup>:

Սակայն հայերի զինծառայության հարցը հետագայում ձեռք էր բերում ավելի ու ավելի սուր բնույթ: Քիչ չէին դեպքերը, երբ հայ զինվորները, դժգոհ լինելով թուրք հրամանատարության խտրական վերաբերմունքից, հրաժարվում էին թուրքական բանակում ծառայելուց և դառնում դասալիք: Այսպես.

վանեցի զինվորների մի մասը, որն իր բանակային ծառայությունն անցնում էր Մուշի զորանոցում, փախչում է Վան: Հայ զինվորները գանգատվում էին իրենց նկատմամբ թուրք զինվորների ու ենթասպաների անարգալից վերաբերմունքից և ծեծից: Հայ զինվորներին հաճախ կոչում էին «գյավուր», «քյաֆեր» և վիրավորում նրանց ազգային ու կրոնական զգացմունքները:

Թուրք ենթասպաները հաճախ տարբերակում էին դնում հայ և թուրք

<sup>14</sup> Տես «Մշակ», 1910 թ. նոյեմբերի 3, հմ. 244:

<sup>15</sup> Տես Հ. Երամեան, Նշ. աշխ., էջ 153–154:

<sup>16</sup> Տես «Մշակ», 1911 թ. հունվարի 26, հմ. 16:

<sup>17</sup> Տես Գ. Միրմէնեան, Նշ. աշխ., էջ 11–12:

<sup>18</sup> Տես Հ. Երամեան, Նշ. աշխ., էջ 153:

զինվորների միջև և հայերին պարտավորեցնում ծառայել ավելի ծանր պայմաններում<sup>19</sup>: Այսպես. Աղբակի բոլոր գյուղերի հայ ծնողները նամակներ էին ստացել Բաղդադ–Բասրայի շրջան ուղարկված իրենց զավակ զինվորներից, որոնք դառնորեն գանգատվում էին թուրք զինվորականների անբարյացակամ վերաբերմունքից, իրենց ֆիզիկական աննախանձելի վիճակից և անտանելի պայմաններից<sup>20</sup>:



Օսմանյան բանակի զինաթափված հայ զինվորները աշխատանքային գումարտակում, 1915  
(Ցեղասպանության թանգարան)

Զինապարտության հետ էր կապված նաև մեկ այլ արատավոր երևույթ: Լինում էին դեպքեր, երբ տղամարդկանց զինվորական ծառայության ժամանակ առևանգվում և կրոնափոխ էին արվում հայ ու ասորի զինվորների կանայք: 1912 թ. այդպիսի դեպքեր էին արձանագրվել Աղբակ գավառում և Սղերդի շրջակա գյուղերում: Այդ մասին Հ. Երամյանը նշում է. «Վանին մինչև Պոլիս մեզ համբոյրներ շռայլելով հանդերձ, կը շարունակէր քաջալերել հայ զիւղերու աւերը և հայ զինուորներու ընտանեկան պատուոյն դէմ գործուած բռնութիւնները»<sup>21</sup>:

Սույն բռնությունները հատկապես տարածված էին Վանի Աղբակ գավառում, որի կառավարիչ Ջևդեթը իր քաղաքավարի վարքով «միամիտ» եվրոպացիներին ներկայանում էր որպես «ճենթլմեն», սակայն հայերի կյանքի և պատվի պաշտպանությունն անգամ համարում էր հանցանք: Որպես նշված պնդումների ապացույց՝ բերենք Հասպորդուն և Խալիլուն գյուղերի հայ կանանց առևանգման և մահմեդականացման օրինակներ: Ան-

<sup>19</sup> Տես «Մշակ», 1911 թ. հունվարի 26, հմ. 16:

<sup>20</sup> Տես «Ազատամարտ»: Կ. Պոլիս, 1912 թ. մայիսի 9, հմ. 891:

<sup>21</sup> Հ. Երամյան, Նշ. աշխ., էջ 155:

հետևանք են մնում գյուղի առաջնորդների բոլոր տեսակի բողոքները: Միայն Կ. Պոլսի Ազգային պատրիարքարանի միջամտությունից հետո առևանգված հայ կանանցից մեկին՝ Փիրոյին, թեև Սղերդ են վերադարձնում, սակայն թույլ չեն տալիս իր ընտանիք վերադառնալ<sup>22</sup>:

Նման դեպք է գրանցվում նաև 1913 թ. փետրվարի 6-ին Արճեշի Գոկըն գյուղում, երբ Ռեսուլ աղայի որդին՝ Ջեյնալը, առևանգում է 13-ամյա աղջնակ Սևգյուլին, որին 15 օր պահելուց հետո կառավարական ատյանի միջոցով կրոնափոխ է անում՝ հակառակ Վանի Հայոց առաջնորդական փոխանորդի բողոքի, որում փաստարկվում էր աղջկա անչափահաս լինելու հանգամանքը<sup>23</sup>: 1913 թ. փետրվարին Արճեշի և Բերկրիի գավառներում առևանգվում են ևս երկու հայ աղջիկներ, որոնց կրոնափոխության վերաբերյալ կառավարական ատյանում հայտարարություն է տրվում<sup>24</sup>:

Նման դեպքերը սաստիկ դժգոհություն են առաջ բերում Վանի հայ զինվորականության շրջանում: Նրանցից 300 հոգի, հավաքվելով Արարքի վարժարանում, իրենց զայրույթն են արտահայտում, «որ մինչ իրանք զինուորական պարտականությունը կատարում են և ծառայում հայրենիքին, իրանց պատիւը յանձնելով կառավարութեան պաշտպանութեանը, քիւրդերը անպատիժ կերպով խաղում են իրանց պատուի հետ ու յափշտակում են իրանց կանանցը»<sup>25</sup>:

Ձավեշտալին այն է, որ կառավարությունը շրջաբերական գրություններով պատվիրում էր, որ բնակչությունը պատերազմի դաշտում գտնվող զինվորների ընտանիքներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերի՝ մասնակցելով նրանց լքված արտերի մշակմանը, բերքահավաքին և պետությանը բերքի հանձնմանը, բայց լռում էր, երբ հայ զինվորների ընտանիքները թալանվում և անարգվում էին:

Այս ամենը վառ կերպով ցուցադրում է, թե ինչ շահեցին հայերը զինապարտությունից: Հետագայում շատերը, այդ թվում՝ տվյալ օրենքի ջատագով Արմենակ Մաքսապետյանը, պետք է դպրոցում արտոնագրվեր որպես ուսուցիչ՝ զինվորական ծառայությունից խուսափելու համար, իսկ Հ. Երամյանի հանդիմանությանը նա պիտի պատասխաներ. «Ես չգիտի թե .... անխտրականութեան աչքով չպիտի նայուի հայ զինուորներուն»<sup>26</sup>:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ զինապարտության մասին օրենքի ընդունումը երիտթուրքերի հրեշավոր ծրագրի մաս էր: Սույն օրենքը և 1914 թ. ընդունված դրա փոփոխակը Թուրքիայի հայ բնակչության ճակատագրի համար անդառնալի հետևանքներ ունեցան առաջին աշխարհամարտի տարիներին: 1915 թ. փետրվարի 12-ից իրագործվում էր Վանի

<sup>22</sup> Տես «Մշակ», 1913 թ. փետրվարի 8, հմ. 30:

<sup>23</sup> Տես նույն տեղում, 1913 թ. փետրվարի 19, հմ. 38:

<sup>24</sup> Տես նույն տեղում, 1913 թ. մարտի 10, հմ. 53:

<sup>25</sup> Տես նույն տեղում, 1912 թ. սեպտեմբերի 23, հմ. 210:

<sup>26</sup> Տես Հ. Երամեան, Նշ. աշխ., էջ 152:

նահանգի հայ զինվորների ու ժանդարմների զանգվածային զինաթափումը, նրանք ազգային-կրոնական նվաստացման ենթարկվելուց հետո օգտագործվեցին որպես զրաստներ, ապա զանազան պատրվակներով հեռացվեցին Վանի նահանգից և որպես «թնդանոթի միս» ոչնչացվեցին Կարինի ու Պարսկաստանի ռազմաճակատներում: Հայ զինվորականության նկատմամբ կատարված անհատական ու խմբային ռճրագործությունները գնալով ծավալվեցին և համատարած բնույթ ստացան Օսմանյան կայսրության մյուս հայաշատ անկյուններում՝ վերածվելով Մեծ եղեռնի:

## ВОЕННАЯ ИСТОРИЯ

### ПРИМЕНЕНИЕ ЗАКОНА ТУРЦИИ 1909 ГОДА О ВОИНСКОЙ ПОВИННОСТИ НЕМУСУЛЬМАН НА ПРИМЕРЕ АРМЯНСТВА ВАНСКОЙ ПРОВИНЦИИ

*А. А. АРУТЮНЯН, кандидат исторических наук,  
профессор кафедры истории Армении АГПУ*

#### РЕЗЮМЕ

Партия младотурок «Единение и прогресс» сразу же после подавления просултанских контрреволюционных выступлений в Стамбуле в апреле 1909 г. приняла ряд законов с целью недопущения народных восстаний, путем привлечения на свою сторону политических элит национальных меньшинств, представляющих значительную часть населения империи, концентрации власти в своих руках и «османизации» населения империи. В рамках этой политики в июле 1909 года был принят и закон о воинской повинности немусульман, согласно которому впервые в истории Османской империи подлежали призыву немусульмане в возрасте 20 – 40 лет, в том числе и армяне. Благодаря этому они получали право служить в османской армии и носить оружие. В августе-сентябре 1910 г. указанный закон вступил в силу, сохранив при этом систему «воинского выкупа», т. е. внесения определенной суммы вместо действительной службы в армии. Однако на самом деле очень часто армян, заплативших «выкуп», вновь призывали в армию и вновь заставляли платить.

Данная порочная система особенно ярко проявилась в Ванской провинции, хотя армяне этого вилайета восторженно приняли новый закон.

В армии армяне служили не только в тяжелых климатических условиях, но и подвергались дискриминации, унижениям и оскорблениям национально-конфессионального достоинства со стороны турецкого командования всех уровней. Их семьи остались беззащитными



перед бандитскими налетами разбойничьих шаек турок и курдов, не только грабивших их имущество, но и нередко похищавших женщин и девушек.

Данный закон и принятая в 1914 г. его модификация имели необратимые последствия для судьбы армянского населения Турции в годы Первой мировой войны. С 12 февраля 1915 года началось массовое разоружение армянских солдат и жандармов в Ванской провинции, после чего они были вывезены из Ванской провинции и уничтожены как «пушечное мясо» на фронтах Карина и Ирана. Индивидуальные и групповые зверства, совершенные против армянских военнослужащих турецкой армии, приобрели массовый характер и в других армянонаселенных провинциях Османской империи, а затем переросли в Великий геноцид армян.

## MILITARY HISTORY

### APPLICATION OF TURKEY'S 1909 LAW ON CONSCRIPTION OF THE NON-MUSLIM POPULATION ON THE EXAMPLE OF THE ARMENIANS OF THE VAN PROVINCE

*A. H. HARUTYUNYAN, PhD in History, Professor,  
Chair, History of Armenia, ASPU*

#### SUMMARY

Right after suppressing the pro-Sultan counter-revolutionary actions in Istanbul in April 1909, the Young Turk Party “Unity and Progress” adopted a number of laws aimed at the prevention of popular uprisings by attracting to their side the political elites of national minorities, who represented a significant part of the population of the empire, by concentrating the power in their hands, and “Ottomanization” of the population of the empire. In July 1909, in the frameworks of that policy, a law on the conscription of the non-Muslim population was adopted, whereby for the first time in the history of the Ottoman Empire the non-Muslim people aged from 20 to 40, including the Armenians, were subject to military service. Owing to this, they were entitled to serve in the Ottoman army and bear arms. In August-September 1910, the above-mentioned law came into force, with the system of “the military service compensation” – i.e., paying certain amount of money to be exempt from the active duty in the army – being meanwhile preserved. However, in fact very often the Armenians, having paid the “compensation”, were again conscripted into the army and made to pay once again.

This perverse system was especially practiced in the Van province,

although the Armenians of this vilayet welcomed the new law with enthusiasm.

The Armenians served in the army not only in harsh climatic conditions, but were also subjected to discrimination, humiliation and insults to their national and confessional dignity by the Turkish command of all levels. Their families were left exposed to danger from the bandit raids carried out by predatory gangs of Turks and Kurds, who not only robbed their property, but also often abducted women and girls.

Said law and its modification adopted in 1914 had irreversible consequences for the fate of the Armenian population of Turkey during the World War 1. On February 12, 1915, the mass disarmament of Armenian soldiers and gendarmes began in the Van province, after which they were driven away of the Van province and annihilated as “cannon fodder” on the fronts of Karin and Iran. Individual and group atrocities committed against the Armenian servicemen of the Turkish army became widespread in other Armenian-populated provinces of the Ottoman Empire, afterwards escalating into the Great Armenian Genocide.

ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԻՑ ԲԽՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, ավագ լեյտենանտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի  
Գիտահրատարակչական կենտրոնի պատասխանատու քարտուղար,  
Դ. Ս. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի  
Գիտահրատարակչական կենտրոնի պետ, «Հայկական բանակ» ՌԳՀ  
գլխավոր խմբագիր



Ներկայումս, երբ առանձնակի թափ են ստացել ազգային յուրահատկությունները տարրալուծող համընդհանրացման գործընթացները, երբ տեղի է ունենում «համամարդկային քաղաքակրթությամբ» ազգային տարածքի, ազգային կացութածևի ու կենսածևի, ազգային մշակույթի ինտենսիվ կլանում, որպես միակ տարբերակիչ տարր մնացել

է ազգային լեզուն: Այն մնացել է որպես ազգային ինքնության պահպանման միակ նեցուկը, ազգի՝ որպես մարդկային տեսակի միակ պատվարը<sup>1</sup>:

Հայ ականավոր բանասեր ակադեմիկոս Ս. Աբրահամյանը գրում է. «Ծնունդով մեզ հասակակից կամ նույնիսկ ավելի ուշ ժամանակներում երևան եկած ու մեզնից ուժեղ ժողովուրդները վերացել են պատմական թատերաբեմից կա՛մ ֆիզիկապես, կա՛մ, ավելի հաճախ, ձուլվել են օտարին՝ վերանալով որպես ինքնուրույն ժողովուրդ: Զուլվել են, քանզի չեն պահպանել, չեն պաշտպանել իրենց լեզուն, չեն գիտակցել, որ լեզվի կորուստը ազգի կորուստն է»<sup>2</sup>:

Լեզվի պահպանման կարևորությունը գիտակցվել է դեռ վաղ շրջանում: Խորենացին իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ գրում է. «Նրանից (Խոսրովից.– հեղ.) հետո Հազկերտը իր Շապուհ որդուն թագավորեցրեց հայոց վրա այսպիսի չար դիտավորությամբ, որ նախարարները դրանով նրա մոտ լինելով՝ նրան կընտելանան **խոսակցությամբ** (ընդգծումը մերն է.– հեղ.), առնել-տալով, խնջույքներով, որսի զբոսանքներով, այլև խնամությամբ նոր ազգականություններով կմոտենան, և գուցե հնար լինի նրանց սայթաքեցնել դեպի մազդեզական կրոնը, որով բոլորովին կանջատվեն հույներից»<sup>3</sup>: Ի

<sup>1</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես Դ. Ս. Զիլինգարյան, Ազգը, ազգային ինքնությունը և լեզուն՝ որպես հոգևոր անվտանգության առանցքային օբյեկտներ. եռալեզու պաշտպանական-անվտանգային բառարանը՝ որպես լեզվի բնագավառում համատեղայնացման օրինակ: «ՀԲ», 2018, հմ. 3:

<sup>2</sup> Սերգեյ Աբրահամյան, Մեր լեզուն և մեր դպրոցը: Ե., 2001, էջ 7:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն: Թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի: Ե., 1961, էջ 328:

դեպ, սա հենց այն է, ինչն այսօր ամերիկացիները, իբրև նորույթ կամ հայտնագործություն ներկայացնելով, անվանում են «փափուկ ուժ»:

Սակայն հիմա (գուցե և հայության դեմ հենց այդ «փափուկ ուժի» կիրառման շրջանակներում) հայոց լեզուն ենթարկվում է ըստ էության կործանարար «բռնաճնշումների», որոնք անխնա ու դաժան կերպով նրա դեմ «ձեռնարկում» են հայ մարդիկ՝ գուցե իրենց կիսագրագիտության պատճառով, գուցե՝ օտարի թելադրանքով: Եթե առաջներում բանասիրական հետազոտությունները, լեզվական գրաքննությունը ծառայում էին հայոց լեզվի բնականոն ու խելամիտ զարգացմանը, նրա անաղարտության պահպանման վեհ նպատակներին, ապա այսօր դրանք, ցավոք սրտի, երբեմն ուղղված են անձնական շահերի առաջնդմանը: Ընդամին «լեզվի զարգացման» պատրվակով լեզվական սխալները վերածվում են համընդհանուր կանոնի՝ տեղ զբաղեցնելով դասագրքերում, տարաբնույթ վերլուծություններում, բառարաններում և ուղեցույցներում, Լեզվի կոմիտեի որոշ «հորդորակներում»<sup>4</sup>:

Իհարկե ոչ ոք զերծ չէ լեզվական սխալներից: Սակայն այդ սխալներն իրենց վտանգավորությամբ լինում են տարբեր աստիճանի: Կան սխալներ, որոնք *լեզվի համակարգն* ընդունում է առանց լուրջ փոփոխություններ կրելու՝, սակայն լինում են սխալներ, որոնք ցնցում են լեզվամտածողությունը, խաթարում լեզվի բնականոն զարգացումը: Ստորև բերվող դատողությունները վերաբերում են երկրորդ տեսակին:

Ոմանք այս սխալները փորձում են «արդարացնել» այն բանով, թե լեզուն «կենդանի օրգանիզմ» է, որը զարգանում է իր ուրույն եղանակով ու ճանապարհով՝ անհատների կամքից դուրս: Ըստ նրանց՝ լեզուն մշտապես զարգացել է և զարգանում է, ուստի այս փոփոխությունները միանգամայն բնականոն են: Ոմանք էլ համակերպվում և ընդունում են դրանք՝ առաջնորդվելով այն մոտեցմամբ, թե «ճիշտն այն է, ինչ գործածում է մեծամասնությունը, ինչ գործածվում է գրավոր ու պաշտոնական լեզվում»:

Անշուշտ, դա, ընդհանուր առմամբ, այդպես է: Դա «ավանդապաշտական մոտեցում» է, որը ծագում է գրավոր ու բարձր խավի լեզվի նկատմամբ հնում եղած հարգանքից: Սակայն առաջներում «լեզվի զարգացման համար պատասխանատուները», այսինքն՝ «գրագետ ու գրավոր խոսքի վարպետները», սակավաթիվ էին և շնորհիվ իրենց գրագիտության ու լեզվագագացողության թույլ չէին տալիս, որ կյանք մտնեն ու տարածվեն այն սխալները, որոնք կարող էին սպառնալ լեզվահամակարգի հիմքին ու հենասյուներին: Խորհրդային շրջանում, երբ գրագիտությունը դարձավ համատարած, կային հատուկ հաստատություններ, որոնք ապահովում էին այս պահանջի կատարումը (Լեզվի ինստիտուտ, Մինիստրների սովետին առընթեր տերմինաբանական կոմիտե, «գլավլիտ» և այլն):

<sup>4</sup> Տես, օրինակ, Դ. Ս. Չիլինգարյան, Մոլորություն, թե՞ մոլորեցում. արծագանք Լեզվի կոմիտեի որոշմանը: «ՀԲ», 2019, հմ. 2:

\* Որպես նման սխալի օրինակ հիշատակենք Մխիթարյանների «ստեղծած» *շագանակ* բառը:

Իսկ ի՞նչ ենք մենք տեսնում այսօր: Մարդկանց մի զգալի մասը տառապում է բառեր ստեղծելու ու բառարաններ գրելու մոլուցքով: Առանց բավարար գիտելիք ունենալու, առանց լուրջ կերպով տվյալ հասկացությունն ուսումնասիրելու նրանք «գրչի մի շեշտակի հարվածով» նոր բառեր են ստեղծում, որպեսզի հայոց լեզուն «գերծ մնա օտարաբանություններից»<sup>4</sup>: Մինչդեռ մեկ դար առաջ հանձարեղ Հովհաննես Թումանյանն ասել է, որ նման «թարգմանություններն» ավելի մեծ վնաս են հասցնում մեր լեզվին, քան օտարաբանությունները<sup>5</sup>: Բանն այն է, որ դրանք ոչ միայն լեզուն աղտոտում են կեղծ «հայերենակերպ» արտահայտություններով, այլև վարակում են լեզվամտածողությունը, ինչը վերջիվերջո անդրադառնում է նաև ազգային ինքնության վրա՝ աղավաղելով այն, զրկելով *ազգային* էությունից: Հիշենք, թեկուզ, բնության այն հիմնարար օրենքը, որ ոչ մի համակարգ չի կարող անվերջ զարգանալ միայն ի հաշիվ իր էներգիայի՝ առանց դրսից էներգիա ստանալու: Լեզվի համար այդ էներգիան են օտար բառերը: Սակայն դրանք, ինչպես շեշտում է «Ամենայն հայոց բանաստեղծը», պետք է հարմարեցվեն լեզվին և ոչ մի դեպքում բառաշարքից դուրս չմղեն հայերեն բառերը: Սա ազգի համար իր լեզվի բնութագրականության սկզբունքն է:

Այստեղ, կարծում ենք, տեղին է մեջբերել Վիլհելմ ֆոն Հումբոլդտի այն միտքը, թե ժողովրդի հոգևոր ինքնատիպությունն ու լեզվի կառուցվածքը միմյանց հետ այնքան սերտ են փոխկապված, որ քանի գոյություն ունի մեկը, մյուսն անվերապահորեն պետք է բխի դրանից: Եվ իսկապես. մտավոր գործունեությունն ու լեզուն թույլ են տալիս և կյանքի են կոչում միայն այնպիսի ձևեր, որոնք բավարարում են նրանց պահանջներին: Լեզուն կարծես ժողովուրդների ոգու արտաքին դրսևորումն է. ժողովրդի լեզուն հենց նրա ոգին է, իսկ ժողովրդի ոգին նրա լեզուն է, ու դժվար է պատկերացնել ուրիշ որևէ բան, որը լիներ ավելի նույնական: Թե ինչպես է լինում, որ դրանք միաձուլվում են՝ դառնալով մեկ միասնական և անըմբռնելի աղբյուր, մեզ համար մնում է հանելուկ: Այդուհանդերձ, չփորձելով որոշել մեկի կամ մյուսի գերակայությունը՝ մենք պետք է ժողովրդի հոգևոր ուժի մեջ տեսնենք լեզուների տարբերության իրական վճռորոշ սկզբունքն ու իրական վճռորոշ հիմքը, քանի որ ժողովրդի հոգևոր ուժը, որից կախված է լեզուն, ամենակենսունակ ու ամենահինքունուրոյն ակունքն է<sup>6</sup>:

Եվ եթե լեզուն ժողովրդի հոգևոր-մտածողական յուրահատկության արտաքին դրսևորումն է, ապա այն պետք է միշտ համահունչ լինի նրա հոգե-

<sup>4</sup> Բառակազմության հիմնական սկզբունքների հստակ ու համակարգված ներկայացումը տես Հ. Բարսեղյան, Հայերենի բառաքերականական հարստությունը. ազգայինն ու միջազգայինը նրա տերմինագործության մեջ: «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Ե., 2006, էջ 24–25:

<sup>5</sup> Տես Հովհաննես Թումանյան, Լեզվական փոխառություններ: «Երկերի ժողովածու», հ. 4: Ե., 1969, էջ 374–375:

<sup>6</sup> Տես *W. von Humboldt. Über die Verschiedenheit des menschlichen Sprachbaus und seinen Einfluss auf die geistige Entwicklung des Menschengeschlechts.* Bonn, 1968, PP. 30–35 (<https://archive.org/details/berdieverschied00humbgoog/page/n21/mode/2up>):

կերտվածքին: Ուստի պարզորոշելով այդ հոգեկերտվածքի կազմակերպման տրամաբանությունը, հնարավոր է նաև ազդել լեզվի վրա՝ ուղղորդելով նրա զարգացումը: Չէ՞ որ մենք խոսում ենք լեզվի վրա *բացասական ազդեցության* դեմ պայքարի մասին: Ուրեմն, ըստ էության, չի կարող բացառվել նաև *դրական ազդեցությունը*:

Եվ այսպես. թյուր է այն կարծիքը, թե հնարավոր չէ վերահսկել և ուղղորդել լեզվի զարգացման ընթացքը: Դա հերքում է մեր ոչ վաղ անցյալի պրակտիկան: Օրինակ՝ 1950-ական թվականներին համատարած կերպով գործածվում էին «պալտո», «գալստուկ», «տուֆլի», «կալբաս», «սասիսկի», «պերածկի», «խալադեմիկ» և այլ նմանատիպ «բառեր» (այն էլ՝ գերազանցապես ոչ որպես ռուսերենից պատճենում, այլ աղավաղված ձևով): Սակայն խելամիտ և նպատակաուղղված պետական քաղաքականության շնորհիվ այս «բառերը» գործածությունից գրեթե իսպառ վերացել են՝ իրենց «տեղը զիջելով» հայերեն համարժեքներին:

Խելամիտ և նպատակաուղղված քաղաքականություն ասելով մենք նկատի ունենք այն պարտադրական միասնական քաղաքականությունը, որն իրագործում էին պետական մարմինները, զանգվածային լրատվության միջոցները, կրթական և առևտրական կազմակերպությունները: Հայերեն բառերը հնչում էին ամենուրեք, և հետզհետե քմծիծաղ էր առաջացնում այն «գրագետը», որ խանութում խնդրում էր «մի կիլո սասիսկի» կամ մի «պալտո» ու «խալադեմիկ»: Հենց հասարակական կարծիքը, որը մեծապես ձևավորվում էր այդ քաղաքականության ազդեցությամբ, հաղթեց և որոշ ժամանակով ապահովեց հայոց լեզվի անաղարտությունը:

Այսօր նման քաղաքականություն չկա: Երբ Հ. Թումանյանը մտահոգվում էր հայոց լեզվի անմխիթար վիճակով ու մոտակա վախճանով<sup>7</sup>, ասպարեզում գործում էին ինքը, Րաֆֆին, Մուրացանը, Շիրվանզադեն, Նար-Ղոսը, Ա. Իսահակյանը, Հ. Հովհաննիսյանը, Ս. Շահագիզը, Վ. Տերյանը և շատ ու շատ ուրիշ «նրբամիտ ու բարձրաձաշակ» գրողներ ու բանաստեղծներ, հայոց լեզվի ուսումնասիրություններով 20-րդ դարում զբաղվում էին Հ. Աճառյանը, Ս. Մալխասյանցը, Ս. Աբեղյանը, Գ. Ղափանցյանը, Գ. Սևակը, Ա. Ղարիբյանը և ուրիշներ: Իսկ ու՞մ ձեռքում է այսօր լեզվի «ղեկը»:

Այսօր ցանկացած քաղաքացի, եթե ունի տպագրության ծախսերը հոգալու հնարավորություն, կարող է հրատարակել իր «գլուխգործոցը»: Անգամ այսօրվա առաջատար մասնագետները տուրք են տալիս սխալների «հասարակական հնչողությանը»:

Բառարանագրությանը վերաբերող հարցը ներկայացնենք պաշտպանական ոլորտում նման «աշխատություններ» կազմելու փորձերով, մասնավորապես՝ «Ռազմական տերմինների անգլերեն–ռուսերեն–հայերեն բառարան»-ի և «Ռազմագիտական տերմինների բառարան-տեղեկագիրք»-ի օրի-

<sup>7</sup> Տես *Հովհաննես Թումանյան*, Հայատառ թուրքերենը: «Երկերի ժողովածու», հ. 4: Ե., 1969:

նակներով<sup>\*</sup>: Բառարանների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու թարգմանական, բովանդակային և տեխնիկական բնույթի սխալներ, վրիպումներ: Նշենք, որ հենց վերնագրում «ռազմական տերմիններ» արտահայտությունը սխալ է: Պետք է լինի «ռազմագիտական տերմիններ», կամ «ռազմական ոլորտի տերմիններ»:

Երկու բառարանների հեղինակներն էլ չեն ներկայացրել օգտագործված գրականության ցանկը, ընդամին երկրորդ բառարանի առաջաբանում անգամ նշված է, թե հեղինակը *չի օգտվել որևէ աղբյուրից*, ինչը պարզապես անհնար է:

Առաջին բառարանի դեպքում հասկանալի չէ բառացանկի ընտրության սկզբունքը. Այն, ըստ էության, չի համապատասխանում բառարանի վերնագրին և հայտարարված նպատակին, քանի որ զգալի թիվ են կազմում և՛ ընդհանուր տեխնիկական բնույթի, և՛ երկրորդական արժեք ներկայացնող տերմինները (ցինկի հիմքով համահալվածք, դառը նուշ, *հարձակման անկյուն*, բարձրություն *վերցնելու* անկյուն և այլն): Միևնույն ժամանակ, մեծաթիվ են ծովագնացությանն առնչվող տերմինները, ինչը, բառարանի ընդհանուր ծավալի սահմանափակության հաշվառմամբ, թվում է անթույլատրելի շռայլություն: **Անհասկանալի է որոշ տերմինների առնչությունը ռազմագիտության հետ** (աղազտիչ կայանք (опреспительная установка) և այլն):

Որպես ընդհանրացված սխալների բնութագրական նմուշներ յուրաքանչյուր կարգախմբի համար բերենք մեկ-երկու օրինակ:

**Թարգմանական բնույթի թերություններ.**

1. տերմինների թարգմանությունում կան էական անճշտություններ:

ա) Maneuver—маневр; маневрировать; учения—մանևր, մանևրում, զինավարժություն: Մինչդեռ հայերեն համարժեքներում գործածված են նաև «տարաշարժային», «տարաշարժուն» և այլ համարժեքներ («տարաշարժային պատերազմ», «տարաշարժուն բրիգադ» և այլն): Բացի այդ, ռուսերենում «маневры»-ն ոչ թե «զինավարժությունն» է, այլ «գորախաղը», ռուսերեն «маневрировать» բայի հայերեն համարժեքը նշված չէ (հայերեն բայ չկա, ի դեպ, անգլերեն տերմինը ևս չունի բայի իմաստ),

բ) «training», «preparation», «drill» – «подготовка», «готовность» անգլերեն և ռուսերեն տերմինների դիմաց տրված է միևնույն «պատրաստություն»-ը:

2. Նորմավորված հայերեն տերմինի փոխարեն իբրև գլխաբառ տրված է օտար լեզվով հայատառ տերմինը. օրինակ՝ «Ադմինիստրատիվ», «Ազենտուրային», «Կապի կանալ», «Ռազմական պոտենցիալ», «Ռազմական ռեֆորմ» և այլն:

3. Թարգմանությունը հաճախ սխալ է՝ կա՛մ տրամաբանական, կա՛մ լեզվաբանական, կա՛մ կիրառական առումով: Օրինակ. «Маневр» տեր-

<sup>\*</sup> Բառարանները քննվել են համապատասխանաբար ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի՝ ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված գրության և ըստ ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ վարչություններից մեկի պետի գրության:

մինի համար տրված է «զորաշարժ» համարժեքը, մինչդեռ մի շարք այլ բառահոդվածներում գործածվել են ոչ հայերեն «մանր» (օրինակ՝ «Ունի արկերի նետման հետագծերի մանրման լայն հնարավորություններ (ի դեպ, նախադասությունն ինքն էլ հասկանալի չէ), «մանրայնություն», «մանրել» տերմինները: Մինչդեռ բառարանում բերված «զորաշարժ» տերմինը համարժեք չէ «մանր»-ին, քանի որ չի արտահայտում դրանով կազմված բոլոր բաղադրյալ տերմինների իմաստները, օրինակ՝ «маневр огнем»-ը չի կարող թարգմանվել «կրակով զորաշարժ» և այլն, երբ կիրառելի է «տարաշարժ» տերմինը:

«Оповещение» - «Ազդարարում». բառահոդվածից պարզ է դառնում, որ խոսքը «իրազեկման» մասին է:

4. Տերմինը մեկ ունի թարգմանված համարժեք, մեկ չունի, կամ թարգմանված տերմինի բնօրինակը մեկ ռուսերեն է, մեկ ֆրանսերեն, մեկ լատիներեն. «Զինադադար (перемирие)», «Արագընթաց պատերազմ», «Ատաշե (ֆրանս. Attache - ամրացված, կցված)», «Ավիացիա (լատ. Avis - թռչուն, ֆրանս. aviation)», «Ազդանշաններ (ռուս. сигнал, լատ. signum - նշան)»: Գլխաբառի հոմանիշ տերմինը երբեմն նշվում է գլխաբառի կողքին՝ փակագծերում, երբեմն՝ բառահոդվածի վերջում, չկա հստակեցում, թե դրանցից յուրաքանչյուրը կիրառության ո՞ր դեպքի համար է. «Ապատեղեկատվություն (դեզինֆորմացիա)», «Առաջին էշելոն (զորաշարվածք)», «Ավիացիայի բազավորում (հենակայում)», «Ազրեսիա – ռազմանվաճում», «Ականջադրում - գաղտնալսում»:
5. Բառահոդվածներում գործածվել են հայերեն համարժեք ունեցող ոչ հայերեն բառեր, որոնք հայերենում գոյություն չունեն («Կազմակերպումը ներառում է՝ պլանավորումը, կապի զորքերին խնդիրների առաջադրումը, ծավալման և ֆունկցավորման (ընդգծումը մերն է.– հեղ.) գործընթացների ղեկավարումը»):

#### **Բովանդակային սխալներ.**

1. Երկու բառարաններում էլ գործածված են բառաձևեր, որոնք չեն համապատասխանում հայերենի նորմավորված ձևերին կամ իմաստազուրկ են (օրինակ՝ «փոխգործակցություն» (գործակցություն կամ փոխգործողություն, փոխգործություն բառերի փոխարեն), «մանյովր», «կազմակերպչական» (կազմակերպականի փոխարեն) և այլն):

2. Ռազմագիտական (և ընդհանրապես՝ գիտական) տերմինաբանության տեսակետից թերություն է թարգմանական հոմանիշների կիրառությունը: Այսպես, առաջին բառարանում կան՝ «abruption – ... Պոկում, խզում, կտրում, հատում», կամ՝ «attack – հարձակման գոտի, հարձակողական գործողությունների շրջան, թիրախի շրջան, թիրախի վրա դուրս գալու գոտի» (ընդամին վերջին երկու թարգմանությունները հայերեն չեն): Մյուս բառարանում՝ «Ռադիոլոգիական (ռադիոգիտական) զենք», «Թիկունքի կառուցվածք (շարվածք), ժամկետային զինվորական ծառայություն (իսկական ժամկետային զինվորական ծառայություն)» և այլն:

3. Հաճախ գլխաբառը լինում է հոգնակի թվով, այն դեպքում, երբ բա-



նարանակազմության ամենապարզ կանոններից է եզակիի գործածությունը (եթե հոգնակիի դեպքում իմաստը չի փոխվում)։ «Ազդանշաններ (ռուս. сиг-налы, լատ. signum – նշան)» – իսկ եզակի թվով այսպիսի գլխաբառ չկա։

4. Բառարան-տեղեկագրքում կան բազմաթիվ լեզվական սխալներ, անհասկանալի արտահայտություններ, ոչ հայերեն ձևակերպումներ («խորքային մարտը *դա* գործողության ամբողջ խորությամբ հրետանու և ավիացիայի աջակցությամբ հակառակորդի մարտավարական պաշտպանության միաժամանակյա ճնշումն ու արագ տեմպերով դրա ճեղքումն է»)...., «Փորձով հաստատվել է, որ խմբային նշանակետի ճնշման կարելի է հասնել նրա ենթատարրերի կամ մակերեսի 25-30 % -ը խոցելու արդյունքում»։

Ըստ նշված թերությունների որակական նշանակության և թվաքանակի հաշվառման՝ պարզ է դառնում, որ քննվող բառարանները չեն համապատասխանում իրենց նախանշանակմանը։ Ավելին. վտանգ են ներկայացնում, քանի որ գործերում տարածման դեպքում, ըստ էության, հայերենի ռազմագիտական տերմինաբանության մեջ կնորմավորվեն սխալներ։

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ նման փորձերը զարմանալի կերպով հաճախ ենթարկվում են «գիտական» քննադատության, որի մակարդակը ամենևին էլ այդ «աշխատությունների» մակարդակից բարձր չէ։ Ընդամին դրանք «հենվում» են լուրջ տեսական հիմքերի վրա, թեև, փաստորեն, անգրագիտության դրսևորում են։

Օրինակ՝ հայերենում կա «ուշադրություն» բառը, որը նշանակում է՝ վիճակ, հոգատարություն, զգուշավորություն, ուշադրությունը կենտրոնացնելու հրաման<sup>8</sup>։ Այսինքն՝ այս բոլոր իմաստները, որոնք համապատասխանում են ռուսերեն *внимание* բառին, չունեն հատկության (*внимательность*) իմաստ։ Ռուսերեն «внимательность» բառի դիմաց Ա. Դարիբյանը տալիս է՝ «1. ուշադրություն, 2. ուշադիր (հոգատար) վերաբերմունք»<sup>9</sup>։ Ինչպես տեսնում ենք, ոչ բացատրական, ոչ թարգմանական բառարանները չեն տալիս *внимательность* բառի հայերեն համարժեքը, որը նշանակել *հատկություն*։ Սակայն և՛ պաշտպանական ոլորտում, և՛ կրթության ասպարեզում սա շատ կարևոր, անգամ անհրաժեշտ հատկություն է։ Ընդամին «ուշադիր լինելը» ևս չի արտահայտում բնորոշ հատկության իմաստ, քանի որ իրավիճակային է։ Հաշվի առնելով, որ հայերենում վերջածանցներում «ի»-ի սղման կանոնը (ինչպես և բոլոր լեզվական կանոնները) կատարման համար չունի բացարձակ պարտադրականություն (վտիտ – վտիտություն, մատիտ – մատիտակալ, անբասիր – անբասիրություն և այլն), մենք առաջարկել ենք «ուշադիրություն» բառը<sup>10</sup>։ Սակայն որոշ «մասնագետներ», որոնք օժտված են ոչ թե ստեղծագործական կարողությունով, այլ կաղապարված մտածողությամբ,

<sup>8</sup> Տես «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (այսուհետև՝ «ԺՀԲԲ»), հ. 4: Ե., 1980, էջ 602:

<sup>9</sup> *А. Гарибян. Русско-армянский словарь. Е., 1976, с. 93:*

<sup>10</sup> Տես *Ղ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 604:

«քննադատել»<sup>11</sup> են մեզ՝ հայտարարելով, թե մենք «չգիտենք հայերենի ամենապարզ կանոններից մեկը»՝ «ի»-ի սղման կանոնը: Մինչդեռ մենք, ըստ լեզուներում ընդունված զուգորդության սկզբունքի, առաջնորդվել ենք, մասնավորապես, «ուղղություն» – «ուղիղություն» նախադեպով<sup>12</sup>: Իսկ նման «քննադատներին» խորհուրդ կտայինք չդառնալ Դանինգ-Քրյուզերի էֆեկտին զոհ, որի հեղինակները նշում են, թե «մարդիկ ձգտում են իրենց մասին ունենալու չափից դուրս բարձր և ոչ ճիշտ կարծիք: Մեր սույն քննարկման թեման այն մարդիկ են, որոնք, որևէ տիրույթում ունենալով սահմանափակ գիտելիք, տառապում են երկակի բեռից. նրանք ոչ միայն հանգում են թյուր եզրակացությունների և կատարում ցավալի սխալներ, որոնց համար պետք է զղջալ, այլև իրենց անիրագրելիության պատճառով զրկվում են այդ ամենը գիտակցելու կարողությունից»<sup>13</sup>:

Կարող է թվալ, թե նշված «աշխատությունները» չեն կարող էական դեր խաղալ լեզվի աղավաղման գործում: Սակայն դա այդպես չէ, քանի որ դրանցով զրավոր խոսքում ամրագրվում են լեզվի սխալ ու վտանգավոր նորմերը՝ բարձրացնելով անգրագիտության աստիճանը: Այս առումով առավել վտանգավոր են հեղինակավոր մասնագետների աշխատությունները, առաջին հերթին՝ «ուղեցույցները»: Այդ կարգախմբի գրականությունը հաճախ գործում է իր ստեղծման նպատակին միանգամայն հակառակ ազդեցություն: Այս տեսակետից հատկանշական է Երևանի պետական համալսարանի «Ուղեցույց հայոց լեզվի» պրակը, որը լույս է տեսել 2017 թ.<sup>14</sup>: Սույն աշխատության նպատակն է «լեզվակիրառողին ուղղորդելու լեզվական այնպիսի իրողությունների գործածությունում, որոնք՝ տարակարծությունների առիթ են տալիս, տարբեր աղբյուրներում տարբեր կերպ են մեկնաբանվում և ներկայացվում»<sup>15</sup>:

Գերազանց նպատակ, և կարծում ենք, յուրաքանչյուր հայ պետք է ուշի-ուշով ուսումնասիրի և անգիր անի այս գիրքը:

Սակայն «3.1.1. Գոյական անուն. գոյականի թիվը» բաժնում հանդիպում ենք «անգղ–եր//–ներ», «աստղանիշ–ներ//–եր», «արկղ–եր//–ներ» և այլ տարբերակների: Ինքնին հարց է ծագում, թե կա արդյոք այլ տարբերակ ևս, որը խրախուսելի չէ: Նման տարբերակ դժվար է մոգոնել, ուստի՝ ինչպես է ուղղորդում այս «ուղեցույց»-ը, եթե հանձնարարում է օգտագործել երկու հնարավոր ձևերն էլ: Բացի այդ, կասկած են հարուցում «արկղեր–արկղներ»,

<sup>11</sup> Տես «ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի կազմավորման 25 ամյակին նվիրված «Ռազմական համալսարանի գիտական և ուսումնական գործընթացում 25 տարվա նվաճումներ և զարգացման հեռանկարները» խորագրով դասախոսական 16-րդ գիտական կոնֆերանսը», 2019 թ. դեկտեմբերի 23–24:

<sup>12</sup> Տես «ԺՀԼԲԲ», հ. 4, էջ 590, 594–595:

<sup>13</sup> Justin Kruger and David Dunning. Unskilled and Unaware of It: How Difficulties in Recognizing One's Own Incompetence Lead to Inflated Self-Assessments. "Journal of Personality and Social Psychology", 1999, Vol. 77, N 6.

<sup>14</sup> Տես ԵՊՀ Հրատարակչություն, Ուղեցույց հայոց լեզվի: Ե., 2017:

<sup>15</sup> Տես նույն տեղում, էջ 4–5:

«գամփոռներ–գամփոռներ» զուգաձևությունները, երբ կան «աստղ–աստղեր», «վագր–վագրեր» ձևերը: Տարակուսանք է առաջացնում նաև «բթամատ–բթամատեր» զույգը, թեև դրա վերջնամասի հոգնակին–ներ-ով է (մատ–մատներ):

Ոչ պակաս անհասկանալի և անտրամաբանական է թվում խնդրառական զուգաձևությունների «ուղեցուցումը». «դավաճանել–հայրենիքին//հայրենիքը»<sup>16</sup>, «կարոտել–տունը//տանը», «հնարավորություն ունենալ–տեղեկանալու//տեղեկանալ» և այլն: Ընդսմին «բավարարել պահանջը» և «բավարարել պահանջին» արտահայտությունները բերված են որպես զուգաձևություններ, մինչդեռ դրանք արտահայտում են միանգամայն տարբեր իմաստներ: Բավարարվենք այսքանով, թեև սխալներ կան նաև առաջարկվող թարգմանություններում (անգամ խոսքի մասերի մակարդակով, օրինակ՝ գոյականի դիմաց – բայ, և հակառակը)<sup>17</sup>: Ի դեպ, «կոնֆլիկտ»-ի դիմաց առաջարկվում է «Տարածայնություն, անհամաձայնություն, բախում»<sup>18</sup>, մինչդեռ արդեն 30-տարի է, ինչ «Карабахский конфликт» արտահայտությունը հայերեն թարգմանվում է «Ղարաբաղյան հակամարտություն»:

Եվ զարմանալին այն է, որ տեսական մասը շարադրված է ճշգրիտ և ամփոփիչ ձևով, իսկ ահա գործնական մասում կան բազմաթիվ անճշտություններ, ինչը էապես նվազեցնում է աշխատության արժեքը, անգամ հակասում հեղինակների հայտարարած նպատակին, քանի որ, ըստ էության, ոչ միայն ոչ մի զուգաձևության հարց չի ստացել լուծում, այլև գրանցում են ստացել տարաբնույթ սխալներ:

Կարծում ենք, որ այս սխալները հայ բանասիրության մեջ տարիներ շարունակ գերիշխող ձևապաշտական մոտեցման արդյունք են, քանի որ շեշտը դրվում է ոչ թե իմաստի, այլ ձևի վրա: Ղրա վառ ապացույցն է թեկուզ այն փաստը, որ մի զգալի թվով բանասերներ կողմ էին սեռական և տրական հոլովների միավորմանը, թեև դրանք ունեն միայն ձևի նմանություն, իսկ բովանդակությամբ (իմաստով) միանգամայն տարբեր են:

Այժմ մի քանի նորաստեղծ բառերի մասին:

*Չեղարկել.* այս բառը եկել է փոխարինելու «չեղյալ հայտարարել» բառակապակցությանը: Այն կազմված է, ըստ երևույթին, «չ» ժխտական նախածանցից և «եղարկել» անհայտ բառամասից: Ժխտական նախածանցը. «1. Գործածվելով բայերի հետ<sup>19</sup>.....»: Երկրորդ մասը մեզ չհաջողվեց հայտնաբերել որևէ բառարանում (այդ թվում՝ գրաբարի կամ միջին հայերենի): Ուստի մնում է առեղծված, թե «չ»-ն ինչի հետ է գործածվել: «Չեղյալ» բառը ճիշտ է կազմված, քանի որ գրաբարում գոյություն է ունեցել «եղյալ» բայը: Մինչդեռ «եղարկել» բառ չկա և ըստ ամենայնի չի էլ կարող լինել:

<sup>16</sup> Տես, օրինակ, «ԺՀԼԲԲ», հ. 1, «Դավաճանել» բառահոդվածի բոլոր օրինակները:

<sup>17</sup> Տես Յու. Ս. Ավետիսյան, Լ. Գ. Թեյյան, Լ. Ս. Սարգսյան, Լ. Վ. Ավետիսյան, Նշ. աշխ., էջ 206–207:

<sup>18</sup> Տես նույն տեղում, էջ 96:

<sup>19</sup> Տես «ԺՀԼԲԲ», հ. 4, էջ 123:

*Փոխգործակցություն.* այս անհեթեթ բառի ծագումը կարելի է բացատրել միայն ամեն բառի վրա մի «փոխ» նախածանց դնելու մոլուցքով, ինչպես ունենք «փոխգիշում» (հաճախ՝ «գիշում»-ի փոխարեն), «փոխհամագործակցություն» (իսկ կարող է մեկը մյուսի հետ համագործակցել, երբ վերջինս սրա հետ չի համագործակցում), «փոխկապակցել» (այս բառը արծանագրված է Է. Աղայանի բառարանում և «ԺՀԼԲԲ»-ում, մինչդեռ Ստ. Մալխասյանցն ու Հ. Բարսեղյանը իրենց բառարաններում այն չեն նշում, իսկ առաջին 2-ում տրված բացատրությունները համոզիչ չեն, քանի որ «կապակցել» բառն արդեն ունի այդ իմաստը): Հարկ է նշել, որ երկու բացատրական և Հ. Բարսեղյանի բառարաններում «փոխգործել», «փոխգործություն» բառեր չկան, այլ կա «փոխգործողություն» (չունի բայական ձև), սակայն կարծում ենք, որ «փոխգործել» ու «փոխգործություն» բառերը ևս ունեն գոյության իրավունք:

*«Հավաքագրել».* այս բառը համատարած կերպով գործածվում է «հավաքել» բառի փոխարեն՝ «հավաքագրել տեղեկություններ», «հավաքագրել տվյալներ» և այլն: Մինչդեռ այն ունի հետևյալ իմաստը՝ «1. Շատերին վարձել, վարձելով հավաքել մի բանի համար: 2. *փխք.* Կողմնակիցներ գտնել, գրավել, ներգրավել: 3. *փխք.* Համալրել, կազմը ուժեղացնել: 4. *փխք.* Համախմբել, միավորել»<sup>20</sup>: Ինչպես տեսնում ենք, «հավաքագրել» բառը վերաբերում է միմիայն մարդկանց, ուստի չի կարելի «հավաքագրել տեղեկություններ» և այլն...:

*«Արտահանձնել».* այս «նորաբանությունն» ըստ էության ևս հակասում է հայերենի լեզվամտածողությանը, քանի որ հակառակը միանգամայն անիմաստ է՝ հնարավոր չէ «ներհանձնել»: «Էքստրադիցիա» նշանակում է իրավական գործողություն, երբ մի պետություն հանձնում է մյուսին (նրա պահանջով) հանցագործություն կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի, կամ դատապարտված հանցագործի<sup>21</sup>: Ինչ-որ կերպ փոխանցում է արդյոք տվյալ բառը այս իմաստներից որևէ մեկը: Ո՛չ, պարզապես անհեթեթ բառակազմություն, որը եկել է փոխարինելու նախկինում գործածված «հանձնում» տերմինին:

Ավարտելով մեր կարծիքով հայոց լեզվին համակարգայնորեն սպառնացող սխալների համառոտ վերլուծությունը՝ փորձենք երկու խոսք հատկացնել մի պրոբլեմի, որը, կարծում ենք, պետք է գրավի հայ բանասերների ուշադրությունը: Դա աշխարհագրական (այդ թվում՝ պետական կազմավորումների) անվանումներին վերաբերող հարցն է, ինչպես նշեցինք, բաղադրյալ անունների կազմման սկզբունքի որոշման խնդիրն է: Մինչ այսօր այս ասպարեզում տիրում է խառնաշփոթ: Այսպես՝ պետությունների և մարզերի անվանումներում հատկացուցիչը գործածվում է սեռական հոլովով

<sup>20</sup> Տես Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1: Ե., 1976, էջ 835:

<sup>21</sup> Տես, օրինակ, «Что такое экстрадиция? Разъясняет аппарат прокуратуры Свердловской области», 07.05.2018 ([http://midural.ru/normative\\_documents/100615/100629/page7/document130634/](http://midural.ru/normative_documents/100615/100629/page7/document130634/)):

(Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ), քաղաքների դեպքում՝ ուղիղ ձևով (Երևան քաղաք, Վանաձոր քաղաք), լճերի ու ծովերի դեպքում՝ խառը (Սևանի լիճ (Սևանա լիճ), Կարայի ծով, Կապուտան լիճ, Սև ծով), փողոցների և հրապարակների դեպքում՝ խառը (բայց համակարգված՝ ըստ յան և այլ վերջավորությունների), գետերինը՝ ուղիղ ձևով, և այլն: Այդ պրոբլեմի չլուծվածությունը կարող է խարխլել լեզվահամակարգի հիմնասյուներից մեկը՝ սեռական հոլովի իմաստը, ընդսմին, փաստորեն, շոշափում է սեռա-տեսակային հարաբերությունների փիլիսոփայական հարցը:

Կարծում ենք, որ տվյալ պրոբլեմը պետք է քննարկվի լայն շրջանով՝ ինչպես բանասերների, այնպես էլ լեզվաբանների (հնդեվրոպական լեզուների մասնագետների) և փիլիսոփաների ներգրավմամբ: Քանի որ ավելի շատ լեզվամտածողության հարց է, քան պարզապես խնդրառության, կարծում ենք, որ ճիշտ կլիներ այս հարցը քննել հենց սեռա-տեսակային հարաբերությունների համատեքստում՝ որպես հարացույց ընտրելով սեռականի կիրառական իմաստը: Մենք կողմ ենք ինչպես մարզերի, այնպես էլ պետությունների անվանումներում ածականների օգտագործմանը՝ Հայկական Հանրապետություն, Ռուսաստանյան Դաշնություն, Ֆրանսիական Հանրապետություն, բայց՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Թագավորություն, Իսրայել Պետություն:

Հուսով ենք, որ մեր նկատառումները հաշվի կառնվեն «Ուղեցույցը» հետագա հրատարակումների պատրաստելու ժամանակ:

Ամփոփելով այս համեստ ուսումնասիրությունը՝ ուզում ենք շեշտել այն հանգամանքը, որ ամենևին էլ չենք հավակնում եղած *լուրջ հետազոտությունների* քննադատությանը կամ առաջարկված լուծումների՝ որպես բարձրագույն ճշմարտության ներկայացմանը: Մենք միայն ցանկացել ենք մեր մասնագետների ուշադրությունը հրավիրել հայոց լեզվի ներկայիս տագնապալի վիճակի վրա և նրանց կոչ անել իրենց աշխատություններում լինելու ավելի խստապահանջ և շրջահայաց:

## ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

### О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ, СВЯЗАННЫХ С НЫНЕШНИМ СОСТОЯНИЕМ АРМЯНСКОГО ЯЗЫКА

*А. А. ХАЧАТРЯН, старший лейтенант, ответственный секретарь  
ВНЖ «Айкакан банак»;*

*Д. С. ЧИЛИНГАРЯН, полковник запаса, Начальник Научно-издательского центра  
НИУО МО РА – главный редактор ВНЖ «Айкакан банак»*

#### РЕЗЮМЕ

В настоящее время распространение глобализационных процессов привело к нивелированию этно-национальных различий в сфере культуры, жизненного уклада, исчезновению обособленности этниче-

ских ареалов, что ставит под угрозу сохранение национальной идентичности (самости) народов. В этих условиях особое значение приобретает национальный язык как практически единственный гарант сохранения духовной самобытности нации. Однако и языки испытывают сильное давление со стороны «глобальных» языков, в первую очередь – английского.

Гипертрофированное стремление отдельных индивидуумов к самовыражению и утверждению собственной «самоценности» приводит к многочисленным языковым ошибкам, значительная часть которых вызывает нарушения логической системы языкового мышления, чреватого потерей данным языком своей самобытности, обусловленной духовным обликом данной нации.

В современном армянском языке создалась тревожная ситуация, когда многие глобальные вопросы языкового мышления оставлены на самотек, а борьба с ошибками практически сводится к исправлению незначительных ляпсусов, по сути не угрожающих системным основам конструкции армянского языка. Часть же системных ошибок нашла «пропуску» во многих современных словарях, руководствах и даже учебниках армянского языка.

В статье рассматриваются и некоторые проблемы современного словотворчества, осуществляемого без учета логики армянского языка.

## MILITARY TERMINOLOGY

### ON SOME ISSUES RELATED TO THE PRESENT STATE OF THE ARMENIAN LANGUAGE

*A. A. KHACHATRYAN, Senior Lieutenant, Executive Secretary,  
«Haikakan Banak» DAJ;*

*D. S. CHILINGARYAN, Colonel (Ret.), Head, Academic-Publishing Center,  
NDRU, MOD, RA – Editor-in-Chief, «Haikakan Banak» DAJ*

#### SUMMARY

At present, the spread of globalization processes has led to the leveling of ethno-national differences in the cultural sphere, way of life, to the vanishment of the distinction of ethnic milia, which threatens the preservation of the national identity of peoples. Under these conditions, the national language, as virtually the only guarantor of the preservation of the spiritual distinctiveness of nations, takes on special significance. However, languages also experience strong pressure from the “global” languages, primarily that of the English.

The exaggerated urge of separate individuals to express themselves and assert their own “self-importance” leads to numerous language errors, significant part of which bring to violations of the logical system of linguistic thinking, fraught with the given language losing its originality, which is stipulated by the spiritual make-up of this nation.

An alarming situation has arisen in the modern Armenian language, when many global issues of linguistic thinking are left on their own, and combating errors is practically reduced to the correction of insignificant lapses that, in fact, do not threaten the systemic bases of the construction of the Armenian language. Part of the systemic errors has been granted a “residence permit” in many modern dictionaries, manuals, and even textbooks of the Armenian language.

The article also deals with some problems of modern coining of new words, carried out without taking into account the logic of the Armenian language.

## ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստագործի գնդապետ,  
Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ավագ լեյտենանտ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,  
Թ. Դ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ, ավագ լեյտենանտ, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,  
Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր

## ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

- ալեհավար – приемная антенна –  
receiving antenna
- վազող ալիքի ալեհավար – антенна  
бегущей волны – long wire receiving  
antenna, traveling wave antenna
- ալեցիր – передающая антенна –  
transmitting antenna
- բացվածքային ալեցիր – апертур-  
ная антенна – aperture antenna
- միկրոալիքային ալեցիր – микровол-  
новая антенна – microwave antenna
- անարգանք – оскорбление – dishonour
- անհակադարձելի խափանում – необ-  
ратимый отказ – irreversible failure
- անհարգանք – неуважение – disres-  
pect
- բառաստեղծություն – словотворче-  
ство – word creation, word coining
- բառարանագրություն – лексикогра-  
фия, составление словарей – lexi-  
cography, dictionary-making
- բացություն – открытость – openness
- գերմանրաչափ ռոբոտ – субминиат-  
юрный робот – subminiature ro-  
bot
- գերունակություն – суперъёмкость –  
supercapacity
- գլանաձևային պատյան – якорный ци-  
линдр – armature cylinder
- գործընթաց – процесс – process
- քաղաքական գործընթաց – полити-  
ческий процесс – political process
- երկչափ նյութ – двумерный матери-  
ал – two-dimensional material
- երկու պետությունների փոխգործու-  
թյուն – взаимодействие двух госу-  
дарств – interaction of two states
- զգայարար – сенсор – sensor
- զենք – оружие – weapon
- ԳԲՀ զենք – տես *զենք՝ միկրոալի-  
քային զենք*
- գերբարձր հաճախականային զենք  
– տես *զենք՝ միկրոալիքային զենք*
- միկրոալիքային զենք – микровол-  
новое оружие, сверхвысокочастот-  
ное оружие, СВЧ-оружие – micro-  
wave weapon, superhigh-frequency  
weapon
- ոչ մահաբեր զենք – нелетальное  
оружие, несмертельное оружие –  
non-lethal weapon
- ուղղորդված էներգիայի զենք – ору-  
жие направленной энергии – di-  
rected-energy weapon
- ընդունիչ ուղեսարքվածք – приемный  
тракт – receive path
- Թուրքիա – Ադրբեջան երկյակ – тандем  
Турция – Азербайджан – Turkey –  
Azerbaijan tandem
- ինքնաթիռի թևերի հաջորդաշար – тан-  
дем крыльев самолета – wing tan-  
dem
- լազեր – лазер – laser, light amplification  
by stimulated emission of radiation
- լարման փոխակերպիչ – преобразо-  
ватель напряжения – voltage  
source decoder
- լիցքակիր – носитель заряда – charge



carrier  
 «խելացի» նյութ – «умный» материал  
 – smart material  
 խոսափող – рупор – megaphone  
 խոսափողաձև խողովակ – рупор –  
 funnelform tube  
 խտանյութ – концентрат – concen-  
 trate  
 կապակցում – 1. связывание, 2. при-  
 вязка – 1. connection, 2. coupling  
 կեղծ ունակություն – псевдоемкость  
 – pseudocapacity  
 կենսընթաց – биологический процесс  
 – biological process  
 հակադարձելի խանգարում – обрати-  
 мый сбой – reversible hindrance  
 հաճախականություն – частота – fre-  
 quency  
 հաճախություն – частотность – fre-  
 quency, recurrence  
 համառանցք կոնդենստորային մարտ-  
 կոց – коаксиальная конденсаторная  
 батарея – coaxial capacitor bank  
 հիշողությամբ օժտված նյութ – мате-  
 риал с памятью – material with  
 memory  
 հյուպատոսություն – консульство –  
 consulate  
 – գլխավոր հյուպատոսություն – гене-  
 ральное консульство – consulate  
 general  
 – պատվավոր հյուպատոսություն –  
 почетное консульство – honorary  
 consulate  
 հոսքի սեղման գեներատոր – гене-  
 ратор сжатия потока – flux com-  
 pression generator  
 մակածություն – индукция – induction  
 նանոչափ – наноразмер – nanosize  
 նյութի հետ էլեկտրամագնիսական  
 ճառագայթման փոխազդեցություն  
 – взаимодействие электромаг-  
 нитного излучения с веществом

– interaction of electromagnetic  
 radiation with substance  
 պրոցես – процесс – process  
 – կենսաբանական պրոցես – տես  
*կենսընթաց*  
 – քիմիական պրոցես – химический  
 процесс – chemical process  
 – ֆիզիկական պրոցես – физический  
 процесс – physical process  
 ռազմագիտական տերմին – военный  
 термин – military term  
 սահմանագծում – демаркация грани-  
 цы – boundary demarcation  
 սահմանի քարտեզագրում – делими-  
 тация границы – boundary delimi-  
 tation  
 սահմնկեցուցիչ արարք – омерзи-  
 тельный поступок – loathsome  
 offense  
 սնուցման ներսարված աղբյուր –  
 встроенный источник питания –  
 built-in power supply, built-in power  
 source  
 վերահամակցումային հոսանք – ре-  
 комбинированный ток – recombi-  
 nation current  
 վերլուծիչ – анализатор – analyzer  
 վերունակություն – сверхъемкость –  
 ultracapacity  
 վիրավորանք – տես *անարգանք*  
 վիրտուալ կաթոդով տատանակ – ос-  
 циллятор с виртуальным като-  
 дом – virtual-cathode oscillator  
 տատանագիր – осциллограмма –  
 oscillogramme  
 տեղեկույթի սորակորուստ – утечка  
 информации – information leakage  
 տվիչ – датчик – detector, sensor  
 ուղեցույց – предписание – guidance  
 փոփոխակ – модификация – modi-  
 fication  
 փուլավորված ալեցիրային վանդակ –  
 фазированная антенная решетка –

phased-array antenna  
փուլավորված ալեցիրային ցանց – տես  
*փուլավորված ալեցիրային վանդակ*  
քաղաքականության հակազդականու-  
թյուն – политика противодействия  
– reactive policy

Քրդստանի Շրջանային Կառավարու-  
թյուն – Региональное Правительство  
Курдистана – Kurdistan Regional  
Government  
օսմանացում – оттоманизация – otto-  
manization

ՈՌՄԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

анализатор – վերլուծիչ  
антенна – 1. ալեհավաք, 2. ալեցիր  
– апертурная антенна – բացված-  
քային ալեցիր  
– микроволновая антенна – միկրո-  
ալիքային ալեցիր  
– передающая антенна – ալեցիր  
– приемная антенна – ալեհավաք  
– приемная антенна бегущей волны  
– վազող ալիքի ալեհավաք  
взаимодействие – 1. փոխազդեցու-  
թյուն, 2. փոխգործություն  
– взаимодействие двух государств –  
երկու պետությունների փոխգործու-  
թյուն  
– взаимодействие электромагнитно-  
го излучения с веществом – նյութի  
հետ էլեկտրամագնիսական ճառա-  
գայթման փոխազդեցություն  
военный термин – ռազմագիտական  
տերմին  
встроенный источник питания –  
սնուցման ներսարված աղբյուր  
генератор сжатия потока – հոսքի  
սեղմման գեներատոր  
граница – սահման  
– делимитация границы – սահմանի  
քարտեզագրում  
– демаркация границы – սահմանա-  
գծում  
датчик – սլիչ  
двумерный материал – երկչափ նյութ  
индукция – մակածություն  
коаксиальная конденсаторная ба-

тарей – համառանցք կոնդենսատոր-  
ային մարտկոց  
консульство – հյուպատոսություն  
– генеральное консульство – գլխա-  
վոր հյուպատոսություն  
– почетное консульство – պատվա-  
վոր հյուպատոսություն  
концентрат – խտանյութ  
лазер – լազեր  
лексикография – բառարանագրու-  
թյուն  
материал с памятью – հիշողությամբ  
օժտված նյութ  
модификация – փոփոխակ  
наноразмер – նանոչափ  
необратимый отказ – անհակադար-  
ձելի խափանում  
неуважение – անհարգանք  
носитель заряда – լիցքակիր  
обратимый сбой – հակադարձելի  
խանգարում  
омерзительный поступок – սահմռկե-  
ցուցիչ արարք  
оружие – զենք  
– микроволновое оружие – միկրոա-  
լիքային զենք, գերբարձր հաճախա-  
կանային զենք, զԲՀ զենք  
– нелетальное оружие – ոչ մահաբեր  
զենք  
– не смертельное оружие – սմ. *ору-  
жие – нелетальное оружие*  
– оружие направленной энергии –  
ուղղորդված էներգիայի զենք  
– сверхвысокочастотное оружие –

см. *оружие – микроволновое оружие*  
 – СВЧ-оружие – см. *оружие – микроволновое оружие*  
 оскорбление – անարգանք, վիրավորանք  
 осциллограмма – տատանագիր  
 осциллятор с виртуальным катодом – վիրտուալ կաթոդով տատանակ  
 открытость – բացություն  
 оттоманизация – օսմանացում  
 политика противодействия – քաղաքականության հակազդականություն  
 предписание – ուղեցույց  
 преобразователь напряжения – լարման փոխակերպիչ  
 привязка – կապակցում  
 приемный тракт – ընդունիչ ուղեաւորվածք  
 процесс – 1. պրոցես, 2. գործընթաց  
 – биологический процесс – կենսընթաց, կենսաբանական պրոցես  
 – политический процесс – քաղաքական գործընթաց  
 – физический процесс – ֆիզիկական պրոցես  
 – химический процесс – քիմիական պրոցես  
 псевдоемкость – կեղծ ունակություն  
 Региональное Правительство Курдистана – Քրդստանի Շրջանային Կա-

ռավարություն  
 рекомбинированный ток – վերահամակցումային հոսանք  
 рупор – 1. խոսափող, 2. խոսափողաձև խողովակ  
 сверхъёмкость – վերունակություն  
 связывание – կապակցում  
 сенсор – զգայարար  
 словотворчество – բառաստեղծություն  
 составление словарей – см. *лексикография*  
 субминиатюрный робот – գերմանրաչափ ռոբոտ  
 суперъёмкость – գերունակություն  
 тандем – 1. հաջորդաշար, 2. երկյակ  
 – тандем крыльев самолета – ինքնաթիռի թևերի հաջորդաշար  
 – тандем Турция – Азербайджан – Թուրքիա – Ադրբեջան երկյակ  
 «умный» материал – «խելացի» նյութ  
 утечка информации – տեղեկույթի սորակորուստ  
 фазированная антенная решетка – փուլավորված ալեցիրային վանդակ, փուլավորված ալեցիրային ցանց  
 частота – հաճախականություն  
 частотность – հաճախություն  
 якорный цилиндр – գլանաձևային պատյան

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

analyzer – վերլուծիչ  
 antenna – 1. ալեհավաք, 2. ալեցիր  
 – aperture antenna – բացվածքային ալեցիր  
 – long wire receiving antenna – վազող ալիքի ալեհավաք  
 – microwave antenna – միկրոալիքային ալեցիր  
 – receiving antenna – ալեհավաք

– transmitting antenna – ալեցիր  
 – traveling wave antenna – see *antenna – long wire receiving antenna*  
 armature cylinder – գլանաձևային պատյան  
 boundary – սահման  
 – boundary delimitation – սահմանի քարտեզագրում  
 – boundary demarcation – սահմանա-

- գծում  
 built-in power source – see *built-in power supply*  
 built-in power supply – սնուցման ներսարված աղբյուր  
 charge carrier – լիցքակիր  
 coaxial capacitor bank – համառանցք կոնդենսատորային մարտկոց  
 concentrate – խտանյութ  
 connection – կապակցում  
 consulate – հյուպատոսություն  
 – consulate general – գլխավոր հյուպատոսություն  
 – honorary consulate – պատվավոր հյուպատոսություն  
 coupling – կապակցում  
 detector – տվիչ  
 dictionary-making – see *lexicography*  
 dishonour – անարգանք, վիրավորանք  
 disrespect – անհարգանք  
 flux compression generator – հոսքի սեղմման գեներատոր  
 frequency – 1. հաճախականություն, 2. հաճախություն  
 funnellform tube – խոսափողաձև խողովակ  
 guidance – ուղեցույց  
 induction – մակածություն  
 information leakage – տեղեկույթի սրակորուստ  
 interaction – 1. փոխազդեցություն, 2. փոխգործություն  
 – interaction of electromagnetic radiation with substance – նյութի հետ էլեկտրամագնիսական ճառագայթման փոխազդեցություն  
 – interaction of two states – երկու պետությունների փոխգործություն  
 irreversible failure – անհակադարձելի խափանում  
 Kurdistan Regional Government – Բրդստանի Շրջանային Կառավարություն  
 laser – լազեր  
 lexicography – բառարանագրություն  
 light amplification by stimulated emission of radiation – see *laser*  
 loathsome offense – սահմնկեցուցիչ արարք  
 material with memory – հիշողությամբ օժտված նյութ  
 megaphone – խոսափող  
 military term – ռազմագիտական տերմին  
 modification – փոփոխակ  
 nanosize – նանոչափ  
 openness – բացություն  
 oscillogramme – տատանագիր  
 ottomanization – օսմանացում  
 phased-array antenna – փուլավորված ալեցիրային վանդակ, փուլավորված ալեցիրային ցանց  
 process – 1. պրոցես, 2. գործընթաց  
 – biological process – կենսընթաց, կենսաբանական պրոցես  
 – chemical process – քիմիական պրոցես  
 – physical process – ֆիզիկական պրոցես  
 – political process – քաղաքական գործընթաց  
 pseudocapacity – կեղծ ունակություն  
 reactive policy – քաղաքականության հակազդականություն  
 receive path – ընդունիչ ուղեսարքվածք  
 recombination current – վերահամակցումային հոսանք  
 recurrence – see *frequency 2*  
 reversible hindrance – հակադարձելի խանգարում  
 sensor – 1. զգայարար, 2. see *detector*  
 smart material – «խելացի» նյութ  
 subminiature robot – գերմանրաչափ ռոբոտ

supercapacity – գերունակություն	weapon – զենք
tandem – 1. հաջորդաշար, 2. երկ- յակ	– directed-energy weapon – ուղղորդ- ված էներգիայի զենք
– Turkey–Azerbaijan tandem – Թուր- քիա – Ադրբեջան երկյակ	– microwave weapon – միկրոալի- քային զենք, գերբարձր հաճախա- կանային զենք, ՊԲՀ զենք
– wing tandem – ինքնաթիռի թևերի հաջորդաշար	– non-lethal weapon – ոչ մահաբեր զենք
two-dimensional material – երկչափ նյութ	– superhigh-frequency weapon – see <i>weapon – microwave weapon</i>
ultracapacity – վերունակություն	word – բառ
virtual-cathode oscillator – վիրտուալ կաթոդով տատանակ	– word coining – see <i>word creation</i>
voltage source decoder – լարման փոխակերպիչ	– word creation – բառաստեղծույթ- յուն

## ՈՒՂՈՐԴՎԱԾ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՁԵՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ<sup>\*</sup>

**«Ռատ»** (*«Рать»*՝ «Ղակիշ») լազերային համակարգը, որը մշակվել է ռուսաստանյան «Իստոկ» զիտաարտադրական ձեռնարկությունում, նախանշանակված է ԱԹԱ-ների հայտնաբերման և գատորոշման, գերբարձր հաճախականային ճառագայթմամբ դրանց ռադիոէլեկտրոնային միջոցների ճնշման և խոցող լազերային միջոցներով ոչնչացման համար: Իր կազմում ունի՝ ՍԲԱ-7042 զրահամեքենա, հայտնաբերման ՌՏԿ և օպտիկաէլեկտրոնային շրջագնման-որոնման համակարգ, ուղղորդված ռադիոէլեկտրոնային ճնշման համակարգ, ԱԹԱ-ների ավտոմատացված գատորոշման և դրանց կառավարման հեռահաղորդողիների ճնշման համալիր, ուղղորդված լազերային ոչնչացման համակարգ, մարտական կառավարման կողային միասնական համակարգ, որն ապահովում է տեղեկույթի ինտեգրում, մշակում և արտացոլում: Կարող է մինչև 1 կմ հեռավորությունների վրա հայտնաբերել և ճնշել 2-6 ԳՀց տիրույթում աշխատող հեռահաղորդողիները:

**«Սայլենտ հանտեր»** (*“Silent Hunter”*, «Լուռ որսորդ») հակաօդային պաշտպանության օպտիկամանրաթելքային լազերային համակարգը մշակել է չինական «Փոլի Թեկնոլոգիս» ընկերությունը: Նախատեսված է ցածրաթռիչ ԱԹԱ-ների հայտնաբերման, ուղեկցման և ոչնչացման համար: Ի վիճակի է 5 մմ հաստությամբ պողպատե թերթը ծակելու 800 մ հեռավորության վրա, իսկ 5 հատ 2-մմ պողպատե թանթիկները՝ 1000 մ-ի վրա: Տեղադրվում է 6x6 անվային բանաձևով բեռնատարի վրա կամ անշարժ վիճակում: Նոր նշանակետի հայտնաբերման համար պահանջվում է 6 վրկ՝:

**«ՀԵԼ ԷՄՂԻ»** (*“High Energy Laser Mobile Demonstrator”*, «Մեծ էներգիայի լազերի շարժական ցուցադրիչ») լազերային զենքի շարժական համալիրը, որը արտադրում է ամերիկյան «Բոյինգ» ընկերությունը, նախանշանակված է ուղղորդված էներգիայի (լազերային) կիրառմամբ հրթիռների, հրետանու, ականանետների, ԱԹԱ-ների և թևավոր հրթիռների դեմ պայքարի համար: Համալիրը բաղկացած է հզոր լազերից, էներգաապահովման համակարգից և ռադիոտեղորոշումային կայանից: Լազերային կայանքի ստեղծման համար որպես հիմք ծառայել է 105,5 կՎտ հզորությամբ մոդուլային պինդմարմնային լազերը, որն էներգիա է ստանում 60 կՎտ հզորությամբ դիզելային գեներատորով լիցքավորվող լիթիում-իոնային կուտակիչներից: Նշանակետի հայտնաբերման և ուղեկցման համար օգտագործվում են հեռադիտակ և լայնանկյուն ինֆրակարմիր խցիկ: Ճառագայթը պատվում է 360<sup>0</sup>-ով՝ տեսաժրելով շրջապատող ամբողջ օդային տարածքը:

**«ՍկայԼոկ 3»** (*“SkyLock 3”*, «Երկնափական») համակարգը, որը իսրայելական «Էվնոն գրուպ» ընկերության մշակումն է, նախանշանակված է տարբեր ենթակառուցվածքների հակաօդային պաշտպանության համար: Բաղկացած է հայտնաբերման, ռադիոէլեկտրոնային ճնշման (*softkill*) և ոչնչացման (*hardkill*) համակարգերից: Հայտնաբերման ՌՏԿ-ն կարող է հայտնաբերել օդանավը մինչև 20 կմ, միջին չափի ԱԹԱ-ները՝ 10 կմ և փոքր ԱԹԱ-ները՝ 0,3 – 3,5 կմ հեռավորությունների վրա: Այն կարող է հետևել միաժամանակ 200 նշանակետի՝ 30 Հց հաճախականությամբ թարմացնելով տվյալները (ցուցասարքի էկրանին արտացոլվող պատկերը): Տեսաժրման ազիմուտային անկյունը կազմում է 360<sup>0</sup> (0,3<sup>0</sup> ճշգրտությամբ), ըստ բարձրության՝ 60<sup>0</sup> (1<sup>0</sup> ճշգրտությամբ), այսինքն՝ 3 կմ հեռավորության դեպքում սխալը կազմում է 50 մ: ՌԷՃ-ի համակարգը գործում է ռադիոխանգարումների ստեղծման սկզբունքով: Ընդամենը օպերատորը հնարավորություն ունի խափանելու ԱԹԱ-ի կապն իր կառավարման

<sup>\*</sup> Տես ներդիրում զետեղված համապատասխան պատկերները:

<sup>\*\*</sup> Հիմնական ՄՏԲ-ն տես 129-րդ էջում:

կետի հետ կամ ԱԹԱ-ն վերադարձնելու արձակման վայրը: Ոչնչացման համակարգը հզոր լազեր է, որը կարող է փոքր ԱԹԱ-ն ոչնչացնել 800 մ հեռավորության վրա:

ՈՐՈՇ ՄԱՐՏԱՎԱՐԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻԶՆԵՐԻ  
ՀԱՏԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ

Տեխնիկայի անվանումը	Լազերի հզորությունը, կՎտ	Խոցման հեռավորությունը, մ	Նշանակետի արագությունը (առավ.), մ/վրկ	Նշանակետի տրամագիծը (նվազ.), մմ	Հայտնաբերման հեռավորությունը, մ
Ուատ	30-100	≥ 4000	60	≥ 2000	–
Սայլենտ հանտեր	1,5	2500	~55,6		3500
ՀԵԼ ԷՄԴի	10	–		60	
Սկայնոկ	-	-	-	-	տես տեքստում

**«Սայլենտ գարդիան»** (*“Silent Guardian”*, «Լուռ պահպան») ամերիկյան «Ռեյտոն Թեկնոլոջիս» ընկերության մշակած ուղղորդված էներգիայի (միկրոալիքային) ոչ մահաբեր զինատեսակ է, որը նախանշանակված է որոշակի զոտու արգելափակման, դրա պարագծով անվտանգության ապահովման և ամբոխի վրա ակտիվ ներգործության համար:

Դա 94 ԳՀց հաճախականությամբ էլեկտրամագնիսական ալիքների գեներատոր է: Չենքը համարված է ալեցիրային համակարգով, որն ստեղծում է 2 մ տրամագծով ճառագայթ, որի գործողության արդյունավետ հեռավորությունը 500 մ է: Ընդամին մարդու մաշկի վերին շերտը կլանում է ճառագայթվող էներգիայի 83 %-ը: Ցավի ժամանակային շեմը կազմում է 3 վայրկյան, իսկ 5 վայրկյանից ցավը դառնում է անտանելի:

**«Պանցիր-Ս1»** (*«Панцирь С1»` «Ջրահ»*) համալիրը, որը մշակել է ռուսաստանյան «Կոնստրուկտորսկոյե բյուրո պրիբորոստրոյենիյա» ձեռնարկությունը, գործողության փոքր շառավղով զենիթային հրթիռաթնդանոթային համալիր է: Նախանշանակված է ինքնաթիռներից, ուղղաթիռներից, զերձգրիտ զենքից` թևավոր հրթիռներից, կառավարվող ռումբերից և հեռակառավարվող ապարատներից (ԱԹԱ-ներից), փոքր ռազմական և վարչաարդյունաբերական օբյեկտների հակաօդային պաշտպանության, ինչպես նաև հակառակորդի զանգվածեղ օդային հարվածները հետ մղելու համար: Հակաօդային պաշտպանությունն ապահովվում է ավտոմատ թնդանոթներով և կառավարվող հրթիռներով, որոնց ուղղորդումը կատարվում է նշանակետի ուղեկցման ինֆրակարմիր և ռադիոտեղորոշումային համակարգերով օժտված կայանքի ռադիոհրամանատվությամբ: Համալիրի յուրահատկությունն այն է, որ դրանում համատեղված են նշանակետերի կալման և ուղեկցման բազմուղի համակարգը և նշանակետի ոչնչացման հրթիռաթնդանոթային միջոցները:

ՄԱՐՏԱՎԱՐԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

**Ոնդհանուր**

Սպառազինությունը. համակցված հրթիռաթնդանոթային

Բացազատման ժամանակը. մինչև 5 ր

Արձագանքման ժամանակը. 4–6 վրկ

Մարտալրակազմը. 12 հատ 57Է6-Ե հրթիռ, 1400 արկ

Ջանգվածը. մինչև 30 տ

Անձնակազմը. 4 մարդ

**Ռադիոտեղորոշումային համակարգ**

2 հատ երկտիրույթ եռակողորդինատային ՌՏԿ. 1ՌՍ1-1Ե և 1ՌՍ2

Աշխատանքային տիրույթը. հայտնաբերման կապուղի՝ սմ-նոց, ուղեկցման կապուղի՝ սմ/մմ-նոց

Դիտման ազիմուտը. հայտնաբերման՝  $0^\circ \div 82^\circ$ , ուղեկցման՝  $0^\circ \div 45^\circ$   
(մեխանիկական պտույտի միջոցով՝  $360^\circ$ )

Դիտման տեղի անկյունը. հայտնաբերման՝  $-5^\circ \div +82^\circ$ , ուղեկցման՝  $-5^\circ \div +45^\circ$

Հեռավորությունը (երբ ցրման արդյունավետ մակերեսը 2 մ<sup>2</sup> է).  
հայտնաբերման՝ 36000 մ, ուղեկցման՝ 30000 մ

Օպտիկաէլեկտրոնային համակարգի տեսադաշտը.  $1,8 \times 2,7^\circ$

Բանելակարգը. ավտոմատ/ծեռքի

**Հրթիռային սպառազինություն**

Հրթիռի արագությունը. (առավ.) 1300 մ/վրկ

Նշանակետի արագությունը. (առավ.) 1000 մ/վրկ

Խոցման գոտին.

– ըստ հեռավորության՝ 1200 – 20000 մ,

– ըստ բարձրության՝ 15 – 15000 մ

Միաժամանակ հրթիռակոծվող նշանակետերի թիվը. 4

**Թնդանոթային սպառազինություն**

4 հատ՝ զույգված, զենիթային, ավտոմատ

Տրամաչափը. 30 մմ

Խոցման գոտի.

– ըստ հեռավորության՝ 200 – 4000 մ,

– ըստ բարձրության՝ 0 – 3000 մ

Գումարային արագածությունը. 5000 կրակոց/ր

Փողի գոյունակությունը. > 8000 կրակոց

Ջինամթերքը. զրահահար-հրկիզող



## **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Դոկտորական և քեկնաժուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղափարային պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հասկացումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրատարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more than 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԵԱԿ

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ – գլխավոր խմբագրի տեղակալ՝  
*Ջ. Դ. Ասատրյան*

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*  
Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Զ. Վ. Փիրոյան*  
Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Ա. Ջ. Պետրոսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի*  
Ամփոփումների քարգնանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի,*  
*Դ. Ս. Չիլինգարյանի, Թ. Դ. Չիլինգարյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի,*  
*Լ. Հ. Պապիկյանի, Տ. Մ. Տիրացոյանի*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Սրբագրումը՝ *Ն. Հ. Բաղդասարյանի, Գ. Շ. Հարությունյանի*

Լուսանկարչական ապահովումը՝ *Գ. Վ. Իսկանդարյանի և համացանցային*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25  
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>  
Պաշտոնական բլոգ-կայքը՝ <http://razmavaraget.wordpress.com>  
Էլ. հասցեն՝ [haykakanbanakmod@gmail.com](mailto:haykakanbanakmod@gmail.com)

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի  
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2021 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:

Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր:

Պայմանական տպագրական 10,5 մամուլ:

Տպաքանակը՝ 400: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,

«Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:

Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԼԻՄՈՒՇ» տպարանում


ՄԱՐՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ  
ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՀԱՊԿ-ի անդամ պետությունների Ռազմական համագործակցության  
զարգացման հարցերով ռազմական կոմիտեի  
19-րդ նիստը՝ տեսակապի միջոցով

Աջից ծախ. ՀՀ ՂՈՒ-ի ԳԾ պետ գեներալ-լեյտենանտ *Արտակ Դավթյան*,  
ՀՀ ՂՈՒ-ի ԳԾ վարչությունների պետեր գեներալ-մայորներ  
*Արայիկ Հարությունյան* և *Արմեն Հարությունյան*

Երևան, 2021 թ. դեկտեմբեր



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ